

ISSN 1829-2003

ՎԱՐԴԶԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՏՈՆԱՍԻՐՈՂ ԳԻՄՆԱԳՐԱՍ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK
DUTY OF SOUL

№ 16

2021



Անահիտ Եսայան
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - 60



էջ 1

Սամվել Կարապետյան
**ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**



էջ 5

Էմմա Արրահամյան
ԼԻՃՔՎԱԶԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



էջ 14

Գրիգորիս Եպիսկոպոս Աղվանեանց
**ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ
ԳԱՆՁԱԿՈՒ**



էջ 18

Րաֆֆի Զորթոշյան
**ԼԵՎԻ ԿԻՐԱԿԵՕՐՅԱ ԽԱՓԱՆՎԱԾ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ**



էջ 45

Ֆիլիպ Դանգլը
ՎԵՐԱԳՏԵՎԱԾ ՄԱՂԱՍԲԵՐԴԸ



էջ 47

Էմմա Արրահամյան
**ՏՈՒՄԻ ԳՅՈՒՂԻ ՎՏԱՆԳՎԱԾ
ՊԱՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**



էջ 56



N 16

2021

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

EDITORIAL BOARD

ԷՄՄԱ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

EMMA ABRAHAMIAN

ՐԱՖԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ

RAFFI KORTOSHIAN

ՀԱՄՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՉԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԶՈՐԹՈՇՅԱՆ

Designers

ARMEN GEVORGIAN

LIANA

HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223

Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՐԱՖԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ

Responsible for this issue
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԱՄՅԱՆ 24/4

Baghramian 24/4, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am, raatransfer@yahoo.com

📘 ՀՅՈՒ Հայաստան RAA Armenia

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture

ՄԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - 60



*Ռազմիկ և Ռուսուցիչ՝
զենք և գիր,
սլաշտպանություն և ազգային
կրթություն, մշակույթ՝*

*Մամվել Կարապետյանն
այս կարևորումներով
սպրեց և սպրեցնում է:*

Անահիտ Եսայան

Մամվելի հետ իմ ընկերությունը 2000-ականների սկզբին է սկսվել նախ՝ որպես լրագրող, ապա՝ պետություն և հատկապես քաղաքաշինության նախարարությունում և նույնանուն պետական կոմիտեում աշխատելու ընթացքում, երբ համախոհ լինելուց զատ՝ դարձանք մաս գործընկերներ, ըստ իս, պետություն-հասարակական կազմակերպություն համագործակցության կարևոր ու լավ օրինակներ ունեցանք:

Տարիներ առաջ՝ 2013 թ., «Առավոտ» թերթում և կայքէջում «Մարդ, որ կոչված է» խորագրով հեղինակային շարք էի նախաձեռնել՝ ի սկզբանե այդ կոչված առաջինների մեջ տեսնելով և պատկերացնելով Մամվելին: Ինչ խոսք, այն ժամանակ էլ շատերի համար Մամվելը հայրենապաշտության բացառիկ օրինակ էր իր կյանքով, որն անմնացորդ նվիրաբերեց սիրելի գործին, որի էությունը, միտք բանին մեր չքնաղ հայրենիքը ներկա և ապագա սերունդներին ճանաչելի և սիրելի դարձնելն էր, որից հետո միայն կարելի էր ունենալ հայրենամկեր անձինք և օրինապաշտ քաղաքացիներ: Իսկ այս գործընթացը շրթայական էր, և շրթայի յուրաքանչյուր օղակ պիտի գործեր ճշգրիտ, ինչն ամբողջությամբ այդպես էլ չունեցանք մենք, և ինչի մասին Մամվելը տարիներ ու տասնամյակներ բարձրաձայնում էր: Այս օրերին՝ առավել ևս՝ 44-օրյա պատերազմին հաջորդող ընթացքում, մեր շատ ազգակիցներ, վստահ են, խորապես գիտակցեցին, վերագնահատեցին և հասկացան Մամվել Կարապետյանի կատարած և հետագա տարիների համար էլ հունավորած գործի կարևորությունը:

Մամվելը, բնականաբար, հայրենիքին ու ազգին նվիրյալ անձանց իր նախատիպերն ուներ, իրական կերպարներ, որոնցով ինքն էր սնվել ու ձևավորվել: Այստեղ մա առաջինը Գարեգին Նժդեհի անունն է տալիս: Նրա համոզմամբ՝ Նժդեհը խորհրդանիշ էր՝ ինչպես պիտի ապրել և ինչպես պիտի չապրել: Ըստ իս՝ նրա մտքերը, բանաձևումներն այս համատեքստում որքան կտրուկ-կատեգորիկ, նույնքան ճշգրիտ էին:

«Բոլոր անկախ ազգերը թե՛ կերտում են, թե՛ վայելում: Մենք դեռ, ճիշտն ասած, շատ գործ ունենք կատարելու կերտելու ուղղությամբ, բայց մեր հասարակության մեջ շատերն ուզում են միայն վայելել: Կարծում են՝ մեզնից հետո դեռ երկու սերունդ պիտի իր ուժերն ու միտքը զբաղեցնի անկախությունն ամրապնդելու ուղղությամբ, այլ ոչ թե հայացքը դեպի Եվրոպա հառելով՝ մտածի՝ բա ե՞րբ ենք մենք էլ նրանց պես վայելելու:

Ազգեր կան, որ անկախության կարճ ընթացքի մեջ կարողացել են ավելի լուրջ արդյունքների հասնել՝ նպատակասլաց օգտագործելով իրենց էներգիան և ներուժը:

Պետք է ազգովի մեզ մի լավ թափ տանք և հասկանանք, որ աչքի լույսի պես, երեխայի պես պետք է փայլայենք մեր անկախությունը՝ ջանք չխնայելով այն ամրապնդելու, զարգացնելու համար»:

Այս տողերը մեր՝ 2011 թ. սեպտեմբերի գրույցից է, երբ ունեինք անառիկ սահմաններով Հայաստան: Յավոք, այսօր՝ 10 տարի անց, մեր կորուստներն ահավոր մեծ են, խնդիրներն ու անելիքները՝ ավելին:

«Մեր գրասենյակը զինագործարան է. մենք արկեր ենք արտադրում: Թնդանոթները պետության ձեռքին են, որոնք առանց մեր արկերի չեն կարող կրակել: Բոլոր ճակատներով պատերազմ է: Եթե թնդանոթները չեն որոտում, չի նշանակում՝ պատերազմ չէ: Քարոզչական պատերազմ է: Քարոզչական ոլորտի արկեր են մեզ մոտ: Գիվանագիտական պատերազմ է: Այս պատերազմի զենքերը մեր գրասենյակում են»:

Մամվելն այս խոսքերն ասել է 2009 թ. փետրվարի 2-ին՝ ՀՀ գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի ուղեկցությամբ վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության գրասենյակ կատարած այցի ժամանակ, երբ նրան ծանոթացնում էր կազմակերպության գործունեությանը և ծրագրերին: Վարչապետը ցնցված էր. «Ես ցնցված եմ, ուղղակի ապշած՝ տեսնելով կատարված աշխատանքը»: Այս այցելությունը ճակատագրական եղավ, քանզի դրանից հետո պետությունը ստանձնեց կազմակերպության ֆինանսավորման գործը:

«Մեր գործունեությունը 5 ճակատում է՝ վրացական, թուրքական, ադրբեջանական, իրանական /միակ՝ բարեկամականը/ և Սփյուռքի: Վրացական, թուրքական, ադրբեջանական վիթխարի հակահայ գրականություն կա, որին պարտավոր ենք տեղյակ լինել, իսկ դրա համար թարգմանիչներ են պետք: Ադրբեջանական ակադեմիկոսների մի ողջ բանակ հայկական հուշարձաններն աղվանական էր հայտարարում, հողվածներ ու գրքեր էին հրատարակվում: Ադրբեջանցիների մոտ այսպես է՝ մեկը սուտ է ասում, մյուսը հղում է անում այդ ստին, երրորդը հղում է այդ երկուսին, չորրորդը՝ երրորդին, և այդպես այսօր արդեն ադրբեջանցիները հսկայական գրականություն են մեջբերում և հղումներ անում, որոնք բոլորը սուտ են: Նույն կերպ և վրացիները, թուրքերը»:

Մամվելը միշտ ցավով էր արձանագրում, որ տասնամյակների ընթացքում քիչ են եղել պետական ատյանները, որոնք, որպես քարոզչական զենք, գիտակցելով օգտագործել են իրենց ստեղծած զենքերը: Ադրբեջանն աշխարհի մեզապոլիս-

ները հեղեղում էր իր՝ սկզբից մինչև վերջ ստահող, բազմալեզու թարգմանած գրքերով, իսկ մերոնք, որ ամեն առիթով կարող էին ՀՃՈՒ հիմնադրամի փաստարկված եռալեզու գրքերն ու ալբոմները, ֆիլմերն ու ամսագրերը տարածել, զլանում էին:

Հիմա շատ են խոսողները, սակայն տասնամյակներ շարունակ Սամվելն այն քչերից էր, որ հստակ ասում էին. «Աղբբեջանը խոսում է իր տարածքային ամբողջականությունից, մինչդեռ այն ամբողջովին հիմնված է մեր հայրենիքի վրա»:

«Աղբբեջանական պատկանելության հող գոյություն չունի: Եթե մերոնք նույնիսկ մինչև Կուրը ազատագրեին, ապա ամբողջությամբ հայոց հողն էին ազատագրելու: Բայց մինչև Կուր մենք չենք հասել: Իսկ Կուրից դուրս, եթե ձախսական մտնենք, դա էլ պատմական Աղվանքի տարածքն է: Աղբբեջան պետությունն այս տարի չնշեց իր 90-ամյակը: Մենք պիտի նշեինք: 1918 թվականին գողացված տարածքի վրա մեկ այլ պետությունից գողացված անունով՝ Ատրպատական, ստեղծվեց մի պետություն: Հորինված անուն բռնազավթված տարածքների վրա»:

«Թուրքը մեր հողը մեզանից պահանջում է, մենք մեր հողն ինչո՞ւ չենք պահանջում: Ինչո՞ւ չենք խոսում Շահումյանի շրջանի, Գետաշենի ենթաշրջանի, Գանձակ քաղաքի մասին, ուր 30 հազարանոց հայկական թաղամաս կար»:

«Ես հավատում եմ, որ այս սերունդը կարող է ականատես լինել դժբախտության, որովհետև մենք հանուն հողի չենք ապրում, մեր «հանունները» հանուն հողի չեն եղել ու չեն: Մենք մի ազգ ենք, որ վարժված ենք անհող ապրելուն: Մինչև տարածքների կորուստը չգա, չհասնի Երևանին ու Էջմիածնին, հնարավոր չէ, մինչև երևանցիները թշնամու շունչը Երևանի մատույցներում չզգան, Սարդարապատ չի լինի»:

«Մտավորականն ասում է՝ մեզ Ֆիզուլի^օ է պետք, բայց Ֆիզուլին ազատագրվեց նրա համար, որ Հաղթութը գոյություն ունենար, որովհետև Ֆիզուլիից Հաղթութին էին խփում, Աղբամն էլ վերցվեց նրա համար, որ Ստեփանակերտը գոյություն ունենար, որովհետև Աղբամնից էլ խփում էին Ստեփանակերտին: Դրանք, ըստ էության, կրակակետեր էին»:

«Որքան էլ սեղանների շուրջ բաժակաճառեր ասվեն հայրենիքի մասին, հայ մարդը ո՛չ ճանաչում է քարտեզի վրա իր երկրի սահմանները, ո՛չ սեփական պատմությունը գիտի, ո՛չ էլ դողում է իր հայրենիքի մի թիզի համար: Մենք անհող տեսակ ենք, դրա փոխարեն թուրքի բերանից ամեն վայրկյան «վաթան» ես լսում: Հայաստանը Երկիր մոլորակի ամենա-ամենան է, և այս տարածքը զբաղեցնող ազգն էլ հակառակ իմաստով ամենա-ամենան է»:

Երևանում 2008 թ. մարտի 1-ից 20 օրով հայտարարվել էր արտակարգ դրություն, իսկ այդ ընթացքում ԶԼՄ-ների նախաձեռնությամբ պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հարցազրույցներ չէինք կարող վերցնել: Ընդհանուր առմամբ, պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում պիտի մնայինք, իսկ դա ցանկացած օրաթերթի համար մեծ շոյալություն էր: Հեղինակային հարցազրույց չենք կարող, լավ, բայց մի՞թե ճիշտ է մարդկանց ընդհանրապես զրկել իրենց մտքերն ու տեսակետները, զգացողություններն արտահայտելուց: Իսկ Սամվելն այն քչերից էր, որ ամեն պարագայում հստակ տեսակետ էին հայտնում:

Ահա այս «ֆորմատով» էլ եղավ Սամվել Կարապետյանի անդրադարձը պետության և պետականության հիմքերը սասանող մարտիմեկյան իրադարձություններին: Իր իսկ խոսքով՝ նա վերջին շրջանի (նկատի ունի՝ փետրվար-մարտ ամիսներին) իրադարձությունները վերլուծել-հասկանալով հանգել էր որոշակի եզրակացությունների:

«Ի՞նչ կատարվեց. դա աստիճանական զարգացում ապրած երևույթների պայթյունն էր: Մենք չենք կարող տեղի ունեցածը զուտ այսօրով բացատրել: Ի՞նչը բերեց, հասցրեց սրան՝ այս հարցերն ամեն վայրկյան ինքնաբերաբար տանջում են»:

«Այն, ինչ տեղի ունեցավ մարտի 1-ին և 2-ի գիշերը Երևանում, աննախադեպ չէր: Նույն տեսարանները տեսել եմ, երբ Մարտակերտը թուրքերի ձեռքից ազատագրվեց՝ այրված մեքենաներ, ջարդուփշուր արված շենքեր, ծխացող քաղաք: Պատկերը նույնական էր: Երբ այդ խանութների և գրասենյակների ոտնակոխ, ավերված, թալանված վիճակը տեսա, ինձանից անկախ, հիշեցի 1994 թ. «Երկիր» թերթի խմբագրության վիճակը, երբ հասկարգիչները 3-րդ հարկի լուսամուտից դուրս էին նետված և ջախջախված էին: Ներսում՝ խմբագրության միջանցքի ամբողջ պատը զարդարում էին Արցախյան ազատամարտի հերոսների նկարները՝ Լեոնիդ Ազգալդյան, Թաթուլ Կրպեյան, Շահեն Մեղրյան..., և տղաների ապակեպատ շրջանակների մեջ առնված նկարները պոկել էին պատերից, զցել ոտքի տակ և ոտքերով կոխկռտել: Նույնական էր տեսարանը»:

Ամեն անգամ, երբ Սամվել Կարապետյանի դեկավարած կազմակերպությունը վերադառնում էր հերթական ուղևորությունից, ավելի ճիշտ՝ ծրագրային գործուղումից, Սամվելի հետ հանդիպմանը բազմաթիվ կարևոր թեմաների՝ առաջին ձեռքից և առաջինն անդրադառնալու հնարավորություն էի ունենում: Նրա պատմածներն ուղղակի ուղեղի մեջ դաջվում են ամբողջ կյանքի համար: Երբ 2010

թվականին Արևմտյան Հայաստան կատարած հերթական ուղևորությունից վերադարձել էր, պատմեց երկու թուրք մաքսավորների գրույցի և Մոկսի Լճան գյուղի քուրդ հովվի մասին, որոնց խոսքերը մեծ խորհուրդ ունեն։ Խորհուրդ, որ փաստում է՝ թուրքերը չեն մարսել մեր հայրենիքը։

«Թուրք պաշտոնյաների գրույցն ենք լսում, մեկը մյուսին հարցնում է՝ ուրիշներն էլ են գալիս, բայց 5, 7, 10 օրով, սրանք տեսնես մեկ ամիս ի՞նչ էին անում։ Մյուսը թե՛ իրենց Հայրենիքն է, գալիս, ման են գալիս»։

«Մոկսի Լճան գյուղացի մի քուրդ վայրկյաններ տևած մեր հանդիպման ժամանակ հարցրեց՝ որտեղի՞ց եք, և երբ ասացինք՝ Հայաստանից ենք, նա ասաց՝ 1000 տարի հետո էլ որ գաք, սա ձե՛րն է։ Ասաց և առանց պատասխանի սպասելու հեռացավ։ Այսինքն՝ լինի թուրք, թե քուրդ, պարզ գյուղացի, թե՛ պաշտոնյա, այնքան խորն է նստած նրանց մեջ այս ճշմարտությունը, որ անհնար է եղել մարսել։

Թուրքերն ամեն սարի վրա գրել են՝ թուրքի վաթան, որը կիրովետների հեռավորությունից կարելի է կարդալ, բայց իրականությունն այն է, ինչը գաղտնի, շշուկով ասում էին միմյանց 2 թուրք պաշտոնյա»։

2017-ին, երբ դարձյալ Քաղաքաշինության կոմիտե էր եկել, պատատները ձեռքին մտավ ու փաթեթը սեղանին դնելով՝ շեշտված սիրով ասաց. «Այս պատատները նվիրված են մի մարդու, որը, կարելի է ասել, իմ հերոսն է, որի ողջ կյանքն ինձ համար օրինակ է եղել և է»։ Խոսքը վանեցի մեծ ուսուցչապետ Համբարձում Երամյանի մասին էր, և նրա 160-ամյա հոբելյանին էր նվիրված ՀՃՈՒ հիմնադրամի պատրաստած պատատը։ Սամվելը խոսում էր, ոգևորությամբ պատմում կույր (հիվանդությունից մանուկ հասակում կուրացած) ուսուցչապետի անձնվեր կյանքի ու գործունեության մասին, և ես մտածում էի՝ անմնացորդ իր սրբազան գործին նվիրված ուսուցչապետի այդ տեսակին է պատկանում նաև Սամվելը, որի աշակերտներն այսօր շարունակում են նրա կյանքի գործը...

ՀՈՌՈՍՈՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԻՍԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սամվել Կարապետյան

Սկիզբը՝ նախորդ համարում

Նշխարատուն (Վաչե Վաչուտյանի դահլիճ)

ծղ Արձանագրությունը՝ արևելյան որմին, ներքուստ.

Քրիստոս աստուած ողորմեա Յովհաննէս տնտեսին, զի լամ աւելի տնտեսից սուրբ ուխտիս անարտունջ և մեծաւ յուսով թաղեցաւ առաջի սուրբ Կարապետիս, ի թուին ՌԻԹ (1180):

Հրատ. **Սարգիսեան ք. Գեորգեանց Շիրակացոյ** Համառոտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անույ, Աղեքսանդրապօլ, 1903, էջ 85 (այսուհետ՝ **Գեորգեանց Մ.**, համապատասխան էջերով): Horomos Monastery: Art and History, edited by **Vardanyan E.**, Paris, 2015, p. 411 (այսուհետ՝ գրքի վիճագրական բաժին՝ **Karapetyan S. & Mahe J.-P.**, հմպտ. էջերով):

Ծանոթ. վիճագիրը չի պահպանվել:

ծե Արձանագրությունը՝ հյուսիսային ճակատից բացված մուտքի բարավորին, 11 տող.

ՈՂԸ (1229) շնորհիւն Ք(րիստոս)ի, ես՝ Վաչե, որդի Սարգսի, եւ ամուսին իմ՝ Մամախաթուն, դուստր Ապուսերիին, շինեցաք զնշխարատունս ի վանքս Հոռոմոսի յառաջնորդութեան տ(եառ)ն Բարտի որդո Ամիր Երկաթայ եւ տվաք ընձա գրատա... զմեր զանձագին այգին ի յԱշական ժամո համար եւ նշխարի եւ այ... տուաք եկեղեցոյս ...աւք եւ Բ (2) քշոց արծաթի եւ փոխարէն հատուցին մեզ միաբանքս յամեն ամի յամենայն եկեղեցիքս ի նոր կիրակէին պատարագել զՔ(րիստոս)ս զայգին փակական հոգա եւ զինոյն իշխանութիւն ունի, որ ի մեր պատարագի յարն հասարակաց սէր առնէ արդ կատարիչք գրիս ահնին ի Ք(րիստոս)է, իսկ եթէ ի մերոց կամ յաւտարաց գլխատակս մեր խափանէ, մեղաց մերոց պարտական լիցի առաջի ա(ստուծո)յ:

Հրատ. **Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զատուացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 353: **Սարգիսեան Ն.**, Տեղագրութիւնը ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 162: **Արէլ արքեպիսկոպոս**, Պատմական տեղեկութիւնք զհաստատութենէ Հոռոմոսին վանաց ի Շիրակ, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 300: **Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 22: **Գեորգեանց Մ.**, էջ 84: **Կոստանեան Կ.**, Վիմակն տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 72: **Thierry J.-M.**, Le couvent arménien d'Horomos, Paris, 1980, pp. 61-62. Le couvent de Horomos d'après les archives de Toros Toramanian présentées par **Ani T. Baladian et Jean-Michel Thierry** avec une contrigition de **Jean-Pierre Mahe**, Paris, 2002, p. 204. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 475.

Ծանոթ. վիճագիրը չի պահպանվել:

ծգ Արձանագրությունը՝ մուտքից աջ.

ՉԻԳ (1274) շնորհիւն Ք(րիստոս)ի, ես՝ Ուրան Քարինատին... եւ Պապքան Վարխատինս՝ որդի Սարգսի թոռն ...յն եւ ամուսին իմ՝ Դապտա Խա-

թուն Սարգ...ին զնեցաք Հոռոմի վանացս կէսն ի սահման ովլէ...նեն ի մեր հալալ ընչից եւ տվաք նվերք ի ս(ուր)ք Յովանէս... այգին ի Թալին բոլոր ազատ յամենայն հարկէ եւ շինական մի ...ազ... :Բ: (2) սկի արծաթի եւ ի խանապարին ներքի դեհն :Բ: (2) Հուճրա եւ սպաս...տուցին մեզ զհոգոյն զալստեան ժամն յամենայն եկեղեց...աստատ պահէ ահնի յա(ստուծո)յ:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 162: **Կոստանեան Կ.**, էջ 117: **Thierry J.-M.**, p. 62. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 205. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 476.

Ծանոթ. վիճագիրը չի պահպանվել:

ծե Արձանագրությունը՝ հյուսիսային որմին, արտաքուստ.

ՉԼԵ (1286), շնորհիւն Քրիստոսի, ես՝ հայր Վահան... ետու ի սուրբ Յովհաննէս յիշատակ իմ եղբարն՝ Գրիգորոյ, որ միջարեաց ի Քրիստոս փոխեցաւ, իւր հալալ ...խաչվառ և նասիճ շուրջառ ... ետուն կարկի զինպո հողն և զԾմակի հողն, որ ինձ ...զինչ խարճ լինի՝ ես առնեմ. հետ այնորիկ սուրբ Յովհաննիսի է, սպասարքս փոխարէն հատուցին յամեն ամի Գ (3) պատարագ ի տաւն սուրբ Գրիգորին յանուն Գրիգորոյ առնել, կատարիչք գրոյս արինին ի Քրիստոսէ, ամեն: Շինեցի դուլէն և զանգակատունս:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 162: **Արէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 300: **Գեորգեանց Մ.**, էջ 85: **Կոստանեան Կ.**, էջ 129: **Thierry J.-M.**, p. 63. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 206. **Karapetyan S. & Mahe J.-P.**, pp. 476-477.

Ծանոթ. Արէլ արքեպիսկոպոսի և Գեորգեանցի մոտ տարեթիվն է՝ ՉԼԵ (1326): Վիճագիրը չի պահպանվել:

Ռուզուքանի տապանատուն

ծը Արձանագրությունը՝ արևմտյան թաղի հարավահայաց կոր մակերեսին ներքուստ, 13 տող.

ՈԿԳ (1214), | ի հայրապետութե(ան) տ(ե)ր Սարգսի եւ ի տէրութե(ան) վանացս Գրիգորո(յ), Սմբատա, Վահրամա | եւ եղբարց իրեանց: Ես՝ Խուրթու խաթունս, դուստր Ռուզուքանա, շինեցի զիմ նախնեացս | զտապանատունս եւ զերեսին եկեղեցիս ի վերա տրա աւանդեցի ի ս(ուր)ք ուխտս զիմ մաւրն տված գեաղն զՇաթա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց յառաջնորդութե(ան) հար | Խաչատրո եւ փոխարէն հատուցման ընկալա յամենայն շաբաթ զշաբաթն աւուրն | պատարագն յիմ յերեսին յեկեղեցիս {ս} իմ մարն՝ Ռուզուքանա եւ իմ քոյրոջն՝ Նուսթ | եւ ինձ՝ Խուրթու խաթունիս անխափան կատարեսցեն եւ յամենայն ամի Ժ (10) պախարագ ...մա եւ Տուղտէ, արդ էթ ոք զգրեալս խա-



Արձանագրություն ժը (գրչ.՝ հողվածագրի, 2015 թ.)

վանե կամ թերի կախարտ գմեր մեղացն պարտական է առաջի Զ(րիստոս)ի կատարիչք գրոյս արինին յա(ստուծո)յ եւ յամենայն սրբոց | ...որք ...ցս Անդրեաս վարդապետս ամենայն եղբարքքս գրեցաք... արք հանե ի վանացս փոխելով կամ ծախելով չունի թողութիւն յա(ստուծո)յ:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 159-160: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Գեորգեանց Մ.**, էջ 85-86: **Կոստանեան Կ.**, էջ 144-145: **Thierry J-M.**, p. 54. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 202. **Karapetyan S. & Mahe J-P.**, p. 470.

Ծանոթ. մյուս հրատարակիչների մոտ տողերի մեծ մասի սկզբի հատվածները չկան, այսպես՝ 5-րդ տողում՝ *րն տված*, 6-րդում՝ *Խաչատրո*, 7-րդում՝ *պատարագ*, 8-րդում՝ *եւ ինձ*, 9-րդում՝ *տարագ*, 10-րդում՝ *տարք գմեր մեղացն*, 12-րդում՝ *ցաք* և 13-րդում՝ *ութիւն յա(ստուծո)յ*: Տարեթիվը՝ ՈԿԴ (1215), ունի միայն Ժ-Մ. Թիերրին:

Ժք Արձանագրությունը՝ արևմտյան թաղի հյուսիսասիայաց կոր մակերեսին ներքուստ, 11 տող.

Թ(իւն) | ՉԻԷ (1278), | շնորհիւն ա(ստուծո)յ, ես՝ Սամադ ով... ...ան...գերդ, որ հասաւ հրամանն ա(ստուծո)յ ե... ...ստի ...ի որդին Սամ... ...ա(ստուա)ծ փոխեցաւ եւ խոցան բժիշկեալքն... եւ տուաք ... կոչի նորք Ջաւին, գոր մեր | հալալ [արդեա]նց գնեցաք ... [զա]նձագին գեղին յԱրճո վերլի թաղին ...դսին մեր ...ս ի մեր հայրենի վանքս Հռոմոմսիոն տապ... ...ն սահմանեցին յամենայն | ար ի տարին ... պատարագ ...սի եւ այգեն ազատեց ... | հակառակին տրիցս իմ ...սց ... [ն]գովեալ եղիցին, իսկ հաստատուն | պահողքն արինին յա(ստուծո)յ, Ա... վ(ար)դ(ապետ):

Հրատ. **Karapetyan S. & Mahe J-P.**, p. 480.

Ծանոթ. վիմագրի մոտ 1/3-րդ մասն իսպառ (հատկապես միջմահատվածը) հողմահար է: Գրա պատճառով բովանդակությունը չի ամբողջանում: Թերևս հենց այս պատճառով էլ նախկին հրատարակիչներից ոչ մեկը չի անդրադարձել այս վիմագրին:

Կ Արձանագրությունը՝ արևմտյան ճակատին՝ կամարի հյուսիսային ոտքին, 3 տող.

Յիշատակ է Խոնդիլխաթունին:

Հրատ. **Karapetyan S. & Mahe J-P.**, p. 487.

Ծանոթ. ժամանակը՝ թերևս ԺԵ դար:

Կ Արձանագրությունը՝ վերին հարկի կենտրոնական գմեր-թավոր մատուռի խորանի հարավային խորշի գլխաքարի եզրով, 1 տող.

...ունին եկեղեցեացս կատեպանս...

Հրատ. **Karapetyan S. & Mahe J-P.**, p. 473.

Կ Արձանագրությունը՝ վերին հարկի կենտրոնական գմեր-թավոր մատուռի խորանի հյուսիսային պատին, 3 տող.

Ես՝ կացի Թխաթոս գիրցի, | թվ(ին) Ռ-ՃԼԶ (1687):

Հրատ. **Karapetyan S. & Mahe J-P.**, p. 485.

Կ Արձանագրությունը՝ վերին հարկի հարավային միանավ մատուռի խորանի հյուսիսային խորշի գլխաքարի եզրով, 1 տող.

Տ(ե)ր ա(ստուա)ծ ողորմեայ Ռուզուքամա ի միս անգամ քո գալլատեանդ, ամեն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 160: **Արել արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 301: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Գեորգեանց Մ.**, էջ 87: **Կոստանեան Կ.**, էջ 145: **Thierry J-M.**, p. 55. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 203. **Karapetyan S. & Mahe J-P.**, p. 473.

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:



Արձանագրություն ԺԲ (գրչ.: հողվածագրի, 2015 թ.)



Արձանագրություններ Կ, Կա, Կբ, Կգ (գրչ.: հողվածագրի, 2015 թ.)

Հյուսիսային դամբարան

Կդ Արձանագրություն.

ՉԾԴ (1305), տ(է)ր Գալիթ:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 160: **Ալիշան Ղ.**, էջ 22. **Կոստանեան Կ.**, էջ 154: **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 202. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 470.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

Ժամատուն (արսիդով դահլիճ)

Կե Արձանագրությունը՝ արևելյան խորանի կամարի ճակատային մասի հարավային կողմում, 1 տող.


Այս խաչերս Բախտիարենց է:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 163: **Կոստանեան Կ.**, էջ 242: **Thierry J.-M.**, p. 67. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 206. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 479.

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար:

Կզ Արձանագրությունը՝ հյուսիսարևելյան և հարավարևելյան սյուները միմյանց կապող կամարի հարավահայաց կոր մակերեսին, 12 տող.

Կաման ա(ստուծո)յ, ես՝ Վարդան, | եւ ամուսին իմ՝ Աղբրխացս, միարանեցաք | ս(ուր)ք ուխտիս եւ տվաք | :Բ: (2) կով, :Բ: (2) եզն | եւ էտուն մեզ գերլեզ-



Արձանագրություններ կե, կգ, կե (գրչ.՝ հողվածագրի, 2015 թ.)

մանի տեղ զա...| եւ ի տարին :Դ: (4) ար պալտարագ. :Բ: (2) ինձ, :Բ: (2) Աղբրլացին, որչափ կենդանի ենք | մեր ծնողացն արնեն յխտել մահուան մեզ:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 163: **Գեորգեանց Մ.**, էջ 83: **Կոստանեան Կ.**, էջ 242: **Thierry J-M.**, p. 67. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 206. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 480.

Ծանոթ. 5-րդ տողի սկզբնամասում և 7-րդ տողից հետո, հակառակ ազատ պահած տարածության, վիճակի վրա կիսատ է թողնված: Ժամանակը՝ հավանաբար ԺԳ դարի երկրորդ կես:

Կէ Արձանագրությունը՝ հարավարևելյան սյան խոյակի արևմտահայաց նիստին, 1 տող.

Մխ(իքար):

Հրատ. **Մխիթարեանց Ա.**, Ճանապարհորդություն յԱնի, Կ.Պոլիս, 1855, էջ 40: **Արել արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, Թ, էջ 222: **Գեորգեանց Մ.**, էջ 71, 83: **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 487.

Ծանոթ. մյուս հրատարակիչները *ՄԻ* տառերը սխալմամբ ընկալել են որպես տարեթիվ՝ (791): Թերևս՝ ԺԳ դար:

Առաջնորդարան

կը Արձանագրությունը՝ լուսամուտներից մեկի բարավորին.

Շնորհին տեսնոն նորոգեցաւ սրբոյ վանացս զանկատունս շրջակայ պարսպասու և մեծ եկեղեցոյս սարգերը պարագայիքն ի թուջս ՌՍԼԷ (1788)-ին սկսեալ իշխողութեամբ Ալիբեկին և Մահմատ բեկին յառկոս Շամբեցի Յովհաննէս վարդապետին, որք հանդիպիք, տուք զողորմին Աստուած զձեզ զողոմեսցի:

Հրատ. **Արել արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 301: **Յոսիկ եպ.**, Անցեալ դարերի յիշատակ, «Արարատ», 1904, էջ 990: **Գեորգեանց Մ.**, էջ 87-88: **Կոստանեան Կ.**, էջ 217: **Thierry J-M.**, p. 84. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 207. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 486.

Ծանոթ. Հուսիկ եպիսկոպոսը նշել է, որ «Ալի և Մահմատ բեկերը Խաթուն Օղլի տան պայագատներից են: Խաթուն Օղլիք ժառանգաբար առելի քան երկու դար իշխում էին Արևմտեան Շիրակում իբրև գառառապետ մինչև Ռուսաց վերջնական տիրապետությունը»: Ի դեպ, և մեծ եկեղեցոյս սարգերը հատվածն ունի միայն Արել արքեպիսկոպոսը: Վիճակի չի պահպանվել:

Մատուռ

կը Արձանագրություն.

Եղբայրիկն նկարող խաչիս:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 164: **Ալիշան**, էջ 29: **Կոստանեան Կ.**, էջ 243: **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 486.

Ծանոթ. հավանաբար չի պահպանվել (համեմայն դեպս, մենք այն չենք տեսել):

Սք. Սարգիս մատուռ

ի Արձանագրությունը՝ մատուռի խաչքարերին.

զՍարգիսս յիշեցէք:

Սուրբ Սարգիս օգնեա Սարգսի Գորդայ, ամեն:

Հրատ. **Մխիթարեանց Ա.**, էջ 59:

Ծանոթ. վիճակի չի պահպանվել: Ժամանակը՝ ԺԳ դար:

Խաթունի մատուռ

հա Արձանագրությունը՝ 5 տող.

Ք(րիստո)ս ա(ստուա)ծ, ի քո մեծի ծագման լոյստ նորոգեա զհոգի Խաթունին՝ դստեր Հեճուպ Վարիամա, որ մեծ յուտով եւ բազում արդեանքք վերատին նորոգեաց զեկեղեցիքս եւ զի ոչ ունենալով մարմնատր զուսկ ստացաւ իւր ժառանգ եւ յիշատակ զս(ուր)ք Յովանէսի:...


Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 160: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Կոստանեան Կ.**, էջ 147: **Thierry J-M.**, p. 58. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 203. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 474.

Ծանոթ. վիճակի չի պահպանվել: Ժամանակը՝ ԺԳ դար:

Առյուծի դահլիճ

իբ Արձանագրությունը՝ երդիկի միջի 4 նիստերին, 3 տող.

ԹՎ(ին) ՉԻԶ (1277), | կամաւն ա(ստուծո)յ, ես՝ Առիւծս հոգեւորին Սարգսի որդիս, եւ կենակից իմ՝ Սէդա, շինեցաք ի մեր հալլա արդեանց զնշխարատունս ի մեր ժամատան դուռս, յիշ[ատակ ծնողայ]ց մերոց եւ ս|...ա գոր ի կամ հ... մ... ...ս այս... յայ կարողութեամբ վարպետ Ֆրերս՝ Կարնո քաղաքացի:



Արձանագրություններ հբ, հգ, հդ, հե (զրչ. հողվածագրի, 2015 թ.)

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 163: **Կոստանեան Ա.**, էջ 119: **Thierry J.-M.**, p. 65. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 206. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 478.

Խցեր (հյուրատուն)

Իզ Արձանագրությունը՝ ժամանակից հյուսիս՝ խցերի շարքի՝ արևելքից արևմուտք երկրորդ խցի արևելյան ներքին պատին՝ քիվագոտու գույգ քարերի վրա, 1 տող.

...ծնողաց մերոց եւ յիշողի...

Հրատ. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 477.

Ծանոթ. թերի է ինչպես սկզբից, այնպես էլ վերջից: Ժամանակը՝ ԺԳ դար:

Պարիսպ

Իզ Արձանագրությունը՝ դարպասին.

ՈԿԴ (1215), կամաւ Յիսուսի Քրիստոսի ամենողորմին եւ իշխանութեան մանդատոր թախուցէին

եւ սպասալար շահնշահ Չարարէի որդոյ շահնշահ Սարգսի, եւ՝ Սարգիս, Սամուէլի որդի, ծառայ Քրիստոսի յարդարավաստակ արծաթոյ իմոյ արարի գիասարակաց գործս ի պատիւ անուան իմոյ եւ ի յիշատակ հօր եւ մօր եւ որդոց իմոց եւ որք ընթեռնութի, յիշեցէք զիս ամենեքեան առաջի Յիսուսի Քրիստոսի:

Հրատ. **Մխիթարեանց Ա.**, էջ 58-59:

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

Վանական շինություններ

Ին Արձանագրությունը՝ 3 տող.

ՊՂԶ (1447), ի յիշատակ է | Գրմզին:

Հրատ. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 483.

Իզ Արձանագրություն.

Ի ՌՃԼԴ (1685) թուարեութեանս հայոց նորոգեալ պայծառացաւ թագաւորաշէն մեծաքանչ Հռոմոնսի վանքս ձեռամբ Դանիէլ վարդապետի Տիգրանակերտցո եւ իշխանութեամբ տեղոյս Խաթուն օղլի իշխանաց իշխան Մուստաֆա աղայի. եւ զի ունէր ժամանակս ոչ սակաւ ատերի լցեալ աղպով եւ հողով, գոր տեսեալ վերոգրեալ Դանիէլ վարդապետին եռաց ի հոգի իւր. եւ էարկ զանձն ի չարչարանս ի դառն ժամանակիս, որում ասգս հայոց յոյժ էին չքաւորեալք եւ իշխանութիւն տաճկաց զօրացեալք բազում աշխատութեամբ եւ ջանիւ լուսաւորեալ մաքրեաց զվանքս ս(ուր)բ Յովանէսի ի տղմուտ եւ ի զազիր մթնասագացութենէ վասն յուսոյն որ առ ա(ստուա)ծ, արդ որ կարդայք, յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 163-164: **Արել արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 299: **Աիշան Գ.**, էջ 26: **Գեորգեանց Մ.**, էջ 81-82: **Կոստանեան Ա.**, էջ 196: **Thierry J.-M.**, p. 84. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 207. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 484. Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

Ին Արձանագրությունը՝ 6 տող.

Ես՝ Ասախոյր ելիեցս, Ռրխըսդաստի | որդի ե(ր) զընկյացի, թվին ՌՃԾԷ (1708):

Հրատ. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 485.

Իզ Արձանագրություն.

...յառաջնորդո Աւետիք սր. եպս., ի ՌՄԵ (1756) կէ...:

Հրատ. **Thierry J.-M.**, p. 85. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 207. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 486.

Ծանոթ. 2008 թ. վիմագիրը տեղում չենք տեսել:

Իբ Արձանագրություն.

...աւթս հանէ ի վանացս փոխելով կամ ծախելով, չունի թող(ութիւն)...:

Հրատ. **Thierry J.-M.**, p. 55.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել: Թերես՝ ԺԳ դար:


Սր. Մինաս եկեղեցի

ձ Արձանագրությունը՝ հարավային ճակատին.


Յանուն ա(ստուծոյ), ի ՆԼԵ (986) թուականիս հայոց, ետու ես՝ Չուտաս, զիմ հայրենի այգին զՀոռոմդեան, որ ի Մրեան ի Հոռոմոսի վանս ի հայր Սողոմոն վասն իմ ծնողաց հոգեաց, որ հակառակի նգովեալ լիցի յա(ստուծոյ) կենդանոյ, եւ ես՝ հայր Սողոմոն, պարտական իմ յիմ ժամանակս ի տարոջն Ա (1) Խ (քառասունք) ունել Չուտասին ծնողոցն, իսկ յետ իմո եղիցն խափանել, մի որ իշխեցէ ի բանէն ա(ստուծոյ) եւ մի որ վայրապար համարեցի զգրեալսս, զի բազում բարութիւնս շնորիւր եկեղեցո առատաձեռն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 167: **Ալիշան Ղ.**, էջ 32: **Գեորգեանց Մ.**, էջ 69-70: **Մատանեան Կ.**, էջ 9: **Thierry J.-M.**, pp. 74-75. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 170. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 396.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:



Արձանագրություններ *ձա, ձբ, ձդ* (զրջ.՝ հողվածագրի, 2015 թ.)



Արձանագրությունների տեղաբաշխումը Սր. Մինաս եկեղեցում (չափ.՝ ժ.Մ. Թիերրիի, 1999, վերածվ.՝ Ա. Գալոբյանի, 2021)

ձա Արձանագրությունը՝ արևելյան ճակատին, 1 տող.

Սուրբ Յարութիւն է:

Հրատ. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 406.

Ծանոթ. ժամանակը՝ թերևս ԺԲ դար: Ըստ ամենայնի, մատնանշված է եկեղեցու անունը (ի հակադրություն այլ վիմագրերում և գրականության մեջ մատնանշված Սր. Մինաս անվան):

Նախորդ հրատարակության մեջ արձանագրությունը սխալմամբ տրվել է Սր. Գեորգ եկեղեցու բաժնում (ըստ ճարտարապետ Ա. Հակոբյանի):

ձբ Արձանագրությունը՝ ներսում՝ հյուսիսային որմին, 18 տող.

Յանուն ա(ստուծոյ), ի ՆԿԲ (1013) թուականիս, ես՝ տ(ե)ր Անանիա, նուխատ եւ յետին ի վերակացուս եկեղեցոյ, առաջնորդ գոյով սուրբ ուխտիս, ո՛չ ըստ արժանատրութեան իմոց կենացս կամ վարուց ինչ առաքինութեան, | այլ ի ներելն ա(ստուծոյ) ապաւինելով ազատեցի մեծաւ ջանիւ զհալիկ եւ զբաստակ, առի եւ զՔեղարագոմն իւր ամենայն գոյի | ի սուրբ ուխտս վասն ապաւինի տեղի լինելոյ ի փախստեան ժամկանակի եւ այլ բազում ինչ աւգտի՝ փայտի եւ խոտի, | արդ որոք սուրբ հարք եւ եղբարք, որք յաջորդէք զկնի մեր յիշատակի արժանի արարէք զմեզ սուրբ պատարագան եւ | այլ աղաթից հանդիսիւ եւ որք յիշէք, յիշեալ լիցիք ի մեծի | ատենին առաջի Ք(րիստոս)ի եւ եթէ անփոյթ առնէք ամաչել պիտի ձեզ | առաջի Ք(րիստոս)ի եւ որք զկնի ձեր գան զմեզ յիշեցն, գոր եւ իմ անխափան եմ պահեալ զառաջնոցն յիշատակն եւ տուող այդմ | պարգեի Գագիկ էր արինեալ յա(ստուծոյ) եւ որդեակք իւր Սըմպատ եւ | Աբաս եւ Աշոտ, վկայութեամբ ամենայն հայոց ազատացս, | արդ յամենայնի արինեալ է սուրբ երրորդութիւնն տուիչն | ամենայն բարեաց ամեն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 167-168: **Ալիշան Ղ.**, էջ 32-33: **Գեորգեանց Մ.**, էջ 70: **Thierry J.-M.**, p. 76. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 170. **Karapetyan S. & Mahe J.-P.**, pp. 396-397.

Մր. Գևորգ եկեղեցի

ձգ Տապանաքար. գտնվում էր եկեղեցուց փոքր-ինչ հարավ-արևելք.

... Աշոտ քագաւոր:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 165: **Գեորգեանց Մ.**, էջ 68: **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 406.

Ծանոթ. հինք ընդունելով Աշոտ Ողորմած Բագրատունի քագավորի մահվան տարեթիվը՝ տապանաքարը կարելի է վերագրել 977 թ., սակայն թվում է, որ տապանագիրն այս կերպ փորագրված լինել չէր կարող:

ձղ Արձանագրությունը՝ արևելյան ճակատին՝ լուսամտից ցած՝ 3 շարք քարերին, 9 տող.

Ով հռչակաւոր դու եւ մեծ անունդ ի վկայս սուրբ Գեորգիոս աւգնեա քարեխաւսութեալնք Գագկա շահայնշահի շինողի զվկայարանս | զայս քոյով անուանակոչութեամբ ի քոյո յուսակնեալ | քարեխաւսութիւն զի ընկալցի զողորմութիւն ի Ք(րիստոս)է ա(ստուծոյ) յանվախճան արքայութեանն ընդ ամենայն արդարացեալն ապաշաւանաւք | հասանել լուսոյ փառաց որդւոյն ա(ստուծոյ), ի վերջնում գիշերին, | ի ծագել մեծի եւ աներեկ առաւառին այցելութիւն զտանել | առաջի ահաւոր բեմին եւ անաշառ դատաւորին աղաչեմք:

Հրատ. **Շահխաթունեանց**, էջ 353: **Սարգիսեան Ն.**, էջ 165: **Աբէլ արքեպիսկոպոս**. «Արարատ», 1870, ԺԲ, էջ 302: **Գեորգեանց Մ.**, էջ 68: **Կոստանեան Կ.**, էջ 26: **Thierry J.-M.**, pp. 78-79. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 171. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 399.


Ծանոթ. արձանագրության առաջին տողն ամբողջությամբ և երկրորդ տողի գրեթե մեկ երրորդն արդեն փորագրված են եղել, երբ պատվիրատուն դադարեցրել է և կարգադրել գրել ավելի խաշոր, կանոնավոր և գեղագիր տառերով: Միևնույն ժամանակ անհաջող արձանագրվածն էլ հնարավորինս կոծկվել է կրասվաղով:

Ի դեպ, երրորդ քարաշարից ներկայումս միայն վերջին քարն է տեղում մնացել, ուստի գրչանկարը լրացրել ենք ըստ 1900-ականներին կատարված լուսանկարի:

Աբել արքեպիսկոպոսն ու Գևորգյանցն արձանագրությունը սկսել են տեղում գոյություն չունեցող՝ *Ի բուին ՆԿԱ (1012)*-ով, որը թերևս շփոթմունք է:

ձե Արձանագրությունը՝ ավագ խորանի հյուսիսային կողմում՝ որմի արևմտահայաց սվաղված մակերեսին, ի սկզբանե կարմիր, սակայն գունաթափության հետևանքով ներկայումս առավելապես դեղին գույնի զանազան երանգներով մեզ հասած ներկագիր 49 տող.

Ա(ստուա)ծ է ի սմա. | ..., | յանուն ա(ստուծոյ) յ տ(ե)ր Անանիաս, | շնորհին ա(ստուծոյ) Աշարունեաց եւ | Ճակատոց եւ Արայրարտեան գաւառի եպիսկոպոս զմտաւ ածեալ հանախլազ զվանս սրբոյն Յոհաննու, | թէ մեծ շահ է յա(ստուա)ծային խորհուրդսն յիշել զգնացեալն կարկեցի ամ ըստ ամէ անխափան | զգատկի մեռելոց ատուր ժամն | յամենայն եկեղեցիս յանուն | առաջնորդաց հարցն սրբոյ | եկեղեցոյս կատարել եւ | զայլ ատուրսն մինչեւ ցնոր | կիրակէն ամենայն հանգուլցելոց, որ են ի ս(ուր)բ ուխտիս յալնուն նոցա, զի մեր միշտ զլիշատակս նոցա ի մտի ունելով | եւ կատարելով առաջի զենովն Ք(րիստոս)ի նոքա ի մեզ հայեցին | աւգ-




Արձանագրությունների տեղաբաշխումը Մր. Սինաս եկեղեցում (չափ. Ժ.Մ. Թիերրիի, 1999, վերամշկ.՝ Ա. Չակոբյանի, 2021)

նական լինելով մեզ քարեխաւսութեամբ աղոթից իրելանց, որ զկեանս մեր խաղաղացուցեն քաղաք[ավա]... [ի հա]ճոյսն ա(ստուծոյ) հայեցեալք յելս | զնացից նոցա անանող լինել | հաւատոց նոցա: Արդ եւ շնորհելովն ա(ստուծոյ) ի ժամանակս իմոյ ախաջնորդութեանս կատարելցի, դուք որ զկնի իմ յաջորդէք զպաշտան սրբութեանս | միատունկ անէք յիշատակարալնիս մերոյ, այլ հաւատով կախարեցէք եւ քահանայից մախոցող [պա]տարազին եւ այլ | եղբայրութեանն մխիթարութիւն արարէք, զի եւ նոքա եւ մեկ... Գալտ... ողորմութեանց | արժանաւորեցու(ք) քարեխարութեանցն ...հրն|եալ J... | ... | ցէ... | ցուն... | տ... | ... | ... | ...:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 166-167: **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 31-32: **Գեորգեանց Մ.**, էջ 68-69: **Կոստանեան Կ.**, էջ 26: **Thierry J.-M.**, p. 80. **Ani T. Baladian et Jean-Michel Thierry**, p. 173. **Karapetyan S. & Mahe J.-P.**, p. 407.

Ծանոթ. ամենայն հավանականությամբ, 2-րդ տողում եղել է թվականը, որը, ցավոք, իսպառ ջնջված է: Ժամանակը ո-




Արձանագրություն ձե (զրջ.՝ հողվածագրի, 2015 թ.)

րոշվում է Անանիայ եպիսկոպոսի անվան հիշատակությամբ՝ ԺԱ դարի 10-ական թթ.: Ուշագրավ է, որ սույն ներկագիր արձանագրությունը ստեղծվել է նույն ժամանակաշրջանին վերաբերող միևնույն բովանդակությամբ մեկ այլ արձանագրության վրա:

Սարգսյանի և նրան հետևած հրատարակիչների մոտ վերծանությունն ավարտվում է 32-րդ տողում *զայաշտան* բառով: Գևորգյանը, բազմաթիվ սխալներով հանդերձ, ունի մինչև 32-րդ տողի կեսը:

ձգ Արձանագրությունը՝ ավագ խորանի հյուսիսային կողմում՝ որմի արևմտահայաց սվաղված մակերեսին՝ նախորդից հյուսիս, ներկագիր (սև գույնի) 17 տող.

Յանուն ա(ստուծոյ) ես՝ | Սարգիս, որ...|ունեցի ետու | զիմ դան... | Հոռոմոսի վանից ... | ...ք... | ... եւ Հո... (Ան)անիայի ... ապա... | ամէ եւ պարտին ամէն տալրի իմ հոգոյս քառասոլինքս ունել, որչափ անի եւ | եկեղեցիքս շինեց եւ առաջնորդ, որ զայս ստակս խալիսանէ, յա(ստուծոյ) նզովե(ալ) առցէ | եւ իմ մեղացս պարտական լիցի | առաջի ատենին Զ(րիստոս)ի | ա(ստուա)ծ շնո(ր)հատր արացէ այս | սուրբ ուխտիս:



Արձանագրություն ձգ (գրչ.՝ հող-վաճառի, 2015 թ.)

Հրատ. Karapetyan S. & Mahe J.-P., p. 409.

Ծանոթ. ցավալիորեն իսպառ ջնջված է ներկագիր արձանագրության բովանդակության առավել կարևոր՝ 3-7-րդ տողերի հիմնական մասը: Ժամանակը՝ ԺԱ դարի 10-ական թթ.:

ձէ Արձանագրությունը՝ արևմտյան ճակտոնին, 13 տող.

Ի ՌՌԶԺ (1660) դրմպիադի լինելութեան արկարածոց ՄԿ (260) դրպիադի ա(ստուծոյ) մարմնանալո եւ ի ՆՉԵ (1036) | թա(գաւորութեան) հ(այոց), ես՝ Սմպատ շահանշահ, որդի Գագկա շահանշահի, էտոլի զիմ գեղս զՍահուունիս ի մեր հանգստարանս թ(ա)գաւորաց ի տիէ|գերահռչակ վանս {ս} Հոռոմոսի վասն մեր մեղաց թողութեան եւ գրեցի ի | ս(ուր)բ Գ(եւ)որգ յամենայն տարի Գ (4) քառասունք Գագկա եւ ի վախճանիլն իմ Բ (2) ինձ եւ Բ (2) Գալգկա մինչ ի գալուստ տ(եառ)ն վկա(յ)ութեամբ տ(եառ)ն Պետրոսի հայոց կաթողիկոսի եւ յառաջնորդութեան ս(ուր)բ ուխտիս հար Սարգսի եւ Գեորգա, արդ էթե յառաջնորդաց եւ ի սպասաւորաց ս(ուր)բ եկեղեցոյս յայս յիշատակէս խափանէ մեղաց մերոց, պարտական է առաջի Զ(րիստոս)ի, արդ թե որ ի մեծլաց կամ ի փոքունց ի մերոց կամ յոտարաց հակառակ կա եւ յապշտակէ գգեղն կամարան եւ փնդկալն գրկեալ լիցի նա ի Զ(րիստոս)է, որպէս գՌուդա ա(ստուա)ծասպան որոշեցի ի ս(ուր)բ երրորդութեանէն եւ ի Զ(րիստոս)ի ս(ուր)բ նշանէն | կապեալ եղիցի կենաք եւ մահուամբ եւ ամենայն մեղք եւ անէծք յԱդամա մինչ ի գալուստն Զ(րիստոս)

ս)ի ի նվանէ խնդրեցի հաստատուն էթէ ա(ստուա)ծ կամի: *Թովմա ԻԷ-Գ*:

Հրատ. Սարգիսեան Ն., էջ 166: Ալիշան Ղ., Շիրակ, էջ 31: Գեորգիանց Մ., էջ 67-68: Կոստանեան Կ., էջ 20-21: Thierry J.-M., p. 79. Ani T. Baladian et Jean-Michel Thierry, p. 172. Karapetyan S. & Mahe J.-P., pp. 400-401.

Ծանոթ. արդեն ընկած-կորած են արձանագրության եզրաքարերից մի քանիսը:

ձը Արձանագրությունը՝ բարավորին, 7 տող.

Շնորհիւն ա(ստուծոյ), ես՝ Մարտիրոս, եկտու զիմ կուղպակն ի տիէգերահռչակ | վանս Հոռոմոսի վասն հոգոյն Գեորգի, որդո իլնո եւ արձանագրեցի ի սուրբ Գեորգ յամենայն ամիլ | Գ: (3) ար ժամ Գեորգեա զվարդեարին հինգշաբթ ուրբաթ եւ զշա՛լքաթ եւ յետ փոխելոյն իմ առ Զ(րիստոս)ս ինձ առնեն, արդ էթէ որ զընծաեկալս որոշէ կամ գրեալս ոչ առնէ որոշեցի ի փառացն ա(ստուծոյ):

Հրատ. Սարգիսեան Ն., էջ 167: Ալիշան Ղ., էջ 32: Գեորգիանց Մ., էջ 69: Thierry J.-M., p. 80. Ani T. Baladian et Jean-Michel Thierry, p. 174. Karapetyan S. & Mahe J.-P., p. 400.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել: Ժամանակը՝ ԺԱ դար:

ձթ Արձանագրությունը՝ ներսում՝ հարավային դռան կամարակապ բարավորի արևմտյան կողմում՝ սվաղի շերտին, ներկագիր թերի պահպանված 4 տող.

[Յա]նուն ա(ստուծոյ) այս իմ զիր... | ...որ ետու զիմ գանձագ(ին) | ...Հոռոմոսի իմ եղբա... | ...ոգոյն եւ գրեցիք...:

Հրատ. Karapetyan S. & Mahe J.-P., p. 400. Ժամանակը՝ ԺԳ դար:

ը Արձանագրությունը՝ արևմտյան ճակատին՝ լուսամուտից վեր, 4 տող.

Ես՝ Յաւհանէս վարդլապետ եկեղեցոյս:

Հրատ. Karapetyan S. & Mahe J.-P., p. 403.

դա Արձանագրությունը՝ արևմտյան ճակատին՝ լուսամուտից վեր՝ խաչքարի բարձրաքանդակի պատվանդանին, 1 տող.

Խաչս Սիբէլի:

Հրատ. Karapetyan S. & Mahe J.-P., p. 403.

Խազագիր հիշատակագրություններ

Ուխտավոր այցելուների թողած խազագիր կամ մատիտագիր հիշատակագրություններ սվաղի շերտի վրա.

Ի Ռ-ՃԼԸ (1689), | ես՝ Ադասի սուտանլուն ս(ար)կ(աւա)զն էրևանցի, | էկի ս(ուր)բ ուխտս:

Ես՝ թեքիրտաղցի Չեր... | Մանուկ, թվին Ռ-ՃԽ (1691):

Յ(իսուս)ի ա(ստուծոյ) | շատբերցի Յով որդի Ավետիկ, | թվ(ին) Ռ-ՃԽԷ (1698), ապրէլի | Ը (8) օրն:

Ես՝ դարսից Մէլիքիս ազգէ, | գրեցայ, թվին | Ռ-ՃԾԷ (1708):

Ես՝ Սկրտիչն, գրեցի, ով որ կարդայ ողորմի սաէ ...:

Ես՝ Էջմիած(ին)ցի Գասպարի որդի | Բաբէլս, եկի ս(ուր)բ ուխտս, թվին Ռ-ՃՀԸ (1723) ամին:

Ես՝ շամբեցի | Ադասու որդի | Ըստէփանոս, | գրեցի, թվին Ռ-ՃՀԸ (1729)-ի:

Ռ-ՄԾԳ (1804)-ին նոյեմբերի ԻԱ (21)-ին, | ես՝ մեղաւոր Սահակ դպիրս երևանցի, | էկի Ղօշակամբ:



Արձանագրություններ ձե, ձը, ձթ (զրչ.՝ հողվածագրի, 2015 թ.)

Եկան 1846-ին | մարտի 24-ին | թրրապիզոնցի |
 Յարութին | Գասպարեանց:
 1886 ամ, | Թադեոս Մաչագոյեանց:
 Ախալցխացի | Բարտուղիմէոս | Փոփոլեանց, |
 1895 օգ(ոստո)սի 20:
 Յակովբ Բաղրամեանց երևանցի, | 1903 ամի,
 յուլիսի 3-ին:
 Համազասպ | Ալանեանց | ղրխազաիրմանցի, |
 1903 թ. 3 յուլիս:
 Արտաշես Գրիգորեան:
 Մուրադեան Ալեգար գիլլուջեցի:
 Հայ Կորին Ղազարեան:
 Ասան Իզրաշեան Ռուբեն:
 Նալբան Կարապետ | Նազարեանց | աղք-
 սանդրապոլեցի:
 Հրատ. Karapetyan S. & Mahe J.-P., pp. 488-489.



Արձանագրություններ ղ, ղա (զրչ.՝ հողվածագրի, 2015 թ.)

ԼԻՃՔՎԱԶԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Էմմա Արրահամյան

Մույն հոդվածով ներկայացնում ենք ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու ենթաշրջանի Լիճքվազ գյուղատեղիի տարածքում պահպանված վիմագիր հուշարձանները¹, որոնք ուսումնասիրողները ցարդ պատշաճ ուշադրության չեն արժանացրել: Դրանք, ըստ էության, միջնադարյան բնակավայրի գոյության քարտեղեն վկայություններն են:

Լիճքվազ գյուղատեղի. երբեմնի հայաչեն գյուղը տարածված է եղել Մեղրի քաղաքից 11 կմ, իսկ Վարդանիձոր գյուղից՝ 3 կմ հյուսիս-արևմուտք՝ անտառապատ հովտում (N 38°59'05.4", E 46°11'06.3", ծ. մ.՝ 1340 մ):

Առնվազն զարգացած միջնադարից գոյություն ունեցող բնակավայրի մասին, ցավոք, գրավոր աղբյուրներում որևէ տեղեկություն չենք գտել: Հնավայրի մասին լուր են մինչև իսկ դիվանական վավերագրերը: Լիճքվազի պատմական անցյալը վեր հանելու գործում օգնում են ներկայիս գյուղատեղիի տարածքում ցիրուցան վիճակում պահպանված գերեզմանական հուշարձաններն ու եկեղեցու բարավորը:

Գյուղը թերևս հայաթափվել է 1604 թ.՝ Ըահ Աբասի բռնագաղթի ժամանակ: Հայտնի է միայն, որ 1831 թ. բնակեցված էր 5 տուն թյուրքական ծագմամբ մահմեդականներով², որոնք կարճ ժամանակ անց հեռանում են, իսկ տարածքը վերածվում է մեղրեցի երևելի հայերի ամառանոցի:

Երբեմնի հայաչեն բնակավայրը տեղագիր հեղինակները նույնացնում են Վերին Լեհվազի (Լեշկվազ, Լիշկվազ) հետ. «Ռուսաց պաշտօնական աշխարհացոյց քարտեզի մէջ նշանակուած է միայն Ներքին Լեւազ գիւղը...: Իսկ Վերին Լեւազը լինելու է անշուշտ դէպի հիւսիսային արեւելք նշանակուած Լեշկուազ գիւղը, որ կը թուի, թէ այժմ հաստատուն բնակիչներ չունի, որովհետև վիճակագրութեան մէջ նշանակուած չգտանք: Լեշկուազ անունը աղաաղութիւն է Լիճքվազի, որ այսպէս կոչուած է գետոյն ջրերու հոսանց և կամ Ալանկէզ լերան լճակաց համար»³:



Լիճքվազ գյուղատեղին (լուս.՝ Ռ. Քորթոյանի, 2018 թ.)

Պետք է նշել, որ բնական գեղեցկությամբ դրախտավայր հիշեցնող տարածքն անտես չի մնացել և առնվազն ԺԹ դարի կեսերից սկսած՝ ամառանոց է ծառայել և ցարդ շարունակում է ծառայել մեղրեցիների համար: Այդ է վկայում, օրինակ, Բ. գրչանունով հեղինակի՝ 1882 թ. նկարագրությունը. «Լիճքվազը մեղրեցուց ամառանոցն է, ընկած նոյն անունով գետակի երկու կողմերում, Արագածի կամ Ալագեզի (Ալագեազ) ստորոտում...: Մի հինգ-վեց տարի սրանից առաջ, բացի մի քանի հին էյվանից, մնացածը ալաչուխներ էին (իմա՝ վրան), թաղիքներով ծածկուտած, իսկ այժմ տարեցտարի վերջիններս թիւը ընկնում է. շինում են այնպիսի էյվաններ, որոնց առջև գտնվում են բանջարանոցները: Հին գերեզմանատունը և ատերակ դարձած եկեղեցին վկայում են, որ մի ժամանակ այստեղ ապրել են հայեր, բայց ոչ նման նրանց տեղը բռնողներին...»⁴: Նիկողայոս (հոգևորական անունը՝ Ներսես) Մելիք-Թանգյանն էլ (1866-1948) հավելում է. «Լեշկուազը բարձր է Մեղրու դիրքից, շրջապատուած անտառապատ լեռներով լայն հովտի մէջ, օդը հովասուն, ատի տաք, քան ցուրտ, որ շատ յարմարում է մեղրեցոց բնութեան: Ապրում են վրաններում և մասամբ սենեակներում, ջուրը լաւ և առատ, թէև ջրից օգտուելու ցանկութիւն նոր էր յղացել նրանց մէջ: Այստեղ էր Մեղրու քաղաքակիրթ դասը. ուսուցչական խումբը և քահանան»⁵:

Ի դեպ, խորհրդային տարիներին Լիճքվազում գործել է նաև պիոներական ճամբար⁶:

1 Ուսումնասիրությունը կատարել է ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը 2018 թ. Մամվել Կարապետյանի գլխավորությամբ: Խորին շնորհակալություն ենք հայտնում Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետի տեղակալ Նաիրա Հայրապետյանին՝ մեր աշխատանքներին մեծագույն սիրով աջակցելու համար:

2 **Կորկոտյան Ջ.**, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, 1932:

3 **Էփրիկեան Ս.**, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1903-905, էջ 97: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Միսական, Վենետիկ, 1893, էջ 302: **Բ.**, Մի կտոր իմ յիշատակարանից, «Մշակ», 1883, № 160, 25 հոկտեմբերի, էջ 2: **Մ. Թանգ. Ն.**, Շուշուց դէպի Հին Նախիջևան, «Նոր-Գար», 1891, № 159, 2 նոյեմբերի, էջ 3:

4 **Բ.**, նույն տեղում:

5 **Մ. Թանգ. Ն.**, նույն տեղում:

6 **Մարտիրոսյան Ժ.**, Բոլորը գոհ են, «Արաքս» (Մեղրի), 1965, № 38, 11 օգոստոսի, էջ 4:




Լիճքվազի ամառանոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Եկեղեցի. հողևոր այս կառույցի պատմության և ճարտարապետական նկարագրի վերաբերյալ տեղեկությունների չենք տիրապետում: Միայն հայտնի է, որ 1882 թ. արդեն ավերակ էր⁷:

Եկեղեցու գոյությունը հաստատվում է շինարարական արձանագրությամբ, որը փորագրված է որպես ճակատակալ քար օգտագործված խաչքարի թիկունքին (չափերն են՝ 108 x 40 x 12 սմ)։

Ես՝ Պոռչ տիրացոյ, | Տիրավազ, Խաթուն կա... Աւագ, | որ շինեցիք ս(ուր)ք եկեղեցիս: | Ա(ստուա)ծ ողորմի, թվ(ին) ՉՂԷ (1348): || Յիշեա(յ) | Բ(րիստո)ս ա(ստուա)ծ | զՄոլիք(°):



Եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

7 Բ., նույն տեղում:



ճակատակալի խաչագարդ երեսը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Գերեզմանոց. մնացորդները գտնվում են Լիճքվազ տանող ճանապարհի աջ կողմում (N 38°59'08.7", E 46°11'10.6", ծ. մ.՝ 1312 մ): 1882 թ. հիշատակվում է որպես «հին գերեզմանատուն»⁸:

Գյուղատեղիի տարածքում ցիրուցան վիճակում սփռված և տեղահան 6 խաչքարերը (դրանցից մեկը, ինչպես վերևում նշեցինք, օգտագործվել է որպես եկեղեցու բարավոր) հուշում են, որ թաղումներ

8 Նույն տեղում:



Լիճքվազի գերեզմանոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

կատարվել են առնվազն Ժ դարից: Խաչքարերից միայն մեկն է անարձանագիր (չափերն են՝ 141 x 64 x 16 սմ), որը գտնվում է աղբյուրի մոտ՝ ճանապարհի եզրին՝ ձորակում և թվագրվում ԺԱ-ԺԲ դարերով:

Ստորև գիտական շրջանառության մեջ է դրվում ցարդ անտիպ 4 արձանագրություն.

ա Խաչքար (չափերն են՝ 128 x 64 x 20 սմ). քայքայված, վերնամասում պահպանվել է 1 տող.

ՅԿ (911) Մմբատ յա...:



Խաչքար, ԺԱ-ԺԲ դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Խաչքար ա (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

բ Խաչքար (չափերն են՝ 113 x 54 x 13 սմ). ուշագրավ, վերին աջ անկյունը՝ կտորված, խաչաքների միջև՝ 8 տող.

ՅՁԱ (932) ... | յաղաւթս | իւր | զաւրութիւն սո/ւրք խաչի քո պահ/եայ զՈսկեան՝ հաւր | իմոյ, | Ստեփանոսէ | խաչս:

գ Խաչքար (չափերն են՝ 116 x 51 x 17 սմ). 14 կարճ տող.

ՅԳ/Գ (945) ք(վիւն) Ս/ամտ(ո)ւ/կիւն, | զՇ/ամ(ա-միւն), | զմ(ա)ղ(տեսի) | Վա/սա/կա | ամ/ու/սիւն՝ յա-ղաւթս (յ)իշեցէք:



Խաչքար Բ (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

դ Խաչքար (չափերն են՝ 89 x 59 x 19 սմ). գեղազարդ, խաչաքերի միջև և ստորին մասում՝ 7 տող.

ԹՎ(ին) ՇԾԹ (1103), | տ(է)ր ա(ստուա)ծ | ողորմ/եա(յ) Յով/անիսի(ն):



Խաչքարեր գ, դ (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՁԱԿՈՒ

Գրիգորիս եպիսկոպոս Աղվանեանց

Սկիզբը՝ նախորդ համարում

Փոխանորդական այցելութիւն
ի գիւղօրայս հայոց Գանձակու
վիճակի ի 20էն յունիսի 1890 ամի

ԺԱ

Ս. Թարգմանչաց վանք

Նախ այցելեցինք ի վանս Թարգմանչաց²⁷ ի 21-ն յունիսի, ուր կատարեցաւ մեր սուրբ թարգմանչաց՝ Սահակայ և Մեսրոպայ տօնախմբութիւնը: Ս. պատարագէն զկնի օծեցինք տեղոյն վերանորոգեալ զանգակատան գմբէթի խաչը: Աստուծոյ տաճարն վայելուչ բարեգարդութեան մէջ կգտնուէր իւր բոլոր պարագայիք: Ծերունագարդ վանահայր Թեոդորոս վարդապետ Շիրակունին, իւր կոչման համաձայն, ուղիղ կենցաղավարուելով, ակնածելի եղած էր շրջակայ գիւղօրէից հայ ժողովրդեան... քահանայութեան համար տիրացուներ պատրաստելու մասին:

Նոյն տօնախմբութեան օրը վանքին խնամակալ պ. Ներսէս Տէր-Ներսէսեանցը²⁸ բոլոր ուխտաւորները պատուեց ճաշկերութեան առատ սեղանով:

Վանքի կառավարչական գործոյն մէջ աչքի կգարնէր նորա սեպհական անտառի պահպանութեան հոգատարութիւնը և հարկ եղած տեղեր ճանապարհաց ուղղութեան և հարթութեան հեռատեսութիւնը, բոլոր սահմանի ցանկապատութեանն, բազմաշխատ գործունէութեանն և ներքին բնակարանական շինութեանց մէջ ճաշակի ակներև նրբութիւնն: Բայց մի պակասութիւն զգալի եղաւ մեզի, այն էր՝ վանքի ապագայ յարատև կառավարութեան մտից աղբիւրներ չլինելն և եղածն էլ բարձի թողի առնելն: Թէև վանքն ունի վարելահողեր, բայց քանի մը տարիէ ի վեր կմնան անմշակ, զի չունի ո՛չ արօրաքարշ եզներ և ո՛չ կաթնատու անասուն՝ կովեր և ոչխարներ, բացի մի գոյգ եզներէն, որք վանքի առօրին պիտոյից կծառայեն, իսկ հողագործութեան համար ոչինչ: Այդ յառաջ եկած կլինի պ.



Թարգմանչաց վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

խնամակալի վանական ապրուստի միջոցներուն անտեղեակ լինելն:

Խնամակալ Տէր-Ներսէսեանցի պատրաստած վանքի ելևմտից հաշտոյ վրայ առայժմ աւելորդ կհամարեմք միտք դարձնել, որովհետև նա յիշեալ հաշտոյ ներկայացուցեր է ազգիս ընդհանրական Հայրապետին, որուն հետև հրաժարական տուած է խնամակալութեան պաշտօնէն: Ուստի և նորին աստուածաբեալ օծութիւն նոյն հաշտեցուցակը առաքել է Գանձակու հոգևոր կառավարութեան քննելու:

Քանի խօսքով տեղեկութիւն վանահօր մասին: Շիրակունի վարդապետն²⁹ վաթսուն տարիներ անցուցած և կարի ծերացած, լաւ և է ասել ծերութիւնը փութացուցած (կան չափազանց աշխատասիրութեան, կան սնունդի պակասութեան համար, զի կարի չարքաշ կեանք կվարէ) բազմափորձ անձնաւորութիւն է: Երիտասարդ հասակի մէջ, զկնի իւր կնոջ մահուան, վարդապետական կոչումն ստանալով՝ ինքզինք ազգային ծառայութեան նուիրեր է, զանագան գաւառներու և վանքերու մէջ վարժապետութեան պաշտօն վարելով, որով և բազմաթիւ մարդիկ պատրաստեր է, եթէ ո՛չ այնչափ գիտնական՝ գէթ բարոյական մարդ, որ ազգային եկեղեցույն կպիտոյանան և նորա ժողովրդեան կառաջնորդեն: Նա՝ Շիրակունին, մեր մեծ և փոքր վանքերու չորս պա-

27 Գտնվում է Խաչակապից 1,5 կմ հյուսիս: Հիմնադրումն ավանդաբար կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: 1980-ական թթ. խարխուղ վիճակում տակավին կանգուն էին միայն Սր. Սահակ-Մեսրոպ եկեղեցին, գավիթը, զանգակատունը և ստորգետնյա թաղակապ մի շինություն (վանքի մասին մանրամասն տես՝ **Կարապետյան Մ.**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 217-233):

28 Խոսքը հայ վաճառական-արդյունահանող գանձակեցի Ներսէս Աբրահամյան Տէր-Ներսիսյանցի մասին է: Վախճանվել է 1896 թ. (նշվ. աշխ., էջ 218):

29 Թեոդորոս վարդապետ Շիրակունին 1867 թ.-ից առ 1910-ական թթ. վարում էր վանահոր պաշտոնը (նշվ. աշխ., էջ 227-228): 1879 թ. նրա հեղինակությամբ Ելիզավետպոլում լույս է տեսել «Համառօտ դասատետր ազգային պատմութեան» աշխատությունը: 1870-1891 թթ. ընթացքում վանքում ստեղծել է նաև 10 ձեռագիր, որոնք պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (**Միմասյան Թ.**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 98-99):



Թարգմանչաց վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

տերու մէջ մնացած, անձուկ գաղափարով կեանք անցուցած վարդապետ չէ շատերու նման, որք միայն իրենց կեանքը բտել գիտեն: Մա գիտցեր և ջանացեր է ուրիշներու մարմնական և հոգեկան կեանքի կերակուր պատրաստել: Ուստի մարդ, երբ նորա «ցուցակ ծառայութեան» կարդայ, հիացման մէջ կմնայ, որ այսպիսի բազմաշխատ և բազմարդիւն վարդապետն, ցայսօր ժամանակի լոկ վարդապետ մնացած է, գէթ մի որևիցէ պարզաբաշխութեան չէ արժանացեր: Տարակուսելի է, տարոյս մէջ մարդ պատրաստելու նուիրուած՝ սոյնպիսի հազուագիտ վարդապետի անգնահատելի մնալու պատճառն ինչո՞վ բացատրենք:

Գեր. Շիրակունի վարդապետն ունի և քանի մը հատոր գրական աշխատութիւն և իր պարապոյ ժամեր ի գուր չկորսնցնելու համար մինչև անգամ համարձակուեր է Եղիշէի պատմագիր և Նարեկացւոյ աղօթագիրք ոտանաւորի դարձնել: Թէ որչա՞փ յաջողեր է այդ բարձր ձեռնարկութեան մէջ, ես չգիտեմ, բայց գիտեմ, որ Եղիշէի ոսկեղենիկ պատմագիրք և Նարեկացւոյ մեղրածորան աղօթագիրք ոտանաւորի դարձօղսն պէտք է բնագրէն աւելի փայլեցուցած և քաղցրացուցած լինի, որ...

ԺԲ

Կիրանց

Ամսոյս 22-ին վանքէն մեկնելով՝ մի ժամուայ չափ ճանապարհորդութիւն ընելով հասանք *Կիրանց*³⁰ գուտ հայաբնակ գիւղը, որ կբաղկանայ 35



ԿԻՐԱՆՑ. գիւղը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

տներէ՝ 237 արական, 139 իգական: Ունի մի անշուք, հնաշէն Ս. Աստուածածին անունով եկեղեցի³¹: Չունի ուսումնարան և ո՛չ գրեթէ ժամասաց տիրացուներ, բայց այս պակասութիւններն առ այժմ ներելի թուեցան ինձ, որովհետև այդ ամբողջ միաբան հայ գիւղացիներ (հայի ամբողջական միաբանութիւն հրաշք համարելու է) ասկէ երեք տարոյ չափ առաջ 10.000 մանէք՝ մի պատկառելի գումարով, ծախսելով իրենց վերջի կոպէկները, գիւղի անդաստանի սահման՝ հանդերձ անտառով, ի գնոյ առած էին նախկին գիւղակալուածատեր գանձակեցի Սիքայէլ Մելիք-Շահնազարեանցէն:

Գիւղիս եկեղեցւոյ անշքութիւն, ըստ ամենայն պարագայից, նորա ժողովրդեան անբարեպաշտու-

30 Գտնվում է Դաշկեսան շրջկենտրոնից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի ձախ վտակի՝ Ոչխարաջրի ձախ լեռնալանջին (ծ. մ. բարձր է 1230-1380 մ):

31 1930-ական թթ. քանդել են և քարերն օգտագործել պահեստի շինարարութեան մէջ (Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 238):

թեան չէի կրնար տալ, որովհետև ժողովուրդն աղքատութեան մէջ գտայ, վասն որոյ պարտաւորեցայ եկեղեցւոյ վերաշինութենէն նախադաս համարել ժողովրդեան նիւթական վերանորոգման միջոցները քարոզել: Նախ քարոզեցի դժուարակոխ ճանապարհներու ուղղելն ու հարթելն, երկրորդ՝ ձորի սահանագնաց գետակի ջուր իրենց անջրդի արտերու վրայ բերելու առուատեղին ցոյց տալու համար ժողովրդեան հետ անձամբ գնացի, ուրդ (բենդ) կապելու տեղն որոշեցի և յաջողուեցաւ, որոյ սկիզբն պիտի լինի *Կանգնեալ խաչ* (Կաղնախաչ)³² անունով ուխտատեղի մատուռի ներքևէն: Սոյն ուխտատեղէն փոքր հեռու կգտնուեն երկու փոքր մատուռներ, որ տեղոյ ձորակի այս ու այն կողմերը շինուած են: Սրբաբնակ տեղերուն տեղացիներ *Քոյր և եղբայր* կանուանեն: Պատուիրեցի նաև քահանային, երեցփոխանին և տանուտէրին, որ ամենայն տարի, կալի ժամանակ ժողովրդեան կալատեղեր գան, իւրաքանչիւր կալեմասն հաւաքեն յանուն վարժարանի, որով կարողանան իրենց զաւակներուն ուսում տալ, և քանի մը տարի այս բանս կրկնելով՝ գոյացեալ արմտիք ամբարեն երեցփոխանի պատասխանատութեան ներքև՝ և ամենայն տարի ցանքի ժամանակ սերմ չունեցող գիւղական աղքատաց, ինչպէս իրենց սովորութիւնն է, տոկոսով սերմանափոխ տան և կալոցի ժամանակ նոյն փոխն հաւաքեն՝ հանդերձ վերադրովն: Այլև գիւղիս սահմանի մէջ անբաժան մնացած արտերէն երեք կտոր արտ յատկացուցինք յանուն եկեղեցւոյ և վարժարանի՝ այդ սերմով ցանել, և սորա գոյացեալ արդիւնք միացնել արմտեաց գումարի տոկոսեաց հետ, որով և կարող կըլլան մի ուսուցիչ վարձել իրենց տղայոց ընթերցանութեան համար:

Այդ բարեպաշտ ժողովուրդ քարոզած այս պատուէրներից այնչափ զգայուեցան, որ երեկոյին՝ ընթրիքի ժամանակ, վերստին այս քարոզը կրկնել տուին մեզ, իսկ մեք, յետ կրկնութեան խոստացանք իրենց սիրած քարոզն զրի առնել և տալ գործակատար քահանային, որ իրենց խոստացած պարտք



ԿԻՐԱՆՑ. Կաղնախաչ ուխտատեղիի մատուռը (լուս.՝ Ս. Կարապետանի, 1986 թ.)

ամէն տարի թէ՛ իրենց յիշեցնէ և թէ՛ գործադրութեան հսկէ, զի մեր ձեռնադրած նորընծայ Անանիա քահանայն Շիրակունի³³ նոյն գիւղի քահանայն էր և նոյն կողման տասն և վեց գիւղօրէից գործակատար, որ հետս առած ի միասին կայցելէինք գիւղերին: Կրկին անգամ սքանչացման արժանի է այդ գիւղի բնակչաց ամբողջական միաբանութիւն, որովհետև գիւղի հին կալուածատէրէն առնուած հողեր և բանջարանոցներ մարտ գլուխ բաժաներ են իրենց մէջ առանց խռովութեան և դժգոհանաց: Ո՛վ, այս գիւղը օրինակելի է հայ գիւղաբնակչաց մէջ:

Մի խելացի կարգադրութիւն ևս տեսայ նոցա մէջ, որ անտառի կէս մասը պահպանութեան ներքև դրած էին՝ ծառեր մեծցնելու թէ՛ շինութեանց պէտք գալու ապագայի մէջ և թէ՛ ծախելու համար, իսկ մնացեալ կէս մաս՝ առ տնին պիտոյից համար կոտորելու: Այն ինչ հին կալուածատէրի ժամանակը ամբողջ անտառ անխնայողաբար և հաւասարապէս կոտորեր են, որոյ համար այսօր շինութեանց պիտոյից համար ոչ մի փայտ չկայ գիւղի սահմանի մէջը: Գիւղիս և *Փոլի* ասուած շէնի մէջտեղը կգտնուի պաղլիլի (շիպ) առատ հանք:

ԺԳ
Քարիատ

Ամսոյս 23-ին այստեղէն մեկնեցանք ի *Քարիատ*³⁴ գիւղ, որ կգտնուի *Ղօշ-Ղարա* գետակի ձախ

32 «Շիրակունի վարդապետն քարոզեր է այս կողման ժողովրդեան, որ *Կաղնախաչ* յորջորջման փոխարէն *Կանգնեալ խաչ* ասեն՝ վախճալով, որ հայ քրիստոնէայն կրկին կռապաշտութեան չդառնայ: Մի՛ վախճար, համեստափայլ ծերունի, հայն հաւատքի մէջ հաստակող է, դժուարութեամբ կփոխել, ինչպէս որ դժուարութեամբ փոխեց կռապաշտութիւն խաչապաշտութեան հետ: Նա գիտէ մինչև անգամ իր ազգի թագաւորութիւն տալ քրիստոնէութիւն պահպանելու համար: Ուրեմն մի՛ վախճա, և մեր հեթանոսական կրօնի վրայ լոյս տոտող քանի մը հաս ու կոտոր մնացեալ բառերն մի՛ անհետացնիր: Բաւական է, որ մեր նախնեաց Նաասարդի, Վարդավառի, Կրակավառի (Տեառնընդառաջ) ևն. ազգակենդան սոսնախմբութեան պատկերներ կորսնցուցեր ենք» (ծմբ.՝ հեղինակի):

Կաղնի խաչ (*Կանգնեալ խաչ*) վանքը գտնվում է Կիրանցից 1 կմ հարավ-արևմուտք: 1986 թ. տեղում պահպանվում էր կիսավեր մատուռը, որի ներսում կանգնեցված էր ԺԲ-ԺԳ ողբնորոշ անարձանագիր մի խաչքար (*Կարապետյան Մ.*, նշվ. աշխ., էջ 239):

33 Անանիա (աշխարհիկ անունը՝ Սմբատ) Տեր-Թեոփորոսյան Շիրակունի. Խաչակապի Թեոփորոս վարդապետի որդին էր: 1889 թ. հունվարի 21-ին ձեռնադրվել է քահանա և մինչև 1893 թ. դեկտեմբերի 21-ը հովվել Կիրանց գյուղին: Այնուհետև քահանայագործել է Գանձակի Նորաշեն թաղամասի Սբ. Աստվածածին եկեղեցւում: 1904 թ. նշանակվել է Գանձակ թաղաքի գերեզմանատան Սբ. Սարգիս եկեղեցւոյ վանահայր (մանրամասն տես՝ նշվ. աշխ., էջ 52, 56, 238):

34 Խոսքը վերաբերում է Ներքին Քարիատին, որը գտնվում է Դաշկեսան շրջկենտրոնից 1 կմ արևելք՝ Արթինաջուր գետի ձախակողմյան հարավարևելահայաց ձորալանջին (ծ. մ. բարձր է 1280-1380 մ):



ՆԵՐՔԻՆ ԲԱՐՅԱՏ. գյուղը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

ավիին՝ մի ժամու չափ ճանապարհորդելով: Գիղիս կբաղկանայ 80 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 435 արական, 361 իգական: Ունի Ս. Աստուածածին անունով մի փոքրիկ և անշուք եկեղեցի³⁵ և մի քահանայ³⁶, որ համեստ և ժողովրդակամութիւն վայելող անձնատրութիւն է:

Ամոռոյս 24-ի առաւօտեան քարոզի մէջ իրաւունք չհամարեցինք մեզի Կիրանց գիղացւոց մման անբասիր թողուլ գիղիս ժողովուրդը վարժարան ու եկեղեցական երգիչներ չունենալու համար՝ բացատրելով ուսման կարևորութիւնը և ապացուցինք, որ միակ միջոցն է տիրող տգիտութիւնէն՝ աղքատութենէ ու նախնական տառապակիր և ապարդիւն աշխատութենէ ազատուելու:

Գիղիս բնակութիւնն ընկած է բարձրաբերձ սարերու ձորի մէջ՝ մի պաշտպանողական դրից վերայ, իսկ անդաստանական հողերն կգտնուին բարձունքներու վերայ, որուն համար գիղացիք պարտաւորուած են իրենց բոլոր որաններն³⁷ մի ժամու չափ հեռաւորութենէ գրաստներու քամակով իջեցունել գիղամէջ, որ աննկարագրելի մի աշխատութիւն է: Այս դառն վիճակն ընտրել են պարսից իշխանութեան ժամանակի ասպատակութեանց քարոքանդութենէն ազատ լինելու համար:

Գիղիս սահմանի մէջ կգտնուին զանազան տեսակ հանքեր՝ երկաթե, պղնձի և կօպալտի: Կթուի, թէ այս գիղի Քարհատ անուն ստացուել է երկաթահանքի գործադրութենէն, զի գիղի հայ բնակիչներն իրենց փորձառութեամբ քարեր կտրելով՝ երկաթ կհանեն ի հնուց ցայսօր ժամանակի թէ՛ իրենց երկրագործական պիտոյից և զանազան գործիքներու և թէ՛ պայտեր շինելու համար:

Աստի 30 տարի առաջ յոյներու գտած՝ գիղիս արևելեան հարաւի կողմ կօպալտի հանքին որևիցէ միջոցաւ տիրապետել է գերմանացի Սիմէնց անունով մի հարուստ հանքապան և առաջարկել է սոյն գիղացւոց՝ սարի կողքին մի փոքրիկ տեղ շնորհել հանքի գործածութեան համար, որ ապագային իրենց բնաւ վնաս չի բերեր՝ ըսելով, թէ զի մեր գործողութիւն տափին տակն է, տափի երեսին ոչինչ գործ չունենք, և այս ըսելով՝ պարզամիտ և անփորձ գիղացւոց ստորագրել տուել է և սորա գրութիւնն ներկայացնելով քաղաքական իշխանութեան և այսպիսով՝ սահմանի մի ընդարձակ մասին տիրապետել է, որուն մէջ կգտնուին սոյն գիղացւոց հին գիղատեղին և նորա մէջ կանգուն կեցած առողջ եկեղեցին, որ իւր գործառնութեանց գործիքներու և այլ պիտոյից մթերանոց ըրած է յիշեալ հանքապան: Ի՞նչ իրաւունքով որ այդ եկեղեցւոյն տիրել է, թէև առ այժմ մեզ յայտնի չէ, բայց այս գիտենք, որ այդ եկեղեցւոյ դուռն այնպիսի ամրութեամբ փակել է գիղացւոց դէմ, որ իրենց և իրենց պապենական սիրած և պաշտած եկեղեցւոյ և ուխտատեղոյ երես տեսնելն անկարելի ըրած է Եղեմի սերովբէական սրով պարփակուածի պէս: Պատահել է ժամանակ առ ժամանակ, որ գիղացւոց մի մասն ցանկացել է յիշեալ եկեղեցւոյ շուրջ բնակութիւն հաստատելով՝ պաշտել իրենց հայրենական եկեղեցին, բայց Սիմէնցը գիտցել է խորամանկել և խաբել պարզ գիղացիներին՝ ըսելով, թէ հանքի գործածութեան համար ես այստեղ հորեր կփորեմ և վառօդով քարեր կնետեմ, այն ժամանակ ձեր տներ կփչեն, բայց իրեն բնակութեան երկյարկեայ տունը, որ նոյն տեղը կգտնուի, մինչև ցայժմ իւր տուած այդ երկիւղէն ազատ մնացած է, որովհետև յիշեալ հանքը եկեղեցիէն և այս բնակավայրը ասպարեզով հեռու են իրարմէ և երկուքի մէջտեղ բլուրներ կգտնուին:

Սոյնպիսի մի հանք էլ կգտնուի գիղիս հանդէպ՝ արևելեան կողմը, զանձակեցի պ. Ներսէս Տէր-Ներսէսեանցի իրաւանց ներքևը, որ այժմ գործադրութեան մէջ է:

Մի խելացի մտածութիւն ևս սոյն գիղացւոց մի մասի մէջ տեսայ, որք կխորհէին, թէ փոխանակ բարձրաբերձ սարաւանդներէն գրաստներու քամակով մեր օրանները խորածորի մէջ ամէն տարի իջեցնելուն, լաւ է, որ մեր շենատեղը փոխադրենք մեր արտօրէից սահմանի մէջտեղ, որ արդէն հին գիղատեղի է: Եւ արդարև այս խելացի ձեռնարկութեան համար գիղացւոց մի մասը արդէն իրենց բնակութիւններ հաստատած էին իրենց ընտրած տեղը: Բայց այս մասին մեր ըրած ծառայութիւն միայն այս եղաւ, որ աստնին խրատներով և քարոզներով համաձայնեցուցինք մնացեալ գիղացիներուն գաղթել իրենց նոր ընտրեալ տեղը ի միասին բնակելու՝ հաստատելով, որ այնուհետև իրենց օրանները կալատեղ փոխադրելու աշխատութիւն կիսով չափ կթեթևանայ, և ամառուայ անգին ժա-

35 Եկեղեցին հիմնովին ոչնչացվել է 1927 թ. (նշվ. աշխ., էջ 272):

36 Քահանան էր Անտոն Վերոյան Պապիկյանցը, որը հովվել է 1872 թ.-ից առնվազն մինչև 1912 թ. (Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 323 շրջ.-324; գ. 11608, ք. 124):

37 Հունձ:

մանակը կվաստակեն: Մեր այցելած երկու գիւղերու և այլ մնացեալ գիւղօրէից հաց, իւղ, պանիր, գետնախնձոր, լոպիայն և այլ հրնտեղէններով պահոց օրերու կերակրեղէնները կ'պատրաստուին գիւղացուց երկրագործական միջոցներով, նոյնպէս և զանազան տեսակ մրգեղէններ: Սակայն սոցա աղքատութեան բուն պատճառը մենք գտանք. հագուստի համար կ'վատնեն շռայլած փողն՝ ցուցամուրթեան համար քաղաքի վաճառականներէն կարճակեաց չթէր, շիլաներ և կտաւներ առնելով: Ես ակներև կտեսնայի, որ ինչպէս գիւղացուց ջրեր դէպի Գանձակ կ'վազեն, այնպէս և սոցա հարստութեան մի մասն: Ես հարցուփորձով ստուգեցի, որ սոյն գիւղացուց ծնողաց ժամանակ հագուստի բոլոր նիւթեր իրենց ձեռքով կ'պատրաստէին, որոնց ոստայնանկութեան բոլոր ասպ(ա)սանդր³⁸, արեժ և այլ ամէն տեսակ գործիքներ մինչև ցայժմ կ'պահպանեն իրենց տուներու մէջ: Միմիայն կանայք դիմացկուն և պատուական շալեղէններու գործարարութիւնը պահեր են իրենց էրիկներու շալի և շալվարի գործածութեան համար, որ լեղակի կ'պոյոյս գոյնով իրենք կ'ներկեն: Ես համոզեցի և պատուիրեցի այդ մարդիկներուն, որ ձմեռ ժամանակը բամբակ մանելու, կտաւ գործելու և շիլայ ներկելու և ալաճա պատրաստելու հայրենական սովորութիւնն վերստին գործադրել տան իրենց կանանց ձեռքով:

Մի այլ մխիթարական տնտեսագիտութիւն ևս գտայ գիւղական ժողովրդեան մէջ, այն է՝ երկրագործական գործիքներ ընդհանրապէս իրենք կ'պատրաստեն, հիւսնութիւն, որմնաշինութիւն, երկաթագործութիւն, ներկարարութիւն, գորգ և կապերտ գործել: Գորգերու զանազանագոյն մանածներու գոյները կանայք իրենց ձեռքով կ'պատրաստեն: Դեղին գոյնը դեղնածաղիկ անուն բոյսով կ'ներկեն, որ յաճախ կ'գտնուի բուսոց մէջ: Եթէ հարկ լինի կանաչ ներկելու, դեղին մանածն լեղակի մէջ ներկելով՝ կանաչ գոյն կ'ստանայ: Կարմիր կ'ներկեն տօրոն անուն բոյսի արմատով, որոյ վայրիմ յաճախ կ'գտնուի դաշտերու մէջ: Նարնջի գոյն կ'ներկեն քրիմ անուն փայտով, որ յաճախ կ'գտնուի այս կողման անտառներու մէջ: Նարնջեւոյ բաց գոյն՝ թէյի մման կ'ներկեն վայրի խնձորեւոյ կեղտով: Բաց գոյն դեղին կ'ներկեն տխի կ'ճեպով: Սև գոյն կ'ներկեն ճապկի անուանեալ ծառի եփուած տերևով, որն նոյնպէս յաճախ կ'գտնուի տեղոյս անտառներու մէջ:

Գիտեն նոյնպէս վերոյգրեալ վեց գլխատր գոյների իւրաքանչիւր տեսակէն երեքական գոյն ստեղծել՝ մոյգ, միջակ և բաց գոյներ: Գորգերու նախշերու ձևը հնադարեան է: Մենք անձամբ այցելեցինք գործողներուն և յորդորեցինք, որ հետևեն ծաղկանց տերևներու, ճիւղերու և բոյսերու ձևին՝ վեր առնելով և՛ եվրոպական խալիներու, և՛ չթերու



ՆԵՐՔԻՆ ՔԱՐԳԱՏ. բերդի հարավարևմտյան հատվածը (լուս.՝ Ս. Կառապետյանի, 1980-ական թթ.)

տեսակէն: Իրենց գրաստուց պայտեր պատրաստել, սօլկարութիւն (բաշմաղչութիւն) ընդհանրացեր է գիւղականաց մէջ: Գիւղացուց մի մասն ձմեռ ժամանակ իրենց անասնապահութեամբ զբաղուած են, ձեռնհաս մասն փայտ և ածուխ կտանեն քաղաք ծախելու և ջորեպանութիւն կանեն, իսկ կանայք գրեթէ անգործ կ'մնան:

Սոյն երկու գիւղօրէից անտառներու մէջ կ'գտնուի նախ՝ առաւելապէս ուտելու կաղին, ընկոյզ (ճողոպոյր), հուն, սալոր (շլոր), տանձ, խնձոր, մոռ (մալինա), զկեռ (մուշմուլա), մոշ, մամուխ, կեռաս, հաղարճ, մօրի և այլն:

Գիւղի մօտ՝ հարաւակողմ, կ'գտնուի Ս. Սարգիս անունով մի ուխտատեղի, իսկ գիւղէն հեռու՝ Խաչիսար անունով լեռան կատարի վերայ, կ'գտնուին Պակի Ս. Գէորգ անունով երկու գերեզման-ուխտատեղի, որ տեղացիներ քոյր և եղբայր կանուանեն: Գիւղի հարաւային կողմ կ'գտնուի մի բերդի ատերակ, որուն Ղի-բերդ³⁹ կանուանեն տեղացիք:

Քարհատեցուց նոր ընտրած գիւղատեղին, որն առաջուց դարձեալ շինատեղի է եղեր: Եկեղեցի չունենալու համար կարգադրեցինք հին եկեղեցույ հիման վերայ կառուցանել նոր եկեղեցի⁴⁰ և նորա կից՝ վարժարան, որոնց տեղը մի վայելուչ դիրք ունի, և գիւղացիք խոստացան Խաչի-սարի ստորոտէն վազող առուակի ջուրը վարժարանի առջևէն անցնելով բերել գիւղամէջ:

39 Հայտնի էր նաև Ղալա անվամբ: Գտնվում էր Ներքին Քարհատից մոտ 1 կմ հարավ (մանրամասն տեսնելու համար՝ Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 274):

40 Խոսքը, ըստ ամենայնի, Վերին Քարհատ գյուղի Սր. Թարգմանչաց եկեղեցու մասին է, որը կառուցվել է 1894-1895 թթ. և հիմնովին ոչնչացվել 1920-ական թթ. (տեսնելու աշխ., էջ 275):

38 Ոստայնի այն մասը, որով գործված կտավը մղվում է առաջ (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, էջ 106):



ՎԵՐԻՆ ՔԱՐՅԱՏ. գյուղը գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)



ՎԵՐԻՆ ՔԱՐՅԱՏ. կամուրջ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

Սոյն կողմի գիւղացւոց բառերու կրճատման և բարդութեան օրէնքներուն ընթերցողաց մի գաղափար տալու համար յառաջ կրերենք տեղական օրինանքները, անէծքները և մարդկանց յատուկ անունները:

Օրինանքներու վերաբերեալ: Ըմբրարև ըլլիս (ումր-արև), ճուղ (ճիւղ) տաս (գաւակ ունենաս), ճղճղնոտես (թոռներ, ծոռներ ունենաս)...

Անէծքի վերաբերեալ: Ըզըզամեռ (ազիզ մեռնի), սըրըկնամեռ (սիրեկանդ մեռնի), քըքարու գաս (քարեքար ընկնես), անջիլ-անջիլ ըլես (անջիլ-անջիլ լինես, այսինքն՝ ջիղերդ կտրուի, միստ ու ոսկորդ քրքրուի), տեղդ ծակուի դվոր ըկնես (դէպի վայր ընկնես), շան շնչեն ընկերակ տաս (շան շնչելուն, այսինքն՝ նորա կեանքին երանի տաս), մէջքիդ հուսը ծկըքէ (թերևս մէջքիդ ողն կտրուի), օրէն ծննդկանը վրէդ գայ (այնպիսի խախտառակութեան ենթարկուիս, որ նոյն ատուր ծննդկանը իր ցաւն մոռանալով՝ քեզ վերայ թամաշա գայ):

Յատուկ անուանց կրճատումն և աղաստորումն: Պետի (Պետրոս), Քիէի (Գրիգոր), Մակի (Մկրտիչ), Չատի (Խաչատուր), Մաքի (Մարգիս), Եփի (Եփրեմ), Մաքի (Մատթէոս), Թունի (Յարութիւն), Հանէս (Յովհաննէս), Մուսի (Մովսէս), Վերդի (Ալլահ-վերդի):

Ոչ տօնական անուններ: Վարդազար (մնացեալ անուանց ցուցակը կորսնցուցեր են):

Բզական անուններ: Արշալոյս, Չանի (Չանագան), Շողի (Շողակաթ), Մայեան (Մարիամ), Մաքէթ (Եղիսաբէթ), Հերիք (Հերիքնագ), Հոռի (Հոռիփսիմէ):

Ի վերջոյ գիւղացիներ մեզ յայտնեցին, որ 50 օրավարի չափ *Համասնչայ* անուանեալ սահմանի մէջտեղ վիճելի հող ունեն մոլլահասանցի պարսիկների հետ: Սոյն վիճելի հողը թէև մարմնատր իշխա-

նութեան հողաչափ յատկացուցեր է յիշեալ թուրք գիւղացւոց, բայց նոքա գիտնալով, որ իսկապէս մեր սահմանին կվերաբերի, նոքա հաւան են մեզ տալու հաշտարար դատաւորի վաւերագրութեամբ, միմիայն եթէ գանձակեցի պ. Ներսէս Տէր-Ներսէսեանցը միջնորդ հանդիսանայ երկու վիճող կողմանց մէջ, զի նա երկու կողմանց վերայ ևս ազդեցութիւն ունի: Այս բան լսելով՝ նոյն հետայն հրաւիրեցինք պ. Տէր-Ներսէսեանցին, որ անմիջապէս Թարգմանչաց վանքէն այս գիւղ եկաւ և անձնութեամբ յանձնառու եղաւ, եթէ միայն հայ գիւղացիներ կբարեհաճեն նոյն վիճելի յիսուն օրավար հողն կամ նորա կիսոյ չափ նուիրել իրենց եկեղեցւոյն:

Գիւղիս ներքև՝ հարաւակողման *Խաչ-բուլաղ* գետակի աջ ափին՝ *Խտրի կամուրջի*⁴¹ մօտ, կգտնուի մի արեւակ ջրաղացատեղի, որ հաւանութեամբ գիւղի քահանային, երեցփոխան Բաքի Ներսէսեանցի և գիւղացւոց յատկացուցենք գիւղի եկեղեցւոյն, որոյ համար յանձնառու եղան ապագայում նորոգել:

Գիւղէն մեկնելէն զկնի իմացանք, որ անցեալ 1880 թ. հարիւր փթաչափ ցորեն ունեն հաւաքած յանուն եկեղեցւոյն և նոյն ժամանակին տոկոսատուր փոխատուութեամբ բաժաներ են գիւղացւոց ոմանց վերայ, և այն օրէն մինչև ցայժմ առանց աճեցուցման թողուած է: Ուստի խոստացանք գիւղի քահանային և երեցփոխանին, որ մեզ հետ կուղեկցելին, հրաման գրել իրենց, որ գիւղի մէջէն երկու բարեպաշտ և եկեղեցասէր անձինք ընտրել տան ժողովրդեան, որպէսզի իրենց հետ ի միասին խնամա-

41 Հավանաբար համապատասխանում է Վերին Քարհատ գյուղի արևմտյան եզրին՝ Արքիմաջուր գետի վրա կառուցված միաթոփչ կամրջին (տես՝ **Կարապետյան Ս.**, Արցախի կամուրջները, Երևան, 2009, էջ 64-65):

տարութիւն անին՝ եկեղեցւոյ վերանորոգութեան հետ՝ Համաճայի վիճելի հողի յատկացուման, աներակ ջրաղացի շինութեան և յիշեալ հարիւր փութ ցորենի աճեցուման գործին համար: Անհոգատարութեան և անհետամտութեան պատճառաւ գիւղերու մէջ շատ են այսպիսի բարձի թողի եղած արդիւնքներ, որ հետզհետէ կորսուելու վրայ են:

Գիւղիս ստորոտէն անցնող *Խաչ-Բուլաղ* և *Ղօջ-ղարա* գետակներու եզերքում հարիւրաւոր հորեր փորած են ի հնումն՝ երկաթաքար հանելու:

ԺԳ

Վարդավառի տօնի ազգային ուրախութեան հանդէս

Վիճակիս բոլոր հայ գիւղացիներ նախնաւանդ սովորութիւն ունին Վարդավառի տօնին ազգային ուրախութեան հանդէս կատարել՝ ըստ նոցա պատմածին այսպէս. Վարդավառի ուրբաթ օր, գիւղի ամբողջ աղջիկներ, ի մի հաւաքուած, դուրս կուգան գիւղէն և ամէնք իրենց սրտի մէջ պահած գրգիռով կցրուին գիւղի անդաստանի վերայ, սար ու ձոր, դաշտ ու հովիտ ոտքի տակ առած, ոստումներ ընելով, ծաղկէ ծաղիկ թռչելով, բոլորեցունց հաւաքած ծաղիկները միացնելով, խաչաձև ծաղկափունջեր կկապեն իրենց գիւղի տներու որքանութեան թուով ու երեկոյին կրերեն գիւղը, մի տան մէջ կթագցնեն: Գիւղի ամուրի պատանիներ ամբողջ գիշեր հետամուտ կլինեն ծաղկափունջերու թաքստի տեղը գտնալ ու յափշտակել, քանի որ օրիորդները շաբաթ՝ արշալոյսի միջոցին, ծաղկափունջեր չեն տարեր, մի որևիցէ աղբիւրի ջրի մէջ թրջեր: Չի թրջելէն զկնի, եթէ պատանիներ գտնան էլ, այնուհետև այլևս նշանակութիւն չի ունենար նոցա յափշտակութիւնը, զի արդէն օրիորդներ յաղթանակ տարած կլինեն⁴²: Բայց ոմանք՝ պատանիներ, կպատահի, որ երբեմն, իրենց նշանած օրիորդի մատնութեամբ կիմանան ծաղկափունջերու թագատեան տեղը և կգողանան, կտանեն խորին գաղտնաժամկութեան մէջ կպահեն: Եւ որովհետև այլևս միջոց չէ մնացեր օրիորդաց՝ վերստին ծաղկափունջեր կազմելու, վասն որոյ առաջ սեղան տալով՝ գողցող պատանիներու սիրտը կսիրաշահեն՝ ծաղկափունջերը յետ ստանալու:

Նոյն օրը՝ Վարդավառի շաբաթ՝ արշալոյսին, օրիորդներ իրենց մէջէն երկու արագոտներ ընտրելով, նոցա միջոցաւ ծաղկափունջեր կուղարկեն իրաքանչիւր տան մի-մի հատ՝ ասելով. «Շնորհաւոր ըլի՛ ձեր Վարդավառը»: Տան զլխատրներն իրենց ստացած Վարդավառի նուէրն՝ խաչաձև փունջն, մի թելով քաշ կանեն իրենց տան ծածկի ճակատէն, որ պիտի մնայ մինչև յաջորդ Վարդավառին: Իսկ շաբաթ երեկոյին իրաքանչիւր գիւղեր երկու սեռի ա-

մուրիները, ջոկ-ջոկ, շաբաթ գիշեր, առանց ճրագալոյսի քանի մը քայլ իրարմէ հեռու, դէմ առ դէմ, կարգով հրապարակի վերայ նստած, «Ջան գիւլում» անուանեալ խաղը թերու (իմա՝ ծաղկաթերթ) դէմ կերգեն, մէկ սեռ միւսին նշանած ընտրելու առաջարկութեան իմաստով կամ այլ խորհրդաւոր խօսքերով: Ոմանք անոնցմէ իրենց առաջարկութեան հաւանութիւնը և ոմանք բացառութիւնը լսելով՝ ուրախութիւն կամ տրտմութիւն կպատճառեն իրարու⁴³: Մեք անձամբ ներկայ գտնուեցանք *Գետաշէն*⁴⁴ գիւղի Վարդավառի այս տօնախմբութեան:

Վարդավառի կիւրակէ աուր պատարագէն և ճաշէն զկնի, ամբողջ գիւղի երկսեռ բնակիչներ, գիւղէն դուրս գալով, առաջուց յատկացրած մի մարգագետնի վերայ կխոնուեն և նոյն տեղ կսկսեն թմբուկով, զուռնայով ազգային պար և երգ: Այս անգամ պար կկազմուի երկու սեռի ամուրիներէն, որք պատուաւոր զգեստով զարդարուած կլինեն, և հետևեալ այս կարգը կպահեն: Մի-մի պատանի և մի-մի օրիորդ իրարու ձեռք բռնած, երկու սեռէն մէկ-մէջ, շրթայաշար կպարեն և կերգեն, երկու-երեք շրջան կազմած: Բայց իւրաքանչիւր պարաշրջանի սկիզբը բռնած է մի ամուսնացած երիտասարդ և վերջն նորա կինն՝ դարձեալ նոյն «Ջան գիւլում» ազգային խաղն երգելով: Սոյն պարի երկու կողմեր շրջապատած են մնացեալ ամուսնացած այր և կին, ծեր և պառաւ, բայց արականներ մի կողմ, իգականներ նոցա հակառակ կողմը, իրարմէ զատուած կնստեն իրենց մատաղ սերունդի վերայ զուարճանալով:

Մեզ պատմեցին, թէ Փիբ և այլ գիւղացիներ սոյն Վարդավառի ազգային տօն կատարելու պարահանդէսին հաղորդ գտնուող բոլոր օրիորդները նոյն տօնի յատկացեալ համազգեստ՝ դեղին և կարմիր գոյներով կհագնեն, բոլորի վերնաշապիկ՝ դեղին, և վրայի արխալուղ՝ կարմիր: Ինչո՞ւ արդեօք յատկապէս այս երկու գոյներով համազգեստ կհագնեն. մի-գուցէ աստուածային կողմանէ Նոյ նահապետի խոստացուած հաշտութեան աղեղի գոյներէն առած և նորա յիշատակը պահպանելու սովորութիւն ըրած են, ինչպէս և Վանայ, Մշոյ հայ ժողովրդեան մէջ սովորութիւն մնացած է, որ Վարդավառի տօնի օրը ջրհեղեղի յիշատակի համար զիրար ջուրը կձգեն, իրարու վերայ ջուր նետելով՝ ջրախաղ կանեն, և նոյն նահանգաց գիւղերու օրիորդները, Վարդավառին դաշտ գնալով, սոյն ազգային ուրախութիւնը կատարելու միջոցին աղանիներ կթոցնեն և իրարու վերայ ջուր կնետեն: Ջրհեղեղէն ազատուելու համար ար-

42 «Կբացատրեն, թէ այդ արարողութիւն այն խորհուրդն ունի, որ պատկուելէն զկնի այլևս օրէն չէ իրարու նշանածը, յափշտակել կամ առևանգել» (ծնթ.՝ հեղինակի):

43 «Շատ կարևոր համարեցի սոյն հետաքրքիր ազգային խաղեր այստեղ գրի առնուլ, ընթերցողաց ճաշակ տալու, բայց լսեցի, որ արդէն բոլորն էլ հրատարակուած են» (ծնթ.՝ հեղինակի):

44 «Գետաշէն կենտրոն կհամարուի այս տօնախմբութեան, բայց տեղոյն բարեմիտ տանուտէրն 4-5 տարիէ ի վեր արգելած էր այդ իբրև անբարոյականացուցիչ միջոց, սակայն մեր խրատով վերստին սկսեցին և պիտի կատարեն ընդմիջու՝ իբրև ազգային տօն» (ծնթ.՝ հեղինակի):

դեօք յատկացեալ է Վարդավառի ազգային տօնախմբութեան ջրախաղութիւն և աղանի թոցները:

ԺԵ
Խաչակապ

Ամսոյս 26-ին Քարհատէն մեկնեցանք ի *Խաչակապ*⁴⁵ գիւղ, որ տեղական մարմնատր իշխանութիւն, թուրքերի յորջորջումէն առնելով, *Ղուշչի*⁴⁶ կանուանէ: Գիւղս Խաչակապ անուն ստացեր է հետեւեալ աւանդութենէն, ինչպէս գիւղացիք պատմեցին:

Այս կողմեր քրիստոնէութիւն քարոզուած ժամանակին շրջակայ գիւղօրայք ընդուներ են այս նոր կրօն, իսկ խաչակապցոց համար անկարելի եղած է քրիստոնէական կրօն ընդունել տալ, որովհետև կաղնիի ծառեր կպաշտեն եղեր: Ուստի քարոզիչներ իւրաքանչիւր պաշտելի կաղնի ծառերու ներքև խաչեր են կանգնեցուցեր: Նոյնպէս կանգնեցուցեր են և գիւղիս շրջապատող բազմաթիւ բլուրներու և բարձունքների կատարներու վերայ, որք և մինչև ցայսօր կմնան և այսու հնարիմացութեամբ հետըզհետէ կաղնիապաշտութեան փոխարէն խաչապաշտութիւն մտեր է խաչերու շրջակապութեամբ, որոյ համար և այս գիւղս ստացեր է *Խաչակապ* անունը⁴⁷: Եւ արդարև, Քարհատից այս գիւղն գալու ճանապարհի վերայ ընկած երկու մեծ խաչաքարեր տեսանք, նոյնպէս և զանազան բլուրների գլխին և գիւղիս ճանապարհին կից փոքրիկ կաղնիի ներքև քանի մը պատկած մեծ-մեծ խաչաքարեր կգտնուէին, որք կպաշտուեն գիւղացիներէն⁴⁸: Սոյն փոքրիկ կաղնիի մոտ տակաւին կգտնուէր ասկէ երեք տարի առաջ մեր նախնեաց բազմադարեան պաշտելի ամբարձուղէ ստուարաստեղ և մեծ կաղնին, բայց ափսոս, որ 1887 թ. արմատական արեր է Ներսէս Տէր-Ներսէսեանցն և այդ հսկայ ծառէն շատ ատաղձներ պատրաստեր է Թարգմանչաց վանքի պիտոյից համար: Ծառ տ ցանկալի էր մեր նախնեաց այդ պատկառելի շատուած ցայսօր կանգուն մնացած տեսնել: Սոյն փոքրիկ կաղնին մեծ կաղնիի յաջորդական սերունդ և նորա դիւցազնական որդին լինելու յատկութիւններ պահեր է, նորա



ԽԱՉԱԿԱՊ. հատված գյուղից (լուս.՝ Գ. Բաղասյանի, 1980-ական թթ.)

ուղղածիզ և բարձրաբերձ բնոյ վերայ կհովանաւորի ուրջ և պերճ և բլուրշի, սաղարդախիտ և տերևալից գլուխն, որով մարդու աչքն կգրաւէ իւր սիրուն ու կանաչազարդ գեղեցկութեան վերայ, տեսնող անցորդի աչքին կներկայանայ որպէս մի արհեստաւորեալ հովանոց, որ ոչ սակաւ մխիթարութիւն է մեզ իւր կործանեալ հօրն փոխարինելովն:

Թարգմանչաց վանքը, որ կգտնուի գիւղիս հիւսիսակողմ՝ մէկուկէս վերստ հեռաւորութեան վերայ, գուցէ ի հնումն մեր հարց պաշտած կոռց տաճարատեղն եղած լինի, զի վանքի հիւսիսակողման տափարակի վրայ կգտնուեն այլատեսակ բազմաթիւ *դամբարաններ*, որոնց միջէն վանահայր արժ. Թէոդորոս վարդապետի և խնամակալ Տէր-Ներսէսեանցի փորելով գտնուէր են դամբարանների մէջ հողէ ամաններ՝ լի աճիւնով, երկաթեայ բետոնէր և ընկուզի չափ մեծութեամբ անկիւնաւոր երկաթեայ գնդակներ:

Խաչակապ գիւղին Ղուշչի անուն կուտան թուրքեր այն պատճառաւ, որ գիւղիս բնակիչները իրենց սահմանի մէջ գտնուած բազմաթիւ բազէներ հարկ եղած ժամանակը բռներ, նուիրեր են գաւառապետ խանին և փոխարէն խան տուէր է գիւղացոց հարկից ազատման հրովարտակ: Յիշեալ հրովարտակի պատճէնը մինչև ցայսօր կգտնուի գիւղիս բնակիչ Յակովբ Ղուլիեանցի մօտ:

Գիւղս կբաղկանայ 114 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 676 արական, 637 իգական: Ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին⁴⁹ անունով, և երկու քահանայ:

Այն ինչ վիճակիս ամբողջ հայ գիւղօրէից ոչ միայն մէջ վարժարան չգտնուած ժամանակ գիւղս ունեցեր է, իբրև հայելի օրինակ, մի վարժարան⁵⁰, որոյ մէջ կուսանէին հայ տղաքներ և աղջիկներ, և այդ գրագէտ աղջիկներէն այժմ կգտնուին բազմաթիւ հարսներ, զորս կթուէր արժ. Թէոդորոս վարդա-

45 Գտնվում է Դաշկեսան շրջկենտրոնից 4 կմ հյուսիս՝ Արքիւնաջուր գետի ձախ վտակներից մեկի հովտում (Ճ. մ. բարձր է 1090-1230 մ):

46 Գյուղի՝ Ղուշչի անվան ծագման վերաբերյալ տես **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, «Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, էջ 313-314:

47 «Գիւղիս բնակիչներ, իրենց մտքի մէջ դրած առաջադրութեան, յաջողութեան և անյաջողութեան փորձելու համար շորս փոքրիկ քարեր ձեռքերնին առած, երեսնին խաչակնքելով, կձգեն փոքր կաղնիի տակի խաչաքարի վերայ: Եթէ խաչաձև ընկան քարերն, յաջողութեան նշան համարելով՝ իրենց մտադրեալ գործին կձեռնարկեն կամ ճանապարհ կերթան, սպա թէ ոչ, յետ կկենան մտադրութենէն» (ծնթ.՝ հեղինակի):

48 Գյուղի՝ Խաչակապ անվան ծագման վերաբերյալ տես **Լալայեան Ե.**, Գանձակի գաւառ, «Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, էջ 313: «Նոր-Դար», 1886, № 65, 6 մայիսի, էջ 1:

49 Սր. Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել էր 1650 թ., 1988 թ. տակավին կանգուն էր (**Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 215):

50 Հայտնի է, որ 1876 թ. գյուղում գործել է օրիորդաց դպրոց (**Եպիսկոպոսեանց Մ.**, Գանձակ, «Մեղու Հայաստանի», 1876, № 40, 16 հոկտեմբերի, էջ 3):



ԽԱՉԱԿԱՊՊ. Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Դ. Ջաքարյանի, 1980-ական թթ.)

պետ հոգեհրճուանքի պարծանօք եւ ասպացոյց այս հոգեհրճուանաց՝ պատմեց յիշեալ վարդապետ, թէ երբ հանգուցեալ Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց⁵¹, գիղս այցելելով, մտաւ եկեղեցին, երկրր-պագութեան աղօթք կատարեց, տղայոց երգեցիկ խումբը, նորա առջևից երգելով, դուրս բերեց, ուր պատրաստ կեցած օրիորդաց երգեցիկ խումբը, երբ յանկարծ նոյն երգի երկրորդ տունը երգեց, Մուշեղեանցը սքանչացած կանգ առաւ, օրհնեց զանոնք և բարեմաղթեց վարժարանի յարատևութիւնը: Բայց ափսոս, որ ընդհանուր վարժարանաց փակմանէն զկնի, գիղիս վարժարան այլևս չէ վերականգնե՞ր լինելով առաջինն յետին: Չի վիճակիս ուրիշ քանի մը գիղօրէից մէջ այժմ վարժարաններ կ'գտնուին: Գիղիս այս դժբախտութեան զգեստ փոխարկելու համար, մենք յորդոր կարդացինք քահանայից, երեցփոխանին և ժողովրդեան, որ առաջիկայ կալուցէն սկսեալ յանուն վարժարանի կալի մաս հաւաքեն՝ իրենց որդւոց և աղջկանց հոգեկան նոր զգեստ և կերակուր պատրաստելու համար նոր միջոցներ ձեռք առնելով:

Գիղիս ճարտար երկաթագործներ Ջաւատ խանի պատերազմի ժամանակ հրացաններ շինե՞ր են, որ ցայսօր ժամանակի կ'գտնուեն գիղիս մէջ: Նոյն միջոցին գիղիս բնակիչ Մելիք-Մովսէսը Յիցեանօվի պատերազմի ժամանակ թնդանօթ էլ է շինե՞ր, որոյ համար մելիքութիւն ստացե՞ր է Ջաւադ խանէն:

Գիղիս հիւսիսակողմ՝ 3 վերստ հեռաւորութեամբ և Թարգմանչաց վանքի հիւսիսարևելեան կողմէն 1 1/2 վերստ հեռաւորութեամբ, կ'գտնուի Շատախ անունով աւերակ գիղատեղին⁵², որ նշանակեցինք որպէս միջանկեալ, զի գուցէ օր մը լոյս կուտայ պատմաբաններուն:

Այս կողման գիղացիներէն շատերն իրենց անասնեղէնները գիղէն հեռու՝ գոմերու մէջ կ'պահեն, որոյ համար բաւական մաքրութիւն կ'տեսնուի գիղերու մէջ, հակառակ տեղական այլ գիղերու և Շիրակայ գիղաբնակչաց, որք խիստ աղտոտ են, զի սովորութիւն չեն ըրած անասնոց կուերը (տաւարեղենաց աղբ) փոխադրել՝ արտեր պարարտեցնելու, իսկ Վանայ, Մշոյ և այն կողմանց այլ գաւառցիներ սովորութիւն ունեն գիղամիջի կուեր, թրիքներ (գրաստուոց աղբ), սպըտուր (կտտուր-դիւսարաց աղբ) թոնիրներու մէջ վառուած փքրի և աքարի մոխրի հետ մոտակայ արտեր տանել պարարտեցնել: Այդպիսի արտերը «աղբին» կ'կոչուեն: Իսկ այս կողման գիղացիները այդ պարարտացուցիչ «սուկերեր» սովորութիւն չունեն: Առ այս մենք յորդոր կարդացինք և աղբի օգտաւէտութիւնը բացատրեցինք:

ԺՉ

Միրզիկ

Ամսոյս 28-ին Խաչակապէն մեկնեցանք Միրզիկ⁵³ անուն գոտ հայաբնակ գիղը, որ կ'բաղկանայ 71 տանէ՝ 339 արական, 264 իգական: Ունի Ս. Գարրիէլ անունով հին և ամրաշէն եկեղեցի⁵⁴ և մի քահանայ՝ հիւրասէր տէր Ներսէս Տէր-Յարութիւնեան⁵⁵: Չունի ուսումնարան:

Գիղս կ'գտնուի Չիլքերծ⁵⁶ անուանեալ սարի պորտան վերայ, որ մի գոգաւոր դիրք է և իւր հանդիպակաց բաց կողմէն կ'նայէ դէպի հիւսիս Գանձակ քաղաքի վրայ: Ունի պտղատու և մշակեալ պարտէզներ և հնդեղենաց բահէզներ, ըստ վանեցւոց՝ բախտէ: Բահէզ կ'կոչուի երկրագործի մշակած հողի այն մասը, որ բազում առուններ և թումբեր մէջ մէջ իրարու կողքի կ'շինեն և թումբերու կողքին կ'տնկեն, վանեցիներ՝ վարունկ, սեխ, ձմերուկ և այլն, իսկ այս կողմի բահէզներու մէջ կ'տնկեն լոպիս և այլ հնդեղեններ:

Սոյն բահէզ բառը կարդացե՞ր են Անոյ եկեղեցեաց արձանագրութեան մէջ, ուրեմն հայերեն է, թէպէտև հայկական բառարանի մէջ չկայ: Շատերին պէս և մենք շատ այսպիսի հայերէն բառեր ժողոված ունենք, որ հայկական բառարանի մէջ չեն գտնուիր, և որպիսիքն ցայսօր ժամանակի լոյս արև տեսած չեն:

Գիղիս հարաւակողման ձորի մէջ՝ մի վերստ հեռաւորութեամբ, ըստ տեղացւոց, *Քարխանայ* անու-

51 Գրիգոր Մուշեղյանցը (1835-1882, Ուրմիա) Գանձակի հայոց թեմի փոխանորդ է հիշվում 1860-1864 թթ. («Արարատ», 1882, ԺԲ, էջ 562: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 13: Նույնի՝ Սալմաստ, Երևան, 2017, էջ 84):

52 Գտնվում է Խաչակապ-Հարցհանգիստ գյուղերի միջև: Գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշվում է 1621 թ. (մանրամասն տես՝ նույնի՝ Հյուսիսային Արցախ, էջ 249-250):

53 Գտնվում է Խանլար շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք՝ Գանձակ գետի ձախափնյա վտակների միջև ընկած սարահարթի վրա (ծ. մ. բարձր է 1000-1160 մ):

54 Ըստ շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1674 թ. և նորոգվել 1910 թ.: Մինչև բռնագաղթը կանգուն էր (նշվ. աշխ., էջ 396-398):

55 Ներսէս Տէր-Հարությունյանը քահանա է ձեռնադրվել 1871 թ.: 69-ամյա քահանան հիշվում է նաև 1894 թ. (ՀԱԳ, ֆ. 56, գ. 1, գ. 8889, թ. 320 շրջ.-321):

56 Հայտնի էր նաև *Ճիլքերծ* կամ *Ճգնավորի քերծ* անուններով (նշվ. աշխ., էջ 398):



ՄԻՐՁԻԿ. գյուղը հարավից և Սբ. Գաբրիել եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)



ՄԻՐՁԻԿ. Քարհանի վանքի եկեղեցու մուտքը՝ միտումնավոր ավերված ազերիների կողմից (լուս.՝ Ֆ. Բերլենոնի, 2007 թ.)

ՄԻՐՁԻԿ. Քարհանի վանքն արևելքից և Սարգիս վարդապետի գերեզմանը՝ պղծված ազերիների կողմից (լուս.՝ Ֆ. Բերլենոնի, 2007 թ.)

նով մի փոքրիկ վանք⁵⁷ կգտնուի, որ տասնևհինգ տարի է ի վեր անմարդաբնակ եղած է, խուցեր իսպառ քայքայուած են, և վանքը կգտնուի անխնամ դրութեան մէջ: Վերջին վանահայր՝ մակարոնացեալ Քեանդագիրմագ Սարգիս վարդապետ⁵⁸, վախճանելու օրերը վանքի բոլոր սպասներ, հանդերձեղէններ, գրքեր և տնային կահկարասիքներ (անասնեղէններ չէ ունեցեր) անհետացեր են: Տաճարայինները գիտական կարօտ եկեղեցեաց վրայ բաժաներ են, իսկ տնտեսականներ ծախելով՝ վերջի վանահօրն թաղման ծախք են հոգացեր: Սոյնպիսի կարգադրութիւնը առիթ տուած է վանքի անմարդաբնակութեան և կալուածոց կորստեան: Գանձակու հոգ. կառավարութիւն թէպէտ և ի 16 մարտի 1887 ամի N 198 գրութեամբ խնամակալ կարգեր է վանքին վերայ միրգիկեցի տիրացու Միքայէլ Տէր-Սկրտչեանն, ցտնօրէնութիւն կօնսիստօրիային հայոց Տփլիսոյ, ցայժմ առանց տնօրէնութեան կմնայ: Բայց նա անկարող է եղել վանքապատկան անտառին տիրապետել, կալուածագիր չունենալու համար, իսկ իր

վերջին յոյսը դրեր էր գիւղական ժողովրդեան վկայութեան վերայ, որք իրենց օգուտն ի նկատի ունենալով, թոյլ և անփաստ վկայութիւն տուած են, որ ինքեանք անտառին տիրապետեն: Սակայն այնուհետև ո՛չ վանքին բաժին հասած է և ո՛չ ժողովրդեան, այլ յարքունիս գրաւուած: Յիշեալ խնամակալ ձեռնարկեր է ցանկապատել թէ՛ պարտեզատեղին և թէ՛ քանի մը փոքրիկ արտեր, բայց ժողովրդականք այդ ձեռնարկութիւն ևս խափաներ են: Խնամակալն այժմ տէր է մնացել միայն 17 ընկուզենի ծառերուն: Ահա թէ վանքեր ինչպէս հետզհետէ կաւերուեն, որով և նոցա կալուածներ կանհետանան:

ԺԷ Ոսկանապատ

Ամսոյս 30-ին մեկնելով Միրգիկ գիւղէն և մի ժամի չափ ճանապարհելով՝ այցելեցինք Ոսկանապատ⁵⁹ գիւղը, որ կգտնուի համանուն գետակի⁶⁰ ձախ ափի վերայ:

57 Գտնվում է Միրգիկից 2 կմ հարավ՝ Ընապատ գյուղատեղիում: Հիմնադրվել է ԺԶ-ԺԷ դարերում (մանրամասն տեսնշվ. աշխ., էջ 398-401):
58 Քյանդագիրմագ Սարգիս վարդապետ Տփղիսեցին վախճանվել է 1877 թ.: 96 տարեկանում և ամփոփվել վանքի արևելյան կողմում (տապանագիրը տես Բարխուդարյանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 277: Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 401):

59 Գտնվում է Խանլար շրջկենտրոնից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Արթինաջուր գետի աջ ափին (ծ. մ. բարձր է 700-740 մ):
60 «Գետակիս մէջ կգտնուի 3 տեսակ ձուկ՝ բաւական առատութեամբ կարմրախայտ, մուրձա, բելլու (ընչացքով ունեցող)» (ծնթ.՝ հեղինակի):



ՈՍԿԱՆԱՊԱՏ. գյուղը հարավից (լուս.՝ Գ. Զաքարյանի, 1980-ական թթ.)



ՈՍԿԱՆԱՊԱՏ. Սբ. Դավոթ եկեղեցին հյուսիսից (լուս.՝ Ֆ. Բերլենդնի, 2007 թ.)

Գիւղս կրթականայ 114 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 394 արական, 264 իգական: Ունի Ս. Յակովբ անունով մի հին, ամրաշէն և բաւական մեծ եկեղեցի⁶¹, որ կառուցուած է գիւղի արևմտեան՝ առիկող բարձրացած մի քարափի գլխին, ընդ ակամբ ունենալով գետափանց պտղատու ծառաստաններ, պարտեզներ և հանդիպակաց առապար, դալարագեղ անտառ: Գետի խոխոջուն սահանքի ձայն կիսառնուի եկեղեցւոյ պաշտօնէից Աստուածապաշտութեան ալելուաների մրմունջներու հետ: Առանց վարժարանաշինութեան մի վարձեալ տան մէջը մասնաւոր ուսուցչութիւն կկատարուի քառասնաչափ ուսանողաց համար, ժամասացութիւն և պատարագի դպրութիւն սովորեցնելով, աստուածասեր ժողովրդեան բարեպաշտական խանդն ու եռանդ գոհացնելու: Տեսնելով մեր, որ ուսուցիչ կվարձատրուի միմիայն ուսանողաց թոշակատուութեամբ, և որովհետև թոշակ տալու անձեռնհաս աղքատաց զաւակներ ուսմունքէն կզրկուին, երկրորդ ատր պատարագամիջոցին քարոզով յորդորեցինք և հրաւեր կարդացինք ժողովրդեան մի մասնաւոր հոգաբարձութիւն ընտրելու, որպէս զի նոցա ձեռքով վարժարանի շարունակութեան, կանոնատրութեան և յարատևութեան միջոցներ պատրաստուի:

Եկեղեցւոյ հարաւակողման ծործորակի մէջ՝ գետի ձախ ափին, կգտնուի Ս. Աստուածածին անունով մի մեծ մատուռ, որուն տեղական ժողովուրդք

Անապատ կանուանեն⁶²: Սորա դէմ առ դէմ՝ գետի միւս եզերքը՝ աջ ափին, կգտնուի Ս. Սարգիս անունով մի փոքրիկ մատուռ⁶³: Սոյն երկոքին մատուռներուն երբեմն սակաւաթիւ ուխտաւորներ կյաճախեն և մատաղ կանեն ոչ ուխտատեղերու առաջ, այլ Ս. Սարգսի մատուռից 60 կանգնաչափ հեռու՝ մեծ թրղկի ծառի տակի խաչի մօտ:

Գիւղիցս 4 վերստաչափ հեռու՝ արևելեան կողմ, գետակի ձախ կողմին դժուարամատչելի առապարին վրայ, կգտնուի մի ամբոց⁶⁴՝ հզօրացուցած և ամրացուցած մարտկոցներով (բուրգեր), որոյ բոլորտիք հազարաւոր բնակավայրերու փլատակներ կգտնուեն, որուն տեղացիք քաղաք կանուանեն: Քաղաքի միջնաբերդի մէջ կգտնուի երկյարկանի մի եկեղեցի, որոյ ստորին յարկի մէջ կատարուել է աստուածապաշտութեան օրհներգութիւնը, իսկ վերնայարկին վրայէն՝ արտաքին թշնամու դէմ պաշտպանողական պատերազմ:

Գիւղիս բնակչաց մէջ գտնուած արհեստներն են՝ դարբնութիւն, հիւսնութիւն, տակառագործութիւն, որմնադրութիւն, դերձակութիւն և ներկարարութիւն: Կանայք կգործեն գորգ, կապերտ ու շալեր իրենց մարդկանց ու որդոց համար:

Սոյն գետակի եզերքում ի հնումն գտնուել է երկաթի հանքեր և հալոցներ, որոնք այժմ դադարել են: Չնայելով որ գիւղս Գանձակից բաւական բարձր է, բայց նորա դրից ծունկերու վերայ կգտնուի խաղողի սորիկ որթերու այգիներ և զանազան մրգաստաններ: Գիւղիս եկեղեցին ունի երկու հատ

61 Գտնվում է Ոսկանապատի հարավային բարձրադիր եզրին: Հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Ըստ կառուցողական առանձնահատկությունների՝ կարելի է թվագրել ԺԷ դարի երկրորդ կեսով: Եկեղեցին «...ունի ողջ Արցախում լայն տարածում գտած միանավ թաղածածկ բազիլիկ հորինվածք, սակայն մի էական առանձնահատկության շնորհիվ ներկայանում է իբրև ճարտարապետական եզակի լուծում ունեցող հուշարձան: Հարցն այն է, որ մնանատիպ բոլոր կառույցներում երկթեք ծածկի տակ առնված թաղը պահում են 1 կամ 2, իսկ առավելագույնը՝ 3 գույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները, իսկ Սբ. Հակոբն ունի 4 գույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարներ» (Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 414):

62 Կուսանաց Սբ. Աստվածածին անապատը գտնվում է Ոսկանապատի հարավային եզրին՝ ձորի մէջ՝ գետի ձախ ափին: Գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշվում է 1684 թ. (նշվ. աշխ., էջ 415-416):

63 Սբ. Սարգիս (Սբ. Վարդանանց) եկեղեցին կառուցված էր Կուսանաց Սբ. Աստվածածին անապատի դէմ հանդիման գետի աջ ափին: Ըստ ամենայնի, ԺԷ դարի կառույց է: Մինչև 1989 թ. մարտյան բռնազաղթը կանգուն էր (նշվ. աշխ., էջ 416-417):

64 Ամբոցի համառոտ նկարագրությունը տես Բարխուտայան Ս., նշվ. աշխ., էջ 303-304:



ՈՍՎԱՆԱՊԱՏ. Սբ. Աստվածածին անապատն արևելքից (լուս.՝ Ֆ. Բերլենդնի, 2007 թ.)



ՈՍՎԱՆԱՊԱՏ. Սբ. Սարգիս եկեղեցին արևմուտքից և մեծ թխկի ծառի տակի խաչքարը (լուս.՝ Դ. Զաքարյանի, 1980-ական թթ.)

ձեռագիր անտարաններ, որոնց մին գրուած է ՉՉ (1331) հայոց թուականին⁶⁵:

Ստուգեցինք այժմ, որ վեց տարի առաջ 618 թուրլի ստորագրուած են գիւղիս բնակիչներ և գանձակեցիներ՝ յանուն ուսումնարանի դրամագլուխ կազմելու, որից 118 թուրլին պատրաստ է, իսկ մնացեալն ապառիկ: Բայց մինչև ցայսօր ժամանակի յիշեալ գումարն առանց հաւաքման մնացել է: Վասն որոյ Գանձակ քաղաքից ամեն տարի այս գիւղն ամարանոց եկող պ. Մէժլում բէգ Մելիք-Շահնագարեանց, մահտեսի աղա Վարդանեանց, գիւղիս բնակիչ Յարութիւն Աղաջանեանց, Յարութիւն Մամիկոնեանց և Պօղոս Առտամեանց ընտրուեցան գիւղիս հասարակութենէն վերոյգրեալ գումարն հաւաքելու, որ վարժարանի դրամագլուխ կազմելոյ համար շահով տան և աճեցնեն: Նաև ընտրեալ վերջին երեքին գիւղացիներ յանձնառու եղան ամեն տարի կալոցին կալեմաս հաւաքել վարժարանի դասաւանդելու գործի շարունակութեան համար և միանգամայն հոգ տանեն նոր վարժարան կառուցանելու՝ առանց դրամագլխին ձեռնամուխ լինելու: Նոյնպէս կարգադրեցինք, որ եկեղեցոյ ունեցած 630 թուրլի գումարի շահն վարժարան կառավարելու գործ ածեն:

Գիւղիս հարաւակողման սարի կատարին վերայ շինուած էր երբեմն յանուն Պանտալիոն բժշկի փոքրիկ մատուռ, որն որ վերջին անցեալ տարիներու մէջը մեծցուցեր և նորոգեր է գանձակեցի հանգուցեալ Սարգիս քահանայ Տէր-Ազարեանցն՝ ի յի-

շատակ իւր վաղամեռիկ Սկրտիչ որդոյ⁶⁶: Սոյն հռչակաւոր ուխտատէղին կյանախեն գրեթէ ամառնային ամեն կիւրակէ օրեր գանձակեցիներ ու նորա շրջակայ հայ գիւղացիներ, և փորձանքի պատահած թուրքերն անգամ նոյն ուխտատէղին կյանախեն իրենց «մուրազն» առնելու: Իսկ Աստուածածնայ վերափոխման տօնի օրն այնչափ բազմութեամբ հայ ուխտատուներ կգտնուին այնտեղ, որ ամեն տարի նոյն օրը մորթուած մատաղից 300-ի չափ մորթի կվերցնէ կապալառու քահանան: Սոյն ուխտատէղոյ կապալադրամ, որ տարին 70-100 մանէք կլինի, յատկացուցած են Գետաշէն գիւղի հայոց եկեղեցական ծխական ուսումնարանին:

ԺԸ

Մելիք-Շահնագարեանց տոհմի ճիւղագրութիւն

Ոսկանապատ գիւղի մէջ ծնած են Մելիք-Շահնագարեանցի⁶⁷ ներկայ սերունդ՝ 4 եղբարք՝ որդիք

65 Առաջին ձեռագիրը Թորոս փիլիսոփայի՝ Գրագարկում ընդօրինակած մագաղաթյա Ավետարանն էր (ԺԳ դ., 1331 թվականին ստացել էր Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճը), որը ոսկանապատի ոմն Հովհաննես հետագայում գնել էր՝ ի հիշատակ ծնողների: Երկրորդը 1463 թ. Մոկսի Փեսավանք անապատում Իսրայել գրչի ընդօրինակած թղթյա Ավետարանն էր, որը 1684 թ. Սարգսի որդի խոջա Պատին նվիրել էր Ոսկանապատի Կուսանց Սբ. Աստվածածին անապատին (Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 273-274: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, Երևան, 2020, էջ 98-99: Միմասյան Թ., նշվ. աշխ., էջ 78):

66 Սբ. Պանդալիոն (Պանդ, Պանդավանք) մատուռը գտնվում է Ազատ գյուղից 5,5 կմ հարավ-արևմուտք՝ Պանդ լեռան գագաթին: Ըստ շինարարական արձանագրության՝ կառուցել է գանձակեցի Սարգիս քահանա Տեր-Ազարյանցը: Նորոգվել է 1896 թ. Մամիկոն Հովհաննիսյան Տեր-Սարգսյան Տեր-Ազարյանցի ջանքերով (Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 396-416):

67 Ոսկանապատի մելիքության մասին մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 407-408:



Սբ. Պանդակիոն ճատուռը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.) և միտումնավոր վնասված վիճակով հյուսիս-արևմուտքից (լուս.՝ ադրբեջանական կայքէջերից, 2015 թ.)

Նարիման բեգի՝ Մեծյուն բեգ, Ջհան բեգ, Ջալադ բեգ և հանգուցեալ Եսայի բեգ, որոյ որդին այժմ Եսայի բեգ կանուանեն: Սոցա մնացեալ երեք եղբարք այժմ կրնակին Գանձակ քաղաքում և քաղաքական իշխանութեան մէջ զանազան պաշտօններ կվարեն: Սոքա ունեն իրանց նախահար Մելիք-Նազար Շահնազարեանի տիտղոսի ստացման վաւերական հրովարտակ՝ ստացեալ պարսից թագաւոր Ա. Շահ-Աբասից, իր արած հաւատարիմ ծառայութեան և քաջագործութեան համար: Յիշեալ իսկական հրովարտակն այժմ կգտնուի տիրող իշխանութեան սենատի արխիւի մէջ, և նորա վաւերացեալ օրինակն՝ ներկայ սերունդի ձեռքին: Յիշեալ Մելիք Նազարին տեղը յաջորդեր է Մելիք Յովսէփ: Նորան յաջորդեր է Մելիք Եարիմ, նորան յաջորդեր է Մելիք Ուսուր, նորան յաջորդեր է Մելիք Գաբրիէլ: Սա ունեցեր է երկու որդի՝ Մելիք Ուսուր և Մելիք Քօչար: Մելիք Ուսուր ունեցեր է 2 որդի՝ Մելիք Եարի և Մելիք Բէգլար: Մելիք Եարի ունեցեր է 3 որդի՝ Աղա բեգ, Յովսէփ բեգ և Նազար բեգ: Սա՝ Նազար բեգ, ունեցեր է երեք որդի՝ հանգուցեալ Ուսուր բեգ և այժմ կենդանի Ասլան բեգ և Աղա բեգ: Վերոյգրեալ երկրորդ ճիւղ՝ Մելիք-Բէգլար Մելիք Ուսուրեան, ունեցեր է երեք որդի՝ Յովհաննէս բեգ, Շամիր բեգ և Ամիրխան բեգ: Յիշեալ Յովհաննէս բեգ վախճանուեր է Շուշի գաւառի Հաղորոք գիւղի մէջ և ունի այժմ այնտեղ կենդանի որդիներ: Սորա եղբայր Շամիր բեգ վախճանուեր է Ոսկանապատ գիւղիս մէջ և ունի այժմ կենդանի երեք որդի՝ Բէգլար, Ամիրխան և Լևոն բեգեր:

Վերոյգրեալ Մելիք Քօչար՝ կրտսեր որդի Մելիք Գաբրիէլի, ունեցեր է 3 որդի՝ Նարիման բեգ, Հաթան բեգ և Առստան բեգ: Նարիման բեգ Մելիք-Քօչարեան ունի այժմ երեք որդի՝ Մէջլում բեգ, Ջահան բեգ և Ջալալ բեգ:

Հաթան բեգ Մելիք-Քօչարեան ունի այժմ կենդանի 2 որդի՝ Ջալալ բեգ և Սուրբան բեգ: Առստան բեգ Մելիք-Քօչարեան ունի այժմ կենդանի երկու որդի՝ Միխայէլ բեգ և Իլիկօ բեգ: Սոյն ազգաբնա-

կութեան նախահար Մելիք Նազարէն սկսեալ մինչև Մելիք Ուսուր և Մելիք Քօչար Մելիք-Գաբրիէլեան յաջորդաբար ունեցեր են պարսկական շահերէն իրենց հաւատարիմ ծառայութեան և քաջագործութեան համար հրովարտակներ և վաւերական թղթեր: Իսկ ռուսաց տիրապետութեան ժամանակ նրանց ազնւատոհմութեան արտօնութիւններ և տիտղոսներ դադարեր են: Թէպէտ վերջի երկուսն՝ Մելիք Ուսուր և Մելիք Քօչար, ունեցած են իրենց քաջագործութեան համար առանձին վկայաթղթեր ռուսական իշխանութիւնէն ու պարզներ, բայց միմիայն աստիճանաւորներու համար սովորական դառած բեգ տիտղոսն կկրեն:

Մենք այս ազգաբնութիւն օրինակեցինք սոյն տոհմի ճիւղագրութեան համար գծագրեալ ծառաճիւղ պատկերէն, որ կգտնուի Նարիման Բէգեան Մէջլում բեգի ձեռքին: Սոյն ազգաբնութեան գրեալ թէև մեր նպատակէն դուրս էր, բայց արձանագրեցինք միայն այն պատճառաւ, որ ինչպէս կհաստատեն, սոյն մեկիքութիւնը Խամսայի մեկիքութեան ճիւղ կկազմէ:

ԺԹ

Մուռուտ

Յուլիս ամսոյ 2-ին թողնելով Ոսկանապատ գիւղը՝ այցելեցինք Մուռուտ⁶⁸ գիւղը, որտեղ հիւրասիրեց մեզ զանձակեցի պ. Պետրոս Նանասեանցը: Մոռ (մալինա, մորենի) ծառեր անտառի մէջ յաճախ լինելու համար թերևս գիւղիս անուն կնքուած է Մուռուտ⁶⁹: Գիւղս կբաղկանայ 34 տուն գուտ հայ բնակիչներէ՝ 131 արական, 107 իգական: Ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին անուամբ՝ նորոգուած ար-

68 Գտնվում է Խամլար շրջկենտրոնից 8 կմ հարավ՝ Պանդ լեռան հյուսիսային անտառապատ լանջին (ծ. ս. բարձր է 1190-1310 մ):

69 Գյուղանվան նույն բացատրությունն է տրվել նաև 1886 թ. (Քաջիկեան, Գանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 20, 18 փետրվարի, էջ 294):



ՄՈՒՌՈՒՏ. Սբ. Աստվածածին եկեղեցին արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

դեամբ գանձակեցի մահտեսի Քերովբե Տեր-Մարտիրոսեանի 1881 թ.⁷⁰, որուն մէջ կգտնուի մագաղաթի վրայ բոլորագիր ձեռագրութեամբ Աւետարան, չունի թուական և մի ձեռագիր Յայսմատուրք՝ հասարակ թղթի վրայ գրած, առանց թուականի:

Գիւղս չունի ուսումնարան և ոչ մասնաւոր ուսանողներ՝ ո՛չ գիւղիս մէջ և ո՛չ այլ տեղեր ուղարկուած գէթ մի որևիցէ կոչման համար պատրաստելու:

Գիւղս կգտնուի իւր արևելեան Սարիեալ անուանեալ լեռան կուրծքի վրայ, որոյ հօրիզօնն ընդարձակ, օդն զով, ջինջ և աղբիւրն վճիտ լինելու համար ամէն տարի ամառնային ամիսներու մէջ գանձակեցի բազմաթիւ հայեր տեղւոյն տօթից դժուարաշունչ եղած՝ այստեղ կդիմեն զովարար օղջնչելու և դիւրաշունչ լինելու:

Եկեղեցւոյն արևմտակողմն՝ Ոսկանապատէն ի գիւղս բերող ճանապարհին կից մեծ կաղնիի ներքև, կգտնուի վարագուրեալ խաչակիր պատուհան՝ ուխտատեղի *Նահատակ* անուանեալ, որուն առջև կվառեն և կծխեն ուխտաւորք իրենց նուիրաբերած խունկն ու մոմ: Մերձ սորան կգտնուի երեք փողով բղխող զովարար և պատուական ջուր: Նահատակ անուանեալ խաչակիր պատուհանին և երեքփողեան աղբիւրին կհովանաւորէ յիշատակեալ մեծ կաղնին, որոյ ստորին ճիւղերուն վրայ կկապուին ուխտաւորաց բազմերանգ հագուստի ծուլեմածուն շորակտորներ՝ ցաւափարատ լինելու յուսով:

Վերոյգրեալ ճանապարհի վրայ՝ մի փոքր հեռու, տոյն ուխտատեղէն կգտնուի արիւն ծծող տզրուկներու տղմուտ լճակը:

Գիւղիս հիւսիսակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, կգտնուի *Քամախաչ* անուանեալ բլուրը, որոյ հարթ, հաւասար և ընդարձակ գլխի վրայ, իրարմէ հեռու տնկուած եօթն խաչքարերուն *Եօթնօճախ* և *Նահատակ* կանուանեն տեղացիներ: Ուխ-



ՄՈՒՌՈՒՏ. Նահատակ ուխտատեղիի աղբյուրը (լուս.՝ արխիվային, Ի դարի սկիզբ)

տաւորներ իրենց նուիրաբերած խունկ ու մոմով և երկրպագութեամբ ուխտադրութիւն կատարելէն զկնի, տեղւոյն հովանաւորող կաղնիներուն ներքև կգբօսնուն և կուրախանան կերուխումով և պարելով: Սոյն Քամախաչ անուանեալ բարձրավանդակի հիւսիսային կողմէն սքանչելի տեսարան կներկայացնեն՝ ի հեռուստ Գանձակը իւր սաղարթախիտ այգիներով և Կուր գետ իւր ոլոր-մոլոր ընթացից ափունքներու կանաչաթոյր թփերով:

Գիւղացիներու մէջ կգտնուեն արհեստներ՝ դարբնութիւն, հիւսնութիւն, բրտութիւն, ասոնցմէ ի զատ գիւղիս բնակչաց կողմանէ ոչինչ մխիթարական չես տեսնար:

Վարելախողեր թէև սակաւ, բայց այդ սակաւի մշակութիւնն էլ բարձիթողի եղածի պէս է, մանաւանդ որ արտերու պարարտացուցիչ՝ գիւղի միջի բագում աղբակոյտեր ոչինչ մշանակութիւն չունի ժողովրդեան աչքին, և իւր ներկայ մատաղ սերունդի լուսաւորութեան մասին անփոյթ են: Վարժարան չունին: Ժողովուրդ տգէտ, ուստի միակ Տեր-Սարգիսեան Գրիգոր տգէտ քահանայի⁷¹ պարտագանց վարմունքով ժողովուրդն կխարխափէ աշխարհիս վերայ, քան կկենցաղավարէ: Քահանայն աւելի սնապաշտութեան, քան բարեպաշտութեան կառաջնորդէ ժողովուրդը՝ սնոտի պատմութիւններ ընելով նոցա մէջ:

Գանձակեցի տիրացու Յովհաննիսեան Եղիշէի Սոնա այրի բարեպաշտուիւոյ առաջարկեալ փողային գումարով յիշեալ քահանայն կյորդորէ ժողովուրդ մատուռ շինել վերոյիշեալ կաղնիի տակի վարագուրեալ պատուհանի տեղ՝ քանի գիւղի եկեղեցւոյ մի որևիցէ պակասութիւն լրացնելու: Խոստացուած գումարէն կանխիկ առհաւատչեայն արդէն ստացեր է 60 րուբլի:

Չնայելով, որ գանձակեցի հայոց հարուստ դասակարգէն շատեր այս գիւղ ամարանոց գալով և

70 Ծինարարական արձանագրոյթյան առաջին ընթերցողն է Քաջիկյանը (տե՛ս նրա նշվ. հոդվ., նույն տեղում): Արձանագրոյթյունը տե՛ս նաև **Քարխտատարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 272: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 405:

71 Գրիգոր Տեր-Հակոբյան Տեր-Սարգսյանը ձեռնադրվել է 1881 թ. և քահանայագործել առնվազն մինչև 1912 թ. (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 320 շրջ.-321; գ. 11608, ք. 124):

այլ բազում ուխտաւորաց պատճառաւ բաւական մտմաւաճառութիւն կլինի, բայց եկեղեցին տասնեակ տարիներէ ցայսօր 120 բուրջի արդիւնքէն աւելի ոչինչ չունի, և այն էլ աներևոյթ և անպատրաստ վիճակի մէջ է, զի քահանայն, երբեմն երեցփոխանի պաշտօն վարելու միջոցի հաշիւներ տակաւին չէ յանձնել իւր յաջորդէն, և մեք ևս անկարող եղանք նոյն հաշիւներ առնել թէ՛ մեր ժամանակի սրութեան և թէ՛ նորա հաշուեցուցակայ անպատրաստ լինելու համար:

Կրկին կըսենք անմխիթարութիւն, զի եկեղեցույ երեցփոխանութիւնը անհոգութեան, անփութութեան և անճշտութեան մէջ կգտնուի քանի տարիներէ ի վեր, մանաւանդ ծխատէր քահանայի երեցփոխանական պաշտօն վարելու միջոցին: Ինձ կթուի, ինչպէս որ քահանայն սովոր է սնապաշտութեան, ուխտատեղեաց նուէրներն ուտելուն մէջ, նոյնպէս և եկեղեցեաց նուէրներ մարսելու սովորած է: Գիւղիս մէջ կպատահի տարին միջին հաշուով 12 մկրտութիւն, մի պսակ և սակաւ ննջեցեալք: Չարմանալի է, որ ուրիշ գաւառէն այստեղ յետին աղքատ վիճակի մէջ փոխադրուած քահանայացու տիրացուն, քահանայ ձեռնադրուելով, 7 տարուայ մէջ կարողացեր է հարստանալ և բաւական գեղեցիկ տներ շինել՝ ամարանոց եկողներուն վարձով տալու:

Վարելահողեր սակաւ լինելու համար խրատեցինք զհողացիներուն ոյժ տալ անասնապահութեան, զի անտառի շատութենէ այսպիսով կարելի կլինի օգուտ քաղել, իսկ արտերը պարարտացնել զհողի մէջ դիզուած աղբակոյտերով և տղաքներ կարդացնելու միջոցները քարոզեցինք և անմխիթար մեկնեցանք զհողէս, առանց առ այժմ մի որևիցէ կարգադրութիւն անելու՝ մեզ հետ տանելով միմիայն հեզ հիւրասիրող պարոնի համակրութիւնը:

Ի

Գետաշէն

Ամսոյս 4-ին Մուռուտ զիւղէն մեկնելով՝ իջնանեցանք *Գետաշէն*⁷² զիւղը, որ շէնացած է իւր համանուն գետակի ձախ ափին: Գետափունք զարդարուած են մրգաբեր փոքրիկ ծառաստաններով և հնդեղենաց կանաչաթոյր բաւեղներով: Գետակն կգոյանայ *Քափազ* անուանեալ լեռան ստորոտէն: Քափազ լեռը, քանի մը հարիւր տարի առաջ երկրաշարժէն փլչելով, իւր ներքևի ձորաբերան խցկեր և գետընթացքին արգելք լինելով, լճակ դարձուցեր է, որուն հայեր *Կանաչ լիճ*, իսկ թուրքեր *Գեօզ-գեօլ*⁷³ կանուանեն, որու շրջապատը երկու ժամ կտևէ:

72 Գտնվում է Խանլար շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևելք՝ Կուրակ գետի խոր ձորի մէջ (ծ. մ. բարձր է 950-1050 մ):

73 Այնպիսի լճի առաջացումը կապվում է 1139 թ. երկրաշարժի հետ. «Փլաւ և լեռնն Այնարակի ի շարժմանէն և արգել գծորակն, որ անցանք ընդ մէջ նորա և եղև ծովակ...» (*Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 117):



ԳԵՏԱՇԵՆ. գյուղի կենտրոնական հատվածը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Լճակն բերք ունի միմիայն կարմրախայտ առատ ձուկ, բայց լճէն գոյացեալ գետակի մէջ կգտնուի երկու տեսակ՝ կարմրախայտ և մուրցա, այն է բեղլու (ընչայքաւար): Քափազ լեռան փլատակի մեծամեծ քարերով քարանձաւներ կազմուած են, որոնց մէջ ամբողջ տարին կգտնուեն ինքնագոյացեալ սառույցներ, մանաւանդ ամառ ժամանակ, զի ինչպէս կպատմէին զիւղացիք, ծմեռ ժամանակը կիսով չափ կհալչեն սառույցներ: Սակայն մենք չկարողացանք տեսնել լիճն:

Գիւղիս գետակի վերին կողմ՝ քսանաչափ վերստ հեռու, գետամէջ տեղը կգտնուի, ըստ աւանդութեան, բնակչաց *Հին Գետաշէն* զիւղի աւերակն, ուրտեղէն գաղթած են ներկայ գետաշէնցիներն:

Գիւղը կբաղկանայ 446 տուն գուտ հայ բնակիչներէ՝ 1357 արական, 1201 իգական: Ունի մի ժողովրդական եկեղեցի, որոյ անունն է *Ս. Աստուածածին*⁷⁴: Սոյն եկեղեցիէն փոքր հեռի՝ դէպի արևմուտք, կգրտնուի *Կուսանաց անապատ* անուանեալ փոքրիկ եկեղեցին⁷⁵, որուն քովն է զիւղիս նոր կառուցուած օրինակելի գեղեցկութեամբ, թէև անձաձկ վարժարան:

Գիւղիս ստորև՝ արևելեան կողմ, կայ և մի մատուռ՝ *Կարմիր նահատակ*⁷⁶ անուանեալ, որուն մէջ կգտնուի Յիսուսի խաչափայտի մասն, ըստ տեղացւոց՝ Աւագ Ս. Նշան: Կուսանդէն, թէ սոյն աւագ Ս. Նշանը բերուած են Ջրաբերդ գաւառի Հաթերք զիւղէն: Վարդավառէն սկսեալ մինչև աշնան վերջեր բազում ուխտաւորներ կյաճախեն աւագ Ս. Նշանին Գանձակէն, Տփխիսէն, Բագուէն, Շուշիէն, Սղնախէն, Ղազախէն և այլն: Յիշեալ մատուռի մէջ կգտնուի ս. Եղիշէ Առաքելոյ աջը:

74 Ծխական եկեղեցին կառուցված էր Գետաշէնի հին թաղամասի կենտրոնում: Հնի տեղում հիմնովին վերակառուցված նոր եկեղեցու շինարարական աշխատանքներն ամբողջացել են 1883 թ. (*Կարապետյան Ս.*, Հյուսիսային Արցախ, էջ 339):

75 Այս եկեղեցու մասին մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 340-342:

76 Գետաշէնի երեք եկեղեցիներից ամենահինն էր՝ կառուցված 1677 թ. (շինարարական արձանագրությունն առավել ամբողջական ընթերցել և հրատարակել է Սամվել Կարապետյանը (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 337-338):



ԳԵՏԱՇԵՆ. Աղհարակ լիճը (լուս.՝ Ն. Քոբանջյանի, 1977 թ.)



ԳԵՏԱՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Գիւղի սահմանէն 3 վերստ հեռաւորութեամբ՝ հարաւակողմ, կգտնուի *Եղնասարու վանքը*⁷⁷, որ 8 ամաց հետէ անմարդաբնակ եղած է և որուն սպասներ, անօթներ և տնտեսական կարասիքներ յանձնուած է հոգ. կառավարութեան կողմանէ գիւղիս բնակիչ Ալլահվերդի Պետրոսեանին ի պահեստ, որ այժմ հանգուցեալ է: Եղնասարու սահմանին մէջ կգտնուի *Կուսանաց անապատ* անուանեալ եկեղեցին⁷⁸, ըստ տեղացոց յորջորջման՝ *Կուսակալ* կամ *Վերին վանք*: Ըստ տեղացոց՝ սա է *Մայրավանք* անուանեալն: Նոյն վանուց (Եղնասար) կպատկանի *Բրտտաշէն* անուամբ աւերակ ազարակն՝ իւր փոքրիկ սագաշէն եկեղեցիովն⁷⁹, ուր կայ նոյնպէս և *Խոտորաշէն* անուն աւերակ գիւղատեղին:

Գետաշէն գիւղը ունի եկեղեցական միդասեան արականաց ուսումնարան, որոյ մէջ կուսանին 39 ուսանող: Ունի երկու աւարտող համալսարանականներ, որոնց մինն է Մովսէս Եպիսկոպոսեանց, որ մեզ հիւրընկալող տանուտէր Գրիգորի որդին է և անտառապետութեան պաշտօն կվարէ, իսկ միւսն՝ Միքայէլ Արզմանեանց՝ քաղաքական ծառայող: Գիւղէն դուրս կան ուսանողներ. Գանձակու մէջ երկուքը՝ ի գիմնագիտն, մին՝ ի քաղաքական ուսումնարան և երեք՝ արհեստական ուսումնարանը:

Ի 1887 թ. գիւղիս մէջ բացուել է զաւառական արքունի երկդասեան ուսումնարան⁸⁰, ունի մօտ 60 ուսանողներ՝ հանդերձ շրջակայ գիւղօրէից եկուոր ուսանողներով:

77 Գտնվում է Գետաշենից մոտ 1,5 կմ հարավ՝ անտառի փեշին: Վանքի մասին մանրամասն տես՝ նշվ. աշխ., էջ 354-357:

78 Գտնվում է Մարտունաշենից 3,5 կմ հարավ-արևմուտք: 1980 թ.՝ Սամվել Կարապետյանի այցելության ժամանակ, արդեն «...եկեղեցուց պահպանվել էին միայն խորանին և հյուսիսային ճակատին՝ մկրտարանի խորշով հանդերձ հարող հատվածները» (նշվ. աշխ., էջ 386):

79 Բրտիշեն (Գուլուս) անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում էր Մարտունաշենից 0,5 կմ հարավ-արևմուտք: 1989 թ. տեղում դեռևս պահպանվում էին եկեղեցու և գերեզմանոցի ավերակները (նշվ. աշխ., էջ 384-385):

80 Արքունի դպրոցի մասին տես՝ Միքիմանեանց Յ., Գետաշեն գիւղը, «Մուրճ», 1894, № 7-8, յուլիս-օգոստոս, էջ 1162:

Գիւղիս մէջ կգտնուին արհեստաւորներ՝ որմնադիր, հիւսն, երկաթագործ, ներկարար, բրուտ, ոսկերիչ, խաղախորդ, կօշկակար, շալէգործ, թամբագործ, մանրավաճառ և այլն: Գիւղիս մշակելի մրգաստաններ, բահեզներ և կալատեղէր գիւղէն կարի հեռու լինելու պատճառաւ կանայք բոլորովին անգործ մնացած են, մինչև անգամ կալատեղէրու մէջ շեղջացած ցորենները գնալու մաղելու անփոյթ են:

Ոստայանկութեան արհեստն էլ, որ երբեմն ծաղկած էր գիւղիս մէջ, այժմ ընկած լինելով՝ գիւղիս կանայք իսպառ անաշխատ կեանք կվարեն...

Գիւղիս մէջ աղբիւր չկայ: Բնակիչները ամառ և ձմեռ միևնոյն գետակի պատուականագոյն ջուրը կխմեն և գետակի սահանքի հետ շարունակ փչող գովարար ողորխ կվայելեն: Գուցէ այս պատճառաւ է, որ գիւղիս ձայներն պատուականագոյն են՝ չըսենք հրեշտակային, որ չենք լսել: Չայներ կակուղ և անուշ, ինչպէս կըսուի, իրենց նրբութեամբ աւելի կանացի են, քան առնացի: Սոցա (տեղւոյն տէր Մեսրոպը, տանուտէր Գրիգորի որդիք և այլն) երգելու միջոցին եղանակի ելէջներ, դարձուածքներ կարծես թէ սոխակային գեղգեղումներ են: Ժողովրդական երգերու սրտագին եղանակի մըմունջները լսելով՝ մարդ կսքանչանայ, որոյ առջև նուագարաններ ամօթահար կլինեն: Եւ նուագածուներ պիտի խոստովանեն, որ գեղգեղումների, բաղխումների նրբութիւնը գետաշէնցիներէն սովբելու և կատարելագործելու է: Ազգային երգերու բանաստեղծ հեղինակները և երաժիշտները, եթէ մեզ պէս բաղդ ունենային՝ սոցա ձայնի քաղցր դայլայիկ լսելու և պարերգներուն ներկայ լինելու, պիտի համոզուէին, որ իրենց բանաստեղծութիւններ գետաշէնցոց քաղցրաքաղցր և անուշ եղանակով կրկին ոգի ստացել են: Մենք, ասիական Տաճկաստանի, Կովկասի և Ատրպատականի կողմեր շրջագայած լինելով, վանեցոց և գետաշէնցոց ձայներու նման ոչ մի տեղ լսած չենք:

Գիւղիս բնակավայր ձորակ շատ նեղ է և մի կողման վրայ միայն բնակութիւն հաստատելու տեղ ունի: Զի գետակի միւս կողման սարերու ստորոտներ կարի առապար են և գետակի մէջ իջնալով՝ շինու-



ԳԵՏԱՇՆԵՆ. Կուսանաց անապատը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳԵՏԱՇՆԵՆ. Ավագ Սբ. Նշան եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳԵՏԱՇՆԵՆ. Եղնասարի վանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳԵՏԱՇՆԵՆ. Բրուտաշենի եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

թեան տեղ չեն թողուցեր: Շինավայրի նեղութեան պատճառաւ տներ այնչափ խիտ են, որ մէկի տան առաջի ճանապարհն գրեթէ միւսի տան տանիքէն կանցնէ: Գիւղամիջի ճանապարհներ ոլոր-մոլոր, նեղ և շրջապտոյտ լինելու համար երկրագործական կեանքին անյարմար են, սայլերու և անասնոց անցուցարձը կարի դժուարացեր է: Բնակիչներու մեծագոյն մասը պարտաւորուած է երկու սենեկէն աւելի ծածկ չունենալ թէ՛ բնակութեան և թէ՛ մթերանոցի համար, զի բացի իրենց աշխատակից գըրաստներէն, որոնցմով խոտերը և օրաններ կրերեն գիւղը, իրենց միւս անասուններ գիւղէն դուրս պահելու պարտաւորուած են: Տասնէն մինչև քսան տունը մի թոնիր միայն ունեն հաց թխելու և այն էլ փողոցի մի անկիւնի մէջ շինած, որոյ մէջ առաւօտէն մինչև կէս գիշեր յաջորդաբար իրենց հաց կթխեն: Խմորի զանգուածի գալու (լամորուելու) և անեկութեան համար պարտաւորուած են չմտածել և հացն կիսատի դուրս հանել, որպէսզի իրենց յաջորդական կարգը չկորցնեն:

Փողոցները անտանելի կեղտոտութեան մէջ են, մարդկանց և անասնոց աղբերով լի: Անշուշտ, այս պատճառաւ պիտի լինի գիւղացուց երկու սեռի վատառողջութիւն, դէմքի դեղնութիւնն, տզեղութիւնն և կարճակեցութիւնն, որ յատուկ է գիւղիս բնակչաց: Ինձ կթուի, թէ տիրող իշխանութիւններ պարտաւորութիւն ունեն իրենց հպատակ տզեւ գիւղացուց վրայ, իբրև հայր որդուց, խնամք տանել և առաջնորդել գէթ աշխարհի ամենաբանկագին կեանքը վաղահաս մահուանէ ազատելու: Որչափ մտրակ որ հարկահանութեան համար կգործադրուի, երանի թէ նորա լոկ ստուերն է հարկատուների առողջապահութեանն և կեանքի պահպանութեան համար գործածուեր, եթէ չկան աւելի քաղաքավարի միջոցներ:

Մի տարու չափ Գանձակ մնալով՝ ի լոյս ես վատ գաղափար էի կազմեր գետաշէնցուց վրայ, որպէս թէ սոքա կենցաղավարելու անպիտան և յառաջադիմութեան անողոք արարածներեն, այն ինչ ես այս գիւղը գտայ աշխատասիրութեան մըջմնարոյն և



ԱՐԱՄ. գյուղը հեռվից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)



ԱՐԱՄ. Սբ. Մինաս եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

մեղուի փեթակ: Ապացոյց իմ այս խօսքերուն պիտի տեսնաք գիւղիս գլխաւոր փողոցի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը վերոյգրեալ արհեստներու գործատուներ, որոնց մէջ եռուն և շարժուն գործունէութիւն կկատարուի:

ԻԱ Արլահ

Ամսոյս 9-ին Գետաշէնէն մեկնելով՝ այցելեցինք *Արլահ*⁸¹ գիւղը, որ կբաղկանայ 34 տուն գուտ հայ բնակիչներէ՝ 111 արական, 85 իգական: Ունի մի հնաշէն մեծ եկեղեցի⁸², որ կառուցուած է սագաշէն կամարով, վեց միասպաղաղ բարակ սիւներու վրայ: Քահանայ չունի և ոչ քահանայացու, բայց վեց ամսոյ չափ կլինի, որ տասն և հնգի չափ աշակերտներ կուսանեն եկեղեցոյ ժամասացութիւն և պատարագի դպրութիւնը մի այլ գիւղէն եկած տիրացուի ուսուցչութեամբ:

Գիւղիս Արլահ անուան վրայ տեղացիներ իրենց պապեանական արանդութենէ առած կպատմեն, թէ ի հնումն այս գիւղն *Գինեճոր* կանուանուէր և ապացոյց այս արանդութեանն, մատնացոյց կընեն... սորա միջի հին, խոպանացեալ այգետեղեր և նոցա հնձաններ ու քաղցուի գուրեր:

Գիւղացիներ սկսեր են նոյն այգետեղիներ նորոգել՝ գինեբեր որթեր տնկելով և արդէն պատրաստած ունեն բաւական շատ պտղատու ծառեր իրենց գիւղի առջև: Գիւղիս բնակիչներ բարեպաշտութեան և իրաւասիրութեան յայտնի օրինակ հանդիսացած են շրջակայ գիւղաբնակութեանց առաջ, լսեցինք և ստուգեցինք, որ գիւղիս մէջ բնաւ ծխախոտ և ընչախոտ քաշող չկայ: Գերդաստանական համեստութիւնը և բարոյական սրբութիւնը իւր բարձր դրից վերայ ակներև կտեսնուեն գիւղիս

բնակչաց մէջ: Սոցա մէջ ստախօսութիւն և սուտ երդում ընել անգոսնելի և դատապարտելի եղած է (բացի միոյն): Մշակի վարձ չհատանելէն ի գաս՝ օր աւոր ձգելն ևս մեղադրելի է սոցա մէջ:

Գանձակի առաջնակարգ հարուստ հայեր՝ Նաբաթեաններ, Մալիեաններ, Փափախչի-Սիմեօնեաններ, Աղաջան Կարապետեաններ, Տէր-Յովսէփեաններ և այլն, այս գիւղէն գաղթեր են Գանձակ, որք, տարին մի անգամ գիւղիս սրբավայրեր գալով, ուխտերնին կկատարեն և ճոխ սեղան կկազմեն, մատաղներ կանեն, կշտապինդ կվայելեն: Տակալին մինչև ցայսօր մի որևիցէ յիշատակաց արժանի գործով չեն յիշեր իրենց հայրենեաց եկեղեցին և նորա աւագան, որ ծնաւ զիրենք, բացի մի գոյգ փոքրիկ զանգակներէ, որ նուիրած են Նաբաթեաններ: Սոքա՝ գիւղէս գաղթածներ, կարող էին իրենց հայրենի գիւղին մէջ մի փոքրիկ վարժարան և նորա ապահովութիւնը կենսագործել, որով իրենց թշուառ հայրենակիցներու դառնութիւնը կքաղցրացնէին և իրենց վրայ կազմուած վատ, նախանձու և ատելութեան գաղափար անհետացնելէն զկնի, մատաղ և ապագայ սերունդը բարեմաղթին կկացուցանէին ինքեանց: Գիւղիս բնակիչներէն լինելով և Գանձակու Ս. Լուսատրիչ եկեղեցոյ բարեկրօն Սիմեօն և Եղիշէ քահանաներ՝ սոցա ևս պարտաւորութիւնն էր յորդորական միջոցներով պատրաստել իրենց հայրենակից գաղթական քաղաքացիներու սրտերը՝ իրենց հայրենի գիւղի մէջ մնացող թշուառ հայրենակցաց զարգացման ձեռնառութիւն ընելու:

Գիւղիս հիւսիսային կողմէն պարանոցաձև առ ի վեր բարձրացած բլուրի կատարի վրայ կտեսնուեն բաւական թուով գերեզմաններ, որոնք ծածկուած են դամբանական քարերով, առանց խաչի: Եւ այդ բլրակի կատարը բլուր Գանձակի գաւառացիներէն կկոչուի Ս. *Յովհաննէս* ուխտատեղի: Այդ բլրակի հիւսիսակողման կուրծքի վրայ կայ *Եօրը եղբայր և մի քոյր նահատակներ* անուանեալ ուխտատեղի: Սոյն եօթնեակ եղբայրներէն միոյն անուն Ս. Յովհաննէս և քրոջն՝ Հռիփսիմէ կկոչեն տեղացիք: Միւսներ անանուն են: Սոքա ոչ այլ ինչ են, բայց թէ քա-

81 Գտնվում է Խանլար շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք (ծ. մ. բարձր է 1000-1050 մ):

82 Սբ. Մինաս ծխական եկեղեցին վերակառուցվել է ԺԷ դարում հնի տեղում: Նորոգվել է 1892 թ.: 1987 թ. տակավին կանգուն էր (մանրամասն տեսն *Կարապետյան Ս.*, Հյուսիսային Արցախ, էջ 305-307):



ՍՈՒՆՈՒՔ. գյուղը արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ՍՈՒՆՈՒՔ. Սք. Գովհաննես եկեղեցին 1989 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնավոր ռմբակոծումից հետո (լուս.՝ Ֆ. Քերլենոնի, 2007 թ.)

րերու փոքրիկ ծերպ՝ օճախի ձևով, որոնց իրաքանչիւրի մէջ կգտնուեն ճրագներ: Բայց ի քրիստոնեայներէն մահմեդականներ ևս կղիմեն սոյն վայրենի ուխտադրութիւն կատարելու: Ջերմեռանդ ուխտաւորներ իրենց նուիրաբերած խունկ ու մոմի հետ կվառեն և յիշեալ ճրագները: Միայն Ս. Յովհաննէս անուանեալ ծերպի մէջը կգտնուի մի շարժական խաչքար, միւսներու մէջ ոչինչ քրիստոնեական կրօնի նշաններ չեն գտնուեր: Սոյն նահատակներուն կողմանաւորեն անձեռնմխելի մնացած հին կաղնիներ իրենց արդէն աւանդաբար վայելած յարգանքով, որք ցայսօր ազատ կապրին մարդկային վնասող ձեռքերէն:

**ԻԲ
Սուլուզ**

Ամսոյս 10-ին Արլահ գիւղէն մեկնելով՝ այցելեցինք Սուլուզ⁸³ գիւղը, որուն թուրքեր Ազատ կանուանեն: Գիւղս ունի մի եկեղեցի՝ Ս. Յովհաննէս անուամբ⁸⁴, սագաշէն կառուցուած չորս սիւների վրայ: Ունի մի քահանայ՝ Տէր-Սարգսեանց տէր Կարապետ⁸⁵, որուն տուն հիւրընկալուած էինք:

Գիւղս կըրականայ 52 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 189 արական, 164 իգական, որոնց համար շրջակայ բնակիչներ կասեն, թէ այս կողմերու ամէն գիւղերէն հարուստ են: Երկրորդ՝ քաղաքական կառավարութեան ամարանոց սոյն գիւղի մօտ լինելուն համար, նոցա և Գանձակի քաղաքացոց շինութեան պիտոյքները սայլերով փոխադրելոյն համար իրենց աշխատութեան վարձքով հարստացեր են:

Գիւղիս արևմտեան կողմը՝ երկայնաձիգ անտառի մէջ, կգտնուի *Երմոզենիայ* անունով մի կիսաւեր և անմարդաբնակ վանք⁸⁶, ուր տեղն է, ըստ աւանդութեան գիւղացոց, Երմոզենեայ քահանայի գերեզմանն: Ինչպէս որ նկատելի է վանքիս շրջապատ գերեզմանոցէն և նորա հանդէպ գտնուող ընդարձակ գիւղատեղիի աւերակներէն, այստեղ երբեմն եղել է մեծ գիւղ, և այս վանքն եղել է նորա եկեղեցին:

Սուլուզ գիւղը ունի մի վարժարան, որուն մէջ մի տարի միայն ուսումն աւանդուած է: Գիւղիս եկեղեցոյն հիւսիսային դրան վրայ ներկայ տարուս մէջ մի գեղեցիկ ճաշակով զանգակատուն շինելու տուած է սոյն գիւղի բնակիչ Մակի Աւալեանն ի յիշատակ իւր հանգուցեալ որդոյ՝ Խաչատուրին⁸⁷:

Գիւղս բարձր դիրք և ջինջ օդ ունենալու համար 30 տնաշափ զանձակեցիք ամարանոց կզան: Ջուրն կարի սակաւ լինելու համար մրգաբեր ծառաստան, պարտէզներ և քահէզներ սակաւ են՝ չնայելով, որ այդ սակաւիկ ջուրը կըրիսէ գիւղիս սահմանէն, նորա կէս մասն էլ յատկացուցած է կա-

83 Ազատ (Սուլուզ) գյուղը գտնվում է Խանլար շրջկենտրոնից 10,5 կմ հարավ-արևելք (ծ. մ. բարձր է 1170-1220 մ):

84 ԺՋ-ԺԷ դարերում կառուցված եկեղեցին գտնվում է Ազատից 1 կմ հարավ-արևմուտք՝ Սուլուզ գյուղատեղիի տարածքում: Շինարարական արձանագրությունը 1980 թ. արդեն չէր պահպանվում (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 312-314):

85 Կարապետ Տեր-Սարգսյանը ձեռնարկվել է 1869 թ., քահանայագործել առնվազն մինչև 1910 թ. (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 319 շրջ.-320; ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 58: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 314):

86 Երմոզիա քահանայի վանքը (Սուլուզի անապատ) գտնվում է Ազատից 2 կմ արևմուտք: 1987 թ. ավերակ եկեղեցու փլատակներում պահպանվել էին տեղահան ու կոտորատված միայն մի քանի խաչքարեր (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 315):

87 1890 թ. կառուցված կրկնահարկ զանգակատունը 90 տարի անց արդեն չէր պահպանվում (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 312-314): Բարեբախտաբար, վիմագիրը մեզ է հասել Մալար Բարխուստարյանցի շնորհիվ (տե՛ս նրա՝ Արցախ, էջ 269):



ՔԱՂՇԻԿ. գյուղը արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

ռավարութիւն նոր հաստատուած Միխայէլովկա⁸⁸ անուանած մալական գիւղի բնակչաց:

ԻԳ
Բաղշիկ

Ամսոյս 11-ին այցելեցինք Բաղշիկ⁸⁹ անուանեալ գիւղին, որ շինուած է ձորամէջ և համանուն առուակի հարաակողմը և կբաղկանայ 38 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 141 արական, 123 իգական: Ունի մի հնադարեան պնդակազմ սագաշէն եկեղեցի⁹⁰:

Սոյն գիւղացիներ 20 տարի առաջ այստեղ եկած են Հաճի-շէն գիւղէն և Բաղշիկ անուն աւերակ գիւղատեղին նորոգեր են: Բաղշիկ գիւղը այնչափ երկար տարիներէ ի վեր աւերակ եղեր է, որ Սուլուգ գիւղի ծերունիներ չեն յիշեր նորա շէն լինելու ժամանակ: Մերձակայ Հաջի-շէն գիւղացիներ, մարմնաւոր իշխանութեան ստիպմամբ, իրենց բնակավայրէն դուրս եկած են, թողնելով իրենց մշակած արտեր նորաշէն Միխայէլովկա գիւղի գաղթականներուն: Երեսի պնդութեամբ տքա հազիւհազ կարողացել են աւերակ գիւղիս մէջ բնակութիւն հաստատել, զի քաղաքական իշխանութիւնն ստուգելով, որ նոքա յիշեալ Հաջի-շէն գիւղի մէջ բնակութիւն հաստատելէն առաջ, Գետաշէն գիւղի նախնական բնակիչ եղեր են, վասն որոյ կամեցեր է դարձեալ ի նոյն Գետաշէն գիւղ վերադարձնել: Բայց վիճակիս հանգուցեալ յաջորդ բարեյիշատակ Թաղէոս եպիսկոպոս Տէր-Դանիէլեանցի⁹¹ խնամատարութեամբ հաստատուեր են սոյն Բաղշիկ գիւղատեղիի մէջ:

88 Գտնվում է Խանլար շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ Կուրակ գետի ձախափնյա վտակների միջև ընկած սարահարթի վրա (ծ. մ. բարձր է 1180-1200 մ):

89 Կամո (Բաղշիկ, Հաջիշեն) գյուղը գտնվում է Խանլարի համանուն շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք (ծ. մ. բարձր է 1170-1230 մ):

90 Բաղշիկ գյուղատեղիում մինչև բռնագաղթը կիսավեր պահպանված Սբ. Աննափրկիչ եկեղեցին ԺԷ դարի կառույց է (մանրամասն տես Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 368-369):

91 Թաղէոս Տէր-Դանիէլեանցը Գանձակի փոխանորդ է հիշվում առնվազն 1877-1882 թթ. (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 13):



ՔԱՂՇԻԿ. եկեղեցին 1989 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնավոր ավերումից հետո (լուս.՝ Ֆ. Բերլեմոնի, 2007 թ.)

Սուլուգ գիւղին մօտ լինելու համար կիովուէ նոյն գիւղի ծխական քահանայն: Վարժարան չունի:

Գիւղիս հարաակողման մի բարձրավանդակի վրայ ուխտատեղի կայ, որուն տեղացիներ կանուանեն Կաղնայխաչ, ուրտեղ մատուռ չկայ, այլ կաղընույ հովանեաց ներքև կգտնուեն խաչքարեր: Մօտակայ գիւղացիներ իրենց ուխտադրութիւն և երկրպագութիւն կատարելէն զկնի ուրախութեամբ կպարեն ու կխաղան կաղնույ հովանաւորութեան ներքև՝ վայելելով տեղոյն քաղցրասիւք օղ և բարեհամ ջուր:

1882 թ. գանձակեցի բարեկրօն Դանիէլ քահանայ Տէր-Դանիէլեանց⁹², այցելելով սոյն գիւղը, կտեսնէ տեղոյն հնադարեան եկեղեցւոյ անխնամ վիճակ և նորա առաստաղի կաթելը, հանգամանկութիւն կբանայ գիւղացւոց և սոյն վայրեր ամարանոց եկող գանձակեցւոց մէջ, 98 մնթ. գոյացնելով ծախու կառնէ 423 կոմիներ, ևս և ժողովելով երեք հարիւր փթաչափ կիր՝ եկեղեցւոյ տանիքը ամրապնդելու համար, բայց... անյայտ պատճառաւ նոյն ժամանակուայ արգելքի հանդիպելով, մինչև ցայսօր ժամանակի անգործադրելի է մնացել մտադրեալ նորոգութիւնը:

Այցելելով մեր այս գիւղ՝ մեր ճանապարհորդակից յիշեալ Դանիէլ քահանայն, որ ջերմեռանդն է

92 Դանիէլ Տէր-Դանիէլեանցը Գանձակի Սբ. Լուսավորիչ և Սբ. Հովհաննէս եկեղեցիների քահանաներից էր: Չեռնադրվել է 1871 թ. (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 316 շրջ.-318): Հիշվում է նաև 1908 թ. (նշվ. աշխ., էջ 51):

յայտարարում աստուածահաճոյ գործս, յիշեցրեց մեզ և գիտացուց իւր փափագի անկատար մնալը: Մեր մի լոկ յորդորմամբ միայն այդ բարեպաշտօն ժողովորդ անմիջապէս ստորագրեց 100 մանեթ և 80 փութ ցորեն տալու մինչև ց1-ն առաջիկայ սեպտեմբեր ամսոյ: Փողն եկեղեցւոյ տանեաց ամրապնդութեան պիտի գործածուի, իսկ ցորենն անձեռնմխելի պայմանաւ պարտ են շահեցուցման տալ՝ եկեղեցւոյ ապագայ պիտոյից համար: Սոյն կարգադրութիւն առաջ տանելու համար ժողովորդը ընտրեց երկու անձնաւորութիւն, որք երեցփոխանի և տանուտերի աջակցութեամբ գործն ի գլուխ պիտի հանեն՝ Սուրբ Գիտի բարեկրօն Կարապետ քահանայն Տէր-Սարգսեան Բաղշիկ գիտի հետ կիսովու և Աբլահ գիտը, այսինքն՝ երեք գիտի ժողովորդ:

ԻԴ

Բրաջուր

Ամսոյս 12-ին Բաղշիկ գիտէն այցելեցինք *Բրաջուր*⁹³ գիտը, որ կբաղկանայ 35 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 190 արական, 163 իգական: Ունի մի նորաշէն փոքր եկեղեցին *Ս. Գաբրիէլ Հրեշտակապետի* անուամբ⁹⁴ և մի քահանայ՝ տէր Գեորգ Տէր-Յովհաննիսեան Մելքոնեանց⁹⁵: Սոյն քահանայն որչափ անուսում, այնչափ բարեպաշտ և բարեկրօն, որչափ տգեղ (կատարեալ Եզովպոս), այնչափ սիրելի ժողովրդեան, զի իւր բարոյախօսութեամբ յատենի եկեղեցւոյ ժողովրդեան հոգին կպարտուր: Բացի տգիտութենէ՝ մախանձելի է սա իւր քահանայական կոչման մէջ իւր համեստ վարք ու բարքով:

Սոյն սակաւաթիւ և աստուածասէր գիտացիներ երկու տարիէն ի վեր սկսեւ են փող չխնայել իրենց որդիներ աստուածապաշտութեան մէջ կրթելու, ժամասացութիւն և պատարագի դպրութիւն սովորեցնել տալ մասնաւոր տան մէջ քահանայի և դպրապետի առաջնորդութեամբ: Թէպէտ և սոյն վարժոց ազգիս վեհափառ հայրապետի հրամանով չէ բացուած և հաշիւ չի ներկայացներ իշխանութեան, բայց անշուշտ ենք այն մեծ հաւատքովը, որ մեր ամենաողորմած և բարեպաշտ կայսերութիւնն կցանկայ, որ իւր հպատակ քրիստոնեայ ազգեր աստուածապաշտութեան մէջ կրթուելով՝ բարի քրիստոնեաներ լինեն, որով հպատակասէր կառավարութեան հաստատուն հիմք կկազմուի: Ինձ կթուի, թէ գիտիս անուանադիր հեղինակ իրաւամբ



ՔՐԱՏՈՒՐ. Սբ. Գաբրիէլ Հրեշտակապետ եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

Բրաջուր անուաներ է սոյն գիտը՝ ջրի կարի վատ և աղի լինելու համար (արդարև Բրաջուր)⁹⁶:

Գիտիս հանդէպ արևելակողմ՝ մի փոքրիկ բլրակի գլխին, կայ փրոշնի (օսմանցուց լեզուով՝ չաքլամբիճ) ծառ, որ բոլորովին նման է հաց ուտելու բոլորշի սեղանի, որուն ճիւղեր բնաւ դէպի վեր բարձրացած չեն, այլ հորիզոնական դիրքով երկնցած և իրար փաթաթուած սեղանաձևութիւն տուած են: Սոյն ծառի համար կպատմեն, որ դարևոր է, վասն զի ծերունիներ իրենց տղայութեան ժամանակէն միևնոյն վիճակի և ձևի մէջ տեսած են զայն: Չարմանալին այն է, որ բլրակի գլուխ բնաւին չոր է, աղբիւր չկայ, բայց թէ ծառն ինչո՞վ կսնանի՝ յայտնի չէ, որուն տակը նոյնպէս դարևոր խաչքարեր լինելով՝ ուխտատեղի եղած է, և շաբաթ իրիկուններ ճրագ ու մոմ կվառեն և խունկ կծխեն: Սոյն ուխտատեղին *Սոի խաչ* կանուանեն, այսինքն՝ բլրաժայռի խաչ:

ԻԵ

Բանանց

Ամսոյս 13-ին այցելեցինք ի *Բանանց*⁹⁷ գիտը, որ կբաղկանայ 274 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 1135 արական, 860 իգական:

93 Գտնվում է Խանլար շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք (ծ. մ. բարձր է 980-1040 մ):

94 Ծխական եկեղեցին գտնվում էր գյուղամիջում և մինչև 1989 թ. բռնազաղրը կանգուն էր (մանրամասն տես՝ *Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ*, էջ 321):

95 Գեորգ Տէր-Հովհաննիսյան Մելքոնյանցը ձեռնադրվել է 1878 թ. և քահանայագործել առնվազն մինչև 1894 թ. (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 320 շրջ.-321):

96 Գյուղանվան ծագումը ստուգաբանող մեկ այլ մեկնաբանությունը՝ «...երևի ծագել է բրածոյ ջուր բառերից, որովհետև երկու տեղ հոսող ջրերը բրեղով են դուրս ձգել» (*Քաջիկեան, Ճանապարհորդական յիշատակարան*, «Արձագանք», 1886, № 20, 18 փետրվարի, էջ 295):

97 Գտնվում է Գաշկեսան շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևելք՝ Արթինաջուր գետի ձախ ձորալանջին (ծ. մ. բարձր է 1000-1100 մ):



ՔԱՆԱՆՑ. գյուղը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

Քանանց գիւղ շինուած է համանուն գետակի ձախ ափին՝ մի նեղ, քարքարուտ դրից մէջ, որ երեք կողմէն շրջապատուած են լեռների ստորոտները: Շինավայր անձուկ, գահավեժ լինելու պատճառաւ փողոցները նեղ, շրջապատոյտ, տունները անձուկ, գրեթէ իրարու վրայ շինուած, այնպէս որ մեկ տան ճամփան միւսի տանիքի վրայէն կանցնի: Ուստի և փողոցներն անտանելի կեղտոտ, հոտած, շատ տներու կողքին տեղուած են անասնոց աղբակոյտեր: Այլ-սոս, որ այստեղ էլ ոսկերէր աղբի արժէքը ճանչցած չեն և սովորութիւն չունին արտերը տանելու: Գետի երկու ափունքները պտղաւէտ ծառաստաններով, հնտեղենաց բախէզներով և խաղողի այգիներով զարդարուած են:

Արական ցեղի աշխատասիրութիւնը անօրինակ է այստեղ համայնական, և մասնական գործունէութիւն տարածուած է ընդհանուր գիւղի սահմանի մէջ: Գետակի և առուակների վրայ կառուցուած բազմաթիւ կամուրջները⁹⁸ և մրգաստանի ու բախէզների բազմաթիւ առուները, որ ապահովում են երեսով անցուցած են, և զանազան պատրաստուած ճանապարհները ապացոյց են գիւղացուց եզնական աշխատութեան: Կարծես թէ գիւղիս բուսականութեան վրայ աշխատելու գործեր երկու սեռի վրայ բաժնուած են. ջուր բերել այր մարդու պարտաւորութիւն է համարուած, մշակել և պտղաւորել՝ կին մարդու: Աշխատասիրութեան դատապարտելու ատենական անէծքը օրինութեան փոխարկուեր է այս գիւղի մէջ: Մարդկային աճելութիւնն իւր հարուստ տոկոսիքն ունի, պարտէզներու և ծառաստաններու ստուերներու տակ այնքան մանր տղաքներ և աղջիկներ կտեսնուին, որ կարծես թէ երկին-



ՔԱՆԱՆՑ. գյուղի կամուրջներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

քէն մաղով մաղուած են: Ստեղէն և հողային արգանդներ, իբրև ազգակիցներ, համերաշխ կգործեն գիւղիս մէջ: Գուցէ և այս բեղմնաւորութիւնը աշխատասիրութեան արդիւնք լինի, զի դարուս 25 թուականին 22 տուն բնակիչ եղեր է գիւղիս մէջ, 55 թ.՝ 103 տուն, բայց այժմ 174 տուն են, առանց դուրսէն այստեղ գաղթական մտնելու: Այն ինչ մօտակայ քաղաքներու փտած և անհետացած սերունդի տեղ լեցնելու համար 25 տուն մարդկային արտադրութիւն ըրած է այս գիւղը, ինչպէս որ գաւառական քաղաքներն էլ մայրաքաղաքներու փտութիւնը կվերանորոգեն, որովհետև առհասարակ գիւղացիներ 20-22 հասակի մէջ կամուսնանան, գաւառաքաղաքացիներ՝ 30-40 տարեկան կիսաքաղաք հասակի մէջ, իսկ մայրաքաղաքներու մասին կլռենք:

Աշխատասիրութեան մի այլ օրինակ: Ես տեսայ մի որդեսէր այրի կին, ձին քաշելով՝ միայնակ անտառը կերթար, իսկ երկու ժամէն զկնի, ձիու վրայ մի բեռ փայտ բարձած վերադարձաւ:

Հաւատարմութեան օրինակ: Երկու մարդու բաժին եղած մի արտը ամբողջապէս կվարեն առանց միջնակ թողնելու, ակոսներ իրար խառնելով, յետոյ երկու բաժիններ իրարմէ որոշելու համար մէջտեղ փայտի ձողեր կտնկեն, որպէսզի ցանելու և հնձելու ժամանակ իւրաքանչիւրն իւր արդար իրաւանց տերն լինի: Եթէ ասոնք դրախտի ընտանիք չեն կազմեր, հապա ճարպիկութեամբ իրաւանց սահման ոտնակոխ անող քաղաքացիներ՝ պիտի կազմեն: Մարդկային ազգի մանկական ժամանակի անկասկածոտութիւն:

98 «Գիւղացուց անօրինակ աշխատասիրութեան մի յանդուգն ձեռնարկութիւնը կրնա համարուել այն բարձրաբերձ կամըրջի շինութիւնն, որ կառուցեր են խորանդունդ ձորի մէջ՝ կամենալով ձորի մի կողման լեռնաշղթայի լանջին ջուրն անցնել ձորի միւս կողման լեռնաշղթայի լանջին վրայ և այն տեղով տանել իրենց նոր տնկած այգիներն ուռջացնելու: Բայց կամըջաշէն վարպետն սխալուելով *Թարազի* ըստած չափերու մէջ՝ ցանկացեալ բարձրութեան վրայ ջուր հանելն չէ յաջողուեր: Ուստի և կամուրջը մնացեր է առանց ծառայութեան» (ծնթ. հեղինակի):

Ականախատութեամբ և վառօդով ժայռերու կործանման և մուրճով քարահատութեան ձայներ միշտ լսելի են այս գիւղի մէջ: Սոյն միջոցաւ փշրած քարերովը լերան ստորոտներու զառիվայրութեան վրայ պատեր բարձրացնելով և լեռներու կողքերը քերելով՝ հարթութիւններ կկազմեն և փոքրիկ ածուներ կպատրաստեն բանջարանոցի և բահէզներու համար: Ճշմարիտ ասելով՝ սոցա աշխատասիրութիւնը նկարագրելուց վեր է: Սոյնպիսի տարօրինակ աշխատութեանց պատճառաւ գիւղիս մէջ կտեսնուին շատ մը կորաքամակ, սապատող և խեղանդամ անձինք: Կատարելահասակ աշխատասէրներն իրենց պատանիներուն տոկոնութիւնը քաջալերելու համար կասեն. «Ինչպէս որ մոնը կրակի առջև, նոյնպէս էլ գործը մարդու առջև պիտի հալչի»⁹⁹:

Գիւղս ունի մի նոր կառուցուած *Ս. Լուսավորիչ* անուանով մեծ եկեղեցի¹⁰⁰, որուն հիւսիսային կողմը՝ գրեթէ կից կգտնուի *Ս. Աստուածածին* անուանով հնաշէն մատուռ¹⁰¹ և արևմտակողմ նոյնպէս նորաշէն եկեղեցական ծխական միղասեան երկյարկանի ուսումնարան, որի մէջ կուսանեն 60-70 տղաներ: Անուրանալի արդիւնք է սա նոյն գիւղացի գանձակարնակ վիրաբոյժ Յովհաննիսեանց Եգորի աշխատասիրութեան¹⁰²:

Սոյն ուսումնասէր գիւղացիներէ կան 3 համալսարանականներ՝ աւարտած և շարունակող Ս. Էջմիածնի ճեմարանի, Տփլիսիում և Երևանի թեմական դպրանոցներու մէջ աւարտած ու շարունակող՝ 4 անձինք, և 1 ուսումնասիրող՝ Աղէքսանդրեան վարժապետանոցէն, Գանձակու գիմնազիւնի մէջ՝ 3, արհեստանոցի մէջ՝ ևս 3, Քաղաքային ուսումնարանի մէջ՝ 4 և այլ ուսումնարաններու մէջ՝ 2 ուսանող:

99 «Ահա ապացոյց: Սոյն աշխատասէր գիւղացիք անհնարինն հնարաւոր դարձնելու համար, երբ լերկ քարերու զառիվերութեան և քարածայռի կիսանդիպեն իրենց այգետեղեաց մէջ, խաղողի որթ կտնկեն քարածայռի ստորոտ՝ ջրափի մօտ և երկարացած վազը կամ ուսն կքաշեն լերկ քարի երեսին և տեղ-տեղ մուրճով քարը կկտրեն կիսախողովակի պէս և վազին մէջքը նորա մէջ պառկեցնելով՝ հող կկեցունեն վրան, ուրտեղ կարմատանայ վազն, քարի երակներ պատնելով՝ նոցա մէջ կմտցնէ իւր արմատներ: Երկրորդ և յաջորդ տարիներ, հետզհետէ նոյն քարախողովակէն երկնցած վազը քանի մը տեղ արմատացնելով, կտարածեն լերկ քարերու վրայ, այնպէս որ վարի կողմ՝ ջրափի մօտ տնկուած որթը, ջուր խմելով, կմատակարարէ լերկ քարերու վրայ արմատացած իւր քանի մը յաջորդական սերունդին: Ահա բանանցեցոց առածի արդիւնքը, որ ինչպէս մոնը կրակի առաջ, այնպէս սոցա գործունէութեան ձեռքի տակ կհալչին գործերը և անհնարաւորութիւնները հնարաւորութեան կփոխուին» (ծնթ. հեղինակի):

100 Գտնվում է գյուղամիջում՝ կից Սբ. Աստվածածին եկեղեցուն հարավից: Շինարարական աշխատանքները տևել են 3 տարի՝ 1863-1866 թթ. (մանրամասն տես **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 171):

101 Կից էր վերոնշյալ եկեղեցուն հյուսիսից: Վերանորոգվել է 1981 թ.: Մինչև բռնազաղթը երկու եկեղեցիներն էլ կանգուն էին (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 159-171):

102 Հայտնի է, որ տանուտերի եղբայրը՝ Եգոր Հովհաննիսյանցը, դպրոցը կառուցել է վաղամեռիկ որդու հիշատակին (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 151):



ԲԱՆԱՆՑ. Սբ. Լուսավորիչ և Սբ. Աստվածածին եկեղեցիները (լուս.՝ Դ. Ջաքարյանի, 1980-ական թթ.)

Գիւղիս սահմանը կարի լեռնոտ լինելու համար երկրագործութիւնը յանչափս դժուարացած է, զի հնձած խոտեր և արմտեաց օրանները պարտաւորած են գրաստներով բերել գիւղամէջ:

Գիւղացոց մէջ տարածուած են զանազան կարևոր արհեստներ և պարապմունքներ, որք են՝ որմնադրութիւն, հիւսնութիւն, երկաթագործութիւն, կօշկակարութիւն, բրտութիւն, ներկարարութիւն, ածխագործութիւն, ոսկերչութիւն, պայտառութիւն, կլեկչութիւն, դերձակութիւն, մանրավաճառութիւն, շիրմապահութիւն, մեղուաբուծութիւն ու ոստայնանկութիւն:

Գիւղիս սահմանի 2-3 մասն անտառապատ է, և այս անտառի մէջ՝ գիւղիս հարաւակողմ՝ 1 1/2 վերստ հեռաւորութեամբ, կգտնուի *Ս. Թարգմանչաց* անմարդաբնակ վանքը¹⁰³, որն որ թէպէտև մօտ ժամանակներս ամայացած է, սակայն զանգակատուն կմնայ իւր զանգերով, բեմը իւր վարագոյրով, սեղանն իւր պատկերով և ծածկոցով, զգեստատունն իւր քշոցով և գրակալով: Վանքի միայնակեցութեան խուցեր, տնտեսատուն, մառան, սեղանատուն, շտեմարան և հացի փուռ քարուկրով կամարակապ են, ինչպէս և եկեղեցին՝ կամարակապ և անսլին: Վանքի տնտեսական կարասիքները, մեղուի փեթակները վիճակիս հոգ. կառավարութեան հաշուեկարութեամբ աւանդած են վանական հոգաբարձութեան: Վանքը իւր առաջն ունի բաւական թուով պտղատու ծառեր, ունի նաև վարելահող և անտառ, որ այժմ տէրութեան հետ վիճելի են: Վանքը բանանցեցոց հասարակաց այգեստանի մէջ ունի մի ընդարձակ այգի, որը, վանական հոգաբարձութեան անհոգութեան շնորհիւ տարիներէ ի վեր անմշակ և անջուր մնալով, խոպանացել է բոլորովին:

Վանքի հարաւակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, զառիվեր ձորակին մէջը, կգտնուի *Ծիրա-*

103 Գտնվում է Բանանցից 1 կմ հարավ՝ Բոլորաջուր գետակի աջ ձորալանջին: Հիմնադրումը վերագրվում է Ե դարին: Բաղկացած է եկեղեցուց, արևմուտքից կից գավթից, սրան նույնպէս արևմուտքից կից նախագավթից, կրկնահարկ զանգակատնից, միաբանութեան սենյակներից, շտեմարանից և այլ շինություններից (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 193-198):



ՔԱՆԱՆՑ. Սբ. Թարգմանչաց վանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ՔԱՆԱՆՑ. Եկեղեցածորի եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

նատր ուխտատեղին¹⁰⁴ երկու մասն բաժնուած իրարմէ փոքր-ինչ հեռաւորութեամբ, որ, ըստ գիւղացոց աւանդութեան, քոյր և եղբայր նահատակներ են, իւրաքանչիւրը շրջապատուած փոքրիկ պատերով, որոնց մէջ կգտնուեն խաչքարեր՝ շրջապատուած փոքրիկ պատերով: Եւ բնական քարերու ծերպերի մէջ կվառեն ու կծխեն ուխտատրք իրենց նուիրաբերած խունկ ու մոմն:

Սոյն *Քոյր և եղբայր* ուխտատեղին հովանաւորուած է բարձրաբերձ և ստուարաստեղն կաղնիներով և բոխի ծառերով, որոնց ստորոտէն կբղխէ բարեհամ աղբիւր, այն չափ անուշ, որ կարժէ սրբաջուր անուանել: Այստեղ կյաճախեն ուխտատրներ, մանաւանդ կանայք, որք իրենց վատառողջ զաւակները Եղբայր անուանեալ սրբավայրի պատի գլխով երեք անգամ շրջեցնելէն զկնի՝ նորա մօտ եղած երկճղի ծառի միջէն կանցունեն՝ ամրապինդ սրունք ունենալու համար:

Յիշեալ ձորակի վարի կողմ՝ ձախ ափին՝ ճանապարհի մօտ, կայ և մի այլ ուխտատեղի՝ *Փորագաւի խաչ* անուանեալ, որ կգտնուի բոխի ծառերու տակ:

Անկէ մի փոքր վարի կողմ՝ ձորակի աջակողմը, կգտնուի մի այլ խաչ կաղնու տակ, որ կկոչուի *Գլխացաւի խաչ*, իսկ վանքի անդաստանի միջի խաչ կանուանուի *Ոսկեթել*: Այս ուխտատեղեաց համար տարուած մատաղների երիւնները առաջ վանահայրը կստանար, իսկ այժմ կստանան գիւղի քահանայք: Հիւսիսային կողմ՝ գիւղի հին շինատեղի մէջ կայ մի քարակոյտ ուխտատեղի՝ *Ամենափրկիչ քրկացաւի խաչ* անուամբ, նոյնպէս և արտերի մէջ քարակոյտ տեղ կայ՝ *աչքացաւի խաչ՝ Շահգաղէ* անուամբ, ևս մի ուրիշ խաչ՝ *Ս. Հռիփսիմէ* անուամբ:

Իւրաքանչիւր ցաւի համար մի-մի խաչքար յատկացնելն մեզ կթուի, թէ յունական՝ զանազան նպատակաւ զաստուածներ ստեղծելու զաղափարը ի հնումն մտած է և մեր մէջ, որ այժմ ջերմեռանդ հաւատացեալները զանազան խաչերու վերածեր են: Թէպէտ աւելորդ էր մեր այս խորհրդածութիւն, ըստ որում, մեր նպատակը միմիայն խակ նիւթ հրատարակելն է:

Գիւղիս արևմտահարաւային կողմը՝ քանի մը վերստ հեռի, գետակի աջ ափին, կգտնուի *Վարդան նահատակ* ուխտատեղին, որ մի ժայռ է՝ ջրի վրայ թեքուած: Ունի իւր մօտը գերեզման, որ շրջակայ գիւղերի ընդհանուր ուխտատեղին է: Ուխտագնացութիւնը կկատարուի միմիայն Չիք-չորեքշաբթի, այսինքն՝ Աւագ չորեքշաբթի օրը: Գիւղացիներ այդ օր իրենց ուխտը կատարելէն, մոմու խումկ տապակի ժայռի վրայ վառելէն ու հոգևոր պաշտօն կատարել տալէն ետքը խումբ-խումբ ժողովուած երկար ու գետնատարած սեղան կբանան, ուրախութիւն կընեն:

Նոյնպէս արևմտահարաւային կողմ՝ սարաւանդի վերայ, կայ կիսաւեր եկեղեցի փոքր-ինչ ձորացած տեղ, նորա շրջակայ դաշտը կկոչուի *Քիլիսա-դարայ*, որ *Եկեղեցածոր* ըսել է: Նոյն տեղը աւերակ գիւղատեղի է¹⁰⁵:

Բանանց գեղի գետակ, որ *Կոշկարա* կանուանուի, կանցնի երկաթահանքերի մէջէն: Այս երկաթահանքեր մինչև դարուս յիսնական թուականները գործածութեան մէջ էին: Գետակի երկու ափանց վրայ բազմաթիւ երկաթե հանքեր կգտնուեն, որոնց գործադրութիւնը այժմ դադարած է, դուրսէն եկած

104 Գտնվում է Թարգմանչաց վանքից 1,5 կմ հարավ: Տեղացիների շրջանում հայտնի էր Ձեռնավոր (Շոնվեր) անվամբ (նշվ. աշխ., էջ 198):

105 Հնավայրը գտնվում է Բանանցից 6,5 կմ հարավ-արևմուտք: Մինչև բռնագաղթը եկեղեցին նույն կիսավեր վիճակում էր (տես նշվ. աշխ., էջ 200):

մեքենաւոր գործարանաց արտադրած երկաթներու աժանութեան պատճառաւ: Երկաթահանքի գործադրութեան ժամանակի մնացորդ կղկղանքներու շեղջակոյտեր այժմ գիւղիս մէջ շատ տեղեր կտեսնուին:

Գիւղէս 2 վերստ դէպի արևելք՝ գետակի աջ ափին, ի հնումն եղեր է արճճի հանք, որ այժմ անգործադրելի է՝ նորա մէջ գտնուած արծաթամասի սակաւութեան պատճառով:

Գիւղիս արևմտակողմ եղած հանգստարանի¹⁰⁶ գերեզմանաքարերի վերայ կկարդացուեն մէլիքական ցեղի տապանագրութիւններ, որոնց ցեղ կսկսուի Մէլիք-Միրզախանեան Մէլիք-Օհաննէսէն, որոնց ընդարձակ ազգաբանութիւն կգտնուի բանանցեցի Տէր-Միքայէլեանց Ստեփաննոս վարժապետի¹⁰⁷ քով: Այս համառօտ յիշատակութիւն ըրինք, որ գուցէ օր մը անելի լոյս տայ Խամսայի մէլիքական պատմութեան:

Գիւղիս բնակիչ տէր Յովսէփ Տէր-Իսրայէլեանցի մօտ կգտնուին ձեռագիր Մաշտոց՝ գրեալ ի ՌճԻԲ թուին հայոց, և մի ձեռագիր՝ Թօմա Գիմբացի՝ կիսատ և անթուական: Սարգիս Շահմուրադեանի տան կգտնուի մի ձեռագիր՝ «Տեառն Ներսէսի արքեպիսկոպոսի Տարսունի՝ Մեկնութիւն երկոտասան մարգարէից»՝ Ովսէ մարգարէէն մինչև Դանիէլի Ամբակումայ ճաշ ստանալն: Գրուածք նոյնպէս կիսատ է և անթուական:

Գիւղիս եկեղեցին ունի 28 Աւետարան¹⁰⁸, որոնցմէ 14-ը՝ ձեռագիր, մինն միայն մագաղաթի վերայ գրած, որոնց վերաբերութեամբ մանրամասն տեղեկութիւններ արդէն գրած լինելով յիշեալ Ստեփաննոս վարժապետն՝ մենք անելորդ համարեցինք գրել:

Յաւօք սրտի, կասենք, որ գիւղիս մէջ ոչինչ գործ չտեսանք, բացի երկու քարոզ խօսալէ, տեղոյն ամարանոց եկող քաղաքացւոց ճաշերուն հրաւիրուած լինելուն համար:

ԻԶ

Մլգնաբերդ

Ամսոյս 15-ին թող տալով Բանանց՝ գործունէութեան այդ քարացեցերու աշխարհը, մեր փոքրիկ կարաւան լերան ստորոտէն սկսեց դէպի ահագին լեռները բարձրանալ լուերու ջուրերի պէս գառ ի կողքերէլով, յաջ և ահեակ դարձուածքներ անելով՝ յոգնեցանք, շունչ քաշեցինք, քրտինք և վերջապէս պարտաւորուած էինք անդնդախոր ձորերի առ ի կող շառաւիղներու վրայէն անցնելով սրտադող և ոգիապատան եղած երկիւղով շարունակել ճանա-



ՉՈՎՏԱՌ. Մլգնաբերդի գագաթը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

պարհը: Մեր ձախ կողմէն կեանքի և աջ կողմէն մահուան (խորանդունդ ձոր) անջրպետող նեղ շաւիղը, որ մեր յուսոյ պարանն էր, բռնած՝ վեր, հա՛ վեր բարձրացանք, անցանք սարերի մագերուն, անտառներու միջէն: Բնութեան այդ հարազատ, վիթխարի որդիների կողերի վրայէն բարձրացանք դէպի նոցա գագաթ, որ երբէք չեն ենթարկուիր որևէ ուժերի. ո՛չ քաղաքավարական օրէնքի տակ ճընշուած և ո՛չ կանացի սեթևեթական շարժումներու ներքև ճմլուած և ծոռկուած են, այլ ազատ մեծցիր, հա մեծցիր, մինչև գլուխին ամպերու հասուցեր են:

Առաւօտեան արևածագի առաջին բարև առնելով՝ մեզ՝ անցաւորների կիսադողէին այդ անանցանելի լեռներ, ինչպէս յախտեցին մինչև ցայսօր յաջորդաբար հաղորդեր են մարդկային մշտափոփոխ սերնդին: Եւ մեր փոքրիկ կարաւանին ճանապարհ տուին՝ իրենց անտառախիտ քամակի վրայէն անցնելով Մլգնաբերդի գագաթ հասնելու: Այդ գագաթան վրայ առաջին ազատ շունչ առնելուս պէս, բարձր ի գլուխ կանգնած նալլաթ¹⁰⁹ ասացի ստորև դաշտային դրից վերայ բնակուողներուն, որք լճափանց վրայ երբեմն գոռգոռացող և երբեմն երկչոտաբար սուզանող գորտերի նման միշտ հալածուած են կենակուլ արագիւններէն: Ապա բայց երանի կարդացի լեռնային ազատ էրէ վայրիներուն, որք թէպէտ թշուառակենցաղին նամարդ մարդկանց գաղտագողի լարած որոգայթներէն հեռու կբնակին:

Այցելեցինք Մլգնաբերդի *Անասպատ* անուանեալ եկեղեցւոյն¹¹⁰, ուրտեղ մեզ կսպասէր գանձակեցի Նալչագարեանց պ. Սողոմոնն՝ տեղոյն աներակ եկեղեցին ի հիմանց նորոգելու ուխտադրութիւն ի կատար ածելու համար¹¹¹:

¹⁰⁹ Նզովք, անեծք:

¹¹⁰ Մաճնաբերդի վանքը գտնվում է Գաշկեսանի շրջանում՝ Հարց-հանգիստ գյուղից 2,2 կմ հարավ-արևելք՝ լեռան գագաթին:

¹¹¹ Սողոմոն Հարությունյան Նալչագարյանցը Մաճնաբերդի Սբ. Սարգիս եկեղեցին նորոգել է 1891 թ. և այդ մասին պատմող շինարարական արձանագրությունը թողել բարավորից վեր՝ մարմարե սալին (**Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 293: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 249):

¹⁰⁶ Գերեզմանական հուշարձանների արձանագրությունները տես՝ նշվ. աշխ., էջ 173-189:

¹⁰⁷ Ստեփաննոս Տէր-Միքայէլեանը 1878 թ.-ից դասավանդել է Չարդախլուի ծխական դպրոցում (նշվ. աշխ., էջ 514):

¹⁰⁸ Բանանցում պահվող 13 ձեռագիր մատյանների մասին մանրամասն տես՝ **Սիմայան Թ.**, նշվ. աշխ., էջ 74-75, 99:



ՉՈՎՏԱՌ. Մլզնաբերդի վանքը (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Մլզնաբերդ անուանեալ տեղն ամէն կողմէն ուղղաբերձ բարձրացած սարի գագաթ է, որուն վրայ ի հնումն շինուած և ապա նորոգուած է Անապատ անուանեալ եկեղեցին ի թուին հայոց *ՌՃԽԳ*: Եկեղեցիէն մի փոքր հեռու՝ հիւսիսակողմ, կգտնուի *Քոյր* անուանեալ ուխտատեղին, որ մի խաչքար է՝ շրջապատուած աննշան պատով, հովանաւորուած մի ահագին կաղնի ծառի ներքև, ինչպէս և եկեղեցին ևս բազում կաղնիներով շրջապատուած է:

Մլզնաբերդ անուանեալ գագաթի վերայ բնաբերդի նշան չկայ, այլ ինչպէս կթուի, յիշեալ Անապատ եկեղեցին անցեալ ժամանակի մէջ վանք եղած է, որի հարաւային կողմը կգտնուին վանքի միաբանութեան խուցերու աւերակներ:

Մլզնաբերդի միւս մասի՝ հիւսիսային կողման չորեքգլխանի անմատչելի լեռան կատարի վրայ կան մարդկային (բուրջ) շինութեան մնացորդներ, որուն շրջակայ գիւղօրէից բնակիչներ *Ղալա* կանուանեն: *Ղալա* անուանեալ լեռան արևելեան կողման կից կայ և *Նարինդալէ* անուանեալ բերդը: Սոյն խաչաձև, չորեքգլխանի բերդասարեր մի ճանապարհ միայն ունին, ամէն կողմանէ գրեթէ անմատչելի են, որոնց մէջտեղ բաւականաչափ վարելահողեր կան, որք պաշարման ժամանակին կարող են հաց մատակարարել պաշարուածներուն:

Այս կողմանց լեռներու մէջ բարձրագլուխ կիսանդիսանան *Մլզնաբերդ*, *Ղափլանդալա* և *Չօփրատ* սարեր, եռանկլինի ձևով, որք կարծես թէ եռապետութեան զօրութիւնը և աջակցութիւն կկազմեն աշխարհաւեր ժամանակներու մէջ՝ իրենց վրայ ապաստանող ժողովուրդներ արկածներէն պաշտպանելու: Տեղական բնակչաց ասանդական խօսքերուն նայելով՝ պարսից ասպատակութեան ժամանակ մերձակայ գիւղօրէից բնակիչներ, սոյն եռապետ լեռներու անփոք գլուխների վրայ ժողովուած, իրարու պաշտպան հանդիսացեր են՝ թշնամու ուժը խորտակելով:

ԻՒ ՉՈՎՏԱՌ

Ամսոյս 16-ին այցելեցինք Չովտառ գիւղը: Բայց չեն մոռանար ասելու իմ ուրախութեան այն զգացումներ, որ առթեցին իմ մէջ ինձ դիմաւորող ձիաւորեալ բազմութիւն երիտասարդներ, իրենց զինակոտ վարժութեամբ և ձիարշախ ճարպիկութիւններով: Սոքա յիշողութեան բերել տուին ինձ Վարազայ *Աստղկան* բերդի ներքևի սարահարթներու վրայ իմ երիտասարդութեան ժամանակի՝ վանեցի երիտասարդաց ձիավարժական կրթութիւն և զինավարժութիւն սովորեցնելն: Չովդառեցի դիմաւորող երիտասարդաց մէջ ես միայն ծեր գտնուեցայ, ուստի, չզիտեմ ինչու, ակամայ արտասուօք լեցուած աչքերս դժգոհ կերպով յառեցան երկնեց կապուտակ կամարի վրայ, և նոյն հետայն անիծեցի նստողական կեանքը, որ իմ պնդակազմութիւն և ջղային ուժը թուլացուցեր և իրական աշխարհի գործունէութեան համար զիս անպիտանացուցեր էին: Յիշեցի այն մեծ մարդու՝ ինձ տուած տիտղոսը՝ «գործօն վարդապետ» և տխրեցայ, զոր այլևս այսուհետև իրամբ վայելելու չի պիտի արժանանամ, զի կեանքիս 65 տարւայ ժամանակի հնացումն աննորոգելի էր: Ինձ տիրող ծերութիւն այնչափ զգալի չէր եղած, ինչպէս որ այսօր, ուստի և ասպանդակները ուժգին մխեցի ձիու կողերին և մեկուսացայ՝ թող չտալով, որ այլևս իմ աջը համբուրեն:

Բանանց գիւղի՝ միջի անգործունէութեան այլևս տեղի չտալու համար նոյնիսկ երեկոյին սկսեցինք գիւղիս վարժարանի շինութեան համար հոգատար յանձնաժողով ընտրել տալ Չովդառի բնակչաց թէ՛ վարժարանը կառուցանելու և թէ՛ վարժարանի պիտոյից համար կալեմասը հաւաքելու և թէ՛ արմտեաց նուազ տարիներու մէջ աղքատ գիւղացուց սերմնացու պատրաստելու: Այսպիսի ձեռնարկութիւն և ասոր վերաբերեալ յորդորական խօսքեր կրկնուած են գրեթէ ամէն գիւղի թէ՛ եկեղեցեաց քարոզներու և թէ՛ առտնին խօսակցութեանց մէջ: Չովդառեցուց համար որչափ որ լսել էինք, թէ կոպիտ են, վայրենաբարոյ և բարեգործութեան համար անթափանցելի միտք ունին, բայց ես նորա հակառակը գտայ: Տեսնելով նոցա նորաչէն գեղեցիկ եկեղեցին՝ *Ս. Յովհաննէս* անուամբ¹¹², և թէ՛ 1888 թուականի մէջ կառուցուած երկյարկանի սինագարդ նրբաճաշակ զանգակատունը և թէ՛ նոցա պատրաստականութեան սիրտը՝ նոր վարժարան կառուցանելու, ուստի և մեր համոզմունք ուղղեցինք նոցա մասին:

Վարժարանի շինութեան համար գիւղի ընդհանուր ժողովէն հոգատար անդամներ ընտրուեցան

112 Ըստ շինարարական արձանագրութեան՝ վերակառուցվել է 1869 թ. (**Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 20, 18 փետրվարի, էջ 295: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 244): Մինչև քունագաղթը կանգուն էր:



ՉՈՎՏԱՌ. գյուղը հարավ-արևելքից (ուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)



ՉՈՎՏԱՌ. Սբ. Գովհաննես եկեղեցին (ուս.՝ Ա. Կարապետյանի, 1989 թ.)

Արզման Յովհաննիսեան, Ամիրխան Յակովբեան, Պօղոս Յարութիւնեան և Բաղալ Մխիթարեան, որք ամսոյս 18-ին գրուած համախօսական վճռով պարտաւորուեցան առաջիկայ սեպտեմբերի սկզբէն իրենց յանձնառական պաշտօն ի գործ դնելու:

Չովտառ գիւղը կբաղկանայ 98 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 432 արական, 383 իգական: Գիւղը քահանայ չունենալու համար գիւղացիներ կհովուէ Ս. Թարգմանչաց վանից վանահայր արժ. Թէոդորոս վարդապետ Շիրակունին, որոյ առ ոտս քանի մը տարիներէ ի վեր կուսանի քահանայապատշաճ գիտելիքը գիւղիս բնակիչ Վարդազար Երեմեանցն և որոյ համար երեք տարիէ ի վեր խնդիր մատուցուած է հոգևոր բարձրագոյն իշխանութեան քահանայանալու, բայց խնդիրն անլուծանելի մնացած է մեզ անյայտ պատճառով:

Եկեղեցին ունի մի մագաղաթեայ Աւետարան՝ գրեալ ՌՀԹ հայոց թուականին, և մի ձեռագիր Յայնամուրք, որը կգտնուի հանգուցեալ տէր Ղազար Տէր-Մխիթարեանի որդւոց տան:

Գիւղիս վերև բարձրացած լեռան (Չովդառ սար) գլուխը կայ խաչքար-ուխտատեղի՝ Ս. Մինաս անուամբ: Գիւղիս հիւսիսակողման լեռնագօտիի հարաւային լանջի վրայ կգտնուի Բաղչիկ մեծ աներակ գիւղատեղին, որոյ մէջ կայ մի մեծ կիսավուկ եկեղեցի:

Գիւղիս և Բաղչիկի մէջտեղ՝ սեպացած լեռան ծայրի վրայ, կայ մի ուխտատեղի՝ Պտկաքքերք անունով, որ ցածուն պատերով շրջապատած խաչքար մի է:

Գիւղիս և իւր հիւսիսակողման գետակի մէջտեղ կայ մի մատուռ-ուխտատեղի՝ Ոսկեթել անուամբ (թերևս Ոսկեմատն հայոց նորա ազգակից): Ասորմէն քանի մը քայլ ստորև կայ մի խաչքար, որուն կանուանեն *Քոյր ոսկեծիլ եղբոր*: Սոցա մէջտեղ կբոխէ մի բարեհամ աղբիւր՝ այնչափ անուշ, որ արդարև Ոսկեծիլին հրաշից վայելուչ մի գործ կարէ համարուել: Ոսկեծիլ մատուռին կհովանաւորէ մի

շատ հին հսկայ բոխի ծառ, որոյ կեանք գրեթէ քայքայուած, բայց երկար ժամանակ կարող է մահուան դէմ մաքառել:

Գիւղիս արևմտեան կողմ՝ սարամէջ մի զոգաւոր տեղ, կայ ուխտատեղի-մատուռ՝ *Կարմիր եկեղեցի* անուամբ, և սոյն եկեղեցւոյ և գիւղիս մէջտեղ կայ *Ղարամուրադ* անունով մի աներակ գիւղատեղի:

Բաղչիկի արևելեան կողման սարաւանդի բլրակի գլխին կայ մի քառակուսի, սրբատաշ քարերով շինուած մատուռ կամ մահարձան, որոյ քաղուածօրէն շինուածքի գլուխն խոնարհուած է, և ներս մտնելու դուռ չունի:

Գիւղիս արևելահիւսիսային կողմ բարձրացած սարազլխին կայ *Քամախաչ* անունով մի ուխտատեղի:

Չովտառի հին անունն, ըստ ասանդութեան հնոց և ծերոց, *Հարս հանգիստ* կանուանուի, ոմանք՝ Հարց հանգիստ: Գիւղիս բնակիչ Ստեփան Առստամեան, որ իւր ուսումն ասարտեր է Տփլիսու ուսուցչական սեմինարիայի մէջ և այժմ ուսուցչական պաշտօն կվարէ Հին Նախիջևանու քաղաքական ուսումնարանը, արձակուրդի ժամանակ գիւղիս մէջ գտնուելով, այցելեց մեզ և խոստացաւ իւր ձեռներեցութեամբ և գիւղիս երիտասարդաց աջակցութեան օգնութեամբ նպաստել նոր շինուելիք վարժարանին:

Սորա արտօրէից հունձեր նոր սկսած՝ այր մարդիկ թէ՛ կհնձէին և թէ՛ օրաններ գրաստներով կալատեղեր կբերէին, իսկ կալ կասելու բաժինն միայն իգական սեռին մնացած էր, կանայք և աղջկունք ամենայն արիաջանութեամբ օրրանը կկասէին և կքամէին, այսինքն՝ քամու տալով երան կընէին, իսկ պառաւունք մտած շեղջացած արմըտիքը մաղելով կմաքրէին: Քաղաքացի կանանց փափկակեաց անգործութեան վատ սովորութիւնը դեռ չէ կարողացել բարձրանալ այս սարազլուխ, ուստի և գիւղիս կանայք արու գաւակ շատ կծնանին:

ԼԵՎԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԽԱՓԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ


Բաֆֆի Քոթթոշյան

2020 թ. այն չարաբաստիկ նոյեմբերից անցել է մեկ տարի, երբ անառիկ Քարվաճառը կրկին հանձնվեց մշակութակործան խաշնարածին, սակայն հայկական հուշարձաններով լեցուն երկրամասի՝ արդեն վտանգված հայաստեղծ կոթողներն իրենց իրավական տերերին հիշեցնում են աներկբա մի իրավունքի մասին՝ ՎԵՐԱԴԱՐՉ:



Այդ հազարավոր հուշակոթողներից մեկն է Արցախի Հանրապետության Նոր Շահումյանի (Քարվաճառի) շրջանի Լև գյուղի տարածքում հայտնաբերված եկեղեցու շինարարական արձանագրության մասին մտաքի ճակատակալ քարը.

Թ(վին) ՉԾԴ (1305), | զմխիթարե(ա)լ շինող յիշեսցիք ի Զ(րիստո)ս եւ | սահմանեցին զկիրակէի | պատարագն անխափան:



Վերջինս, որ պատված է եղել ոչ այնքան հաստ հողաշերտով, 2020 թ. նոյեմբերի երկրորդ կեսին՝ Քարվաճառի հայաթափումից օրեր առաջ, հայտնաբերել է հայրենիքի պաշտպան, նախնայաց հիշատակների ճանաչողությանը հետամուտ բանանցեցի Մաթևոս Չալումյանը:

Շինարարական արձանագրությունը (լուս.՝ Մ. Չալումյանի, 2020 թ., գրչ.՝ հողվածագրի, 2021 թ.)

Ուշագրավ է այն փաստը, որ երջանկահիշատակ Ս. Կարապետյանը, 2018 թ. այցելելով Լև գյուղ, տակավին հողածածկ ճակատակալ քարի մերձակայքում արձանագրել է միջնադարյան գերեզմանոցի գոյությունը, որը գտնվում է «...գյուղի մեծ գերեզմանոցից 770 մ հարավ (N 40°15'11.23", E 046°05'45.87", ծ. մ. 1779 մ)՝ ճամփեզրին: Մեր զինվորականներն այստեղ ևս խաչքարերն ու նրանց բեկորները մեկտեղել են և կանգնեցրել, սակայն այս վերջինների մեջ արձանագիր միավորներ չկան»¹:

սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց յիշատակ ինձ և տե[ա]րն իմոյ՝ [Ա]միր Հասանայ, ի վաւերում քազազարդ պարձանացս որդոյս մերոյ՝ Էաշոյ, և Թուղտիկին, և հանգուցեալ պարոնացն Վարիամայ, և Մինա Խաթունին, և տուաք ի վանս Լևայ, գոր էր ընդ իշխանութեամբ մերով և էր մեր մար(°) գերեզմանատեղ, ի ձեռն լուսափայլ եպիսկոպոսին Դաթի, որ էր առաջնորդ տեղացս...: Որ զաւետարանս հանել ջանայ ի սուրբ Ստեփաննոսէս ու կամ զժամն խափանէ՝ դատի յաստուծոյ...»²:

Ի՞նչ մեծ էր լինելու հուշարձանագետի ոգևորությունը, երբ իմանար, որ նշված գերեզմանոցի մացառուտներում թաքնված է երբեմնի Լևի վանքի քարեղեն խոսուն վկան:

Ըստ Ս. Կարապետյանի դիտարկումների՝ վանքը կառուցված է եղել «...համակ սրբատաշ քարով... և... ճարտարապետական մեծարվեստ մի կառույց է եղել», որին պատկանած երեսապատի սրբատաշ քարերը որպես շինանյութ գործածվել են թրքացած քրդերից մեկի բնակելի տան որմներում³:

Յավոք, ճշգրիտ տեղադրությամբ անհայտ վանքը, որի եկեղեցու հավանական մասնիկն է նորահայտ այս ճակատակալը, գրավոր աղբյուրներում հիշատակված ենք գտնում միայն մեկ անգամ՝ 1328 թ. «...ես՝ աղախին Զրիստոսի Ռ-ըզուքանս, ստացայ զաստուածափառ և զաշխարհալոյս զկենսունակ

1 Կարապետյան Ս., Մոավականք, Երևան, 2019, էջ 285:

2 Հայերեն ձեռագրերի ԺԳ դարի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 207-208:

3 Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 284:



Խաչքարեր վանքատեղիի տարածքում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

Վերոշարադրյալից եզրակացնում ենք, որ 1305 թ. կառուցված եկեղեցին վերաբերում է Լևի վանքին, իսկ ճակատակալը, ամենայն հավանականությամբ, ընկած էր երբեմնի վանքի տեղում, որտեղ նաև առկա են պատերի հետքեր և ոչնչացված գերեզմանոցից փրկված մի քանի խաչքարեր:



Մացառներով ծածկված վանքատեղին (լուս.՝ Ս. Չալումյանի, 2020 թ.)

Թե վանքում հստակ ե՞րբ է խափանվել պատարագը, մեզ հայտնի չէ⁴, սակայն մի քան բացահայտ է՝ կառույցը հիմնահատակ կործանվել է Խորհրդային Ադրբեջանի մշակութակործան պետական քաղաքականության հետևանքով, իսկ վերականգնման առաջին հույսը, ցավոք, կորցրել 2020 թ. նոյեմբերին:

⁴ Հավանաբար ԺԸ դարի առաջին տասնամյակներին, երբ հայ կյանքը մարել է այստեղ:

ՎԵՐԱԳՏԵՎԱԾ ՄԱՂԱՍԲԵՐԴԸ

Ֆիլիպ Դանգլը

Թ. Թորամանյանը հպանցիկ հիշատակություն ունի լայնարձակ Ախուրյանի հովտում՝ սարավանդի վրա՝ Մաղապերդ փոքր բերդի մոտ գտնվող քաղաքի ավերակների մասին: Պետք է նշել, սակայն, որ մինչև մեր ուսումնասիրությունն այս բնակավայրը, որը գտնվում է Հայաստան-Թուրքիա սահմանին հարակից ռազմական գոտում, երբևէ չի հետազոտվել, և նրա վերաբերյալ որևէ հրատարակություն չկա¹:

Այստեղ պահպանվել են Ջ դարի վերջին Մորիկ կայսեր նախաձեռնությամբ հիմնադրված քաղաքի ավերակները: Նշված ժամանակաշրջանում՝ Անիի՝ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակվելուց դեռ շատ վաղ, Մաղապերդը Ախուրյանի հովտի ամենամեծ քաղաքն էր: Պարիսպների մնացորդներից դատելով՝ մինչև արաբական տիրապետության հաստատվելը Հայաստանում այստեղ պաշտպանական բազմաթիվ ամրություններ են եղել:

Հայկական միջնադարյան ամրությունները դեռևս բավականաչափ ուսումնասիրված չեն՝ չնայած այն հսկայական ավերակներին, որոնք պահպանվել են Անիում: Հենց այս պատճառով էլ պրոֆեսոր Ժան-Պիեռ Մահեի գլխավորությամբ Անիում աշխատող ֆրանսիական հնագիտական արշավախմբի գլխավոր նպատակներից մեկն է եղել հետևողականորեն հետազոտել և վերլուծել ամրաշինական այս վիթխարի կառույցները, որոնք ողջ պատմության ընթացքում պաշտպանել են քաղաքը: Այս հետազոտությունը նոր լույս է սփռում քաղաքի պատմության և պաշտպանական, ինչպես նաև նրա կառուցման տեխնիկական և ճարտարապետական առանձնահատկությունների վրա՝ միաժամանակ նաև հնարավորություն ընձեռելով մշակել չափանիշների համակարգ, որը կարող է կիրառվել ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող այլ հուշարձանների ուսումնասիրության ժամանակ:

Որպես արշավախմբի մասնակիցներ՝ մենք, իհարկե, հատկապես հետաքրքրված էինք Մաղապերդ անվամբ հայտնի փոքր բերդով, որը գտնվում



Մաղապերդ-Ծառքարը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ֆ. Սաբլերոլի, 2013 թ.)



է Ախուրյանի հովտում՝ Բագրատունյաց նախկին մայրաքաղաքից ուղիղ գծով 2 մղոն դեպի հարավ: Կառուցված է գետի ափից մոտ 40 մ բարձրության վրա՝ փոքր, բազալտե սարավանդին: Ճակատային մասում ունի միմյանց կից 3 բարձր աշտարակ, ինչպես նաև արգելաթումբ և ժայռափոր խանդակ: Թեև համարվում էր Բագրատունյաց մայրաքաղաքի առաջապահ պահակակետ՝ կառուցված տեղի գահակալների կողմից, այնուամենայնիվ, բավականին խորհրդավոր էր և չբացահայտված: Այն չուներ հայերեն վիմագրեր և չէր հիշատակվում միջնադարյան աղբյուրներում: Ավելին, նրա մասին ոչինչ չեն գրում անգամ Ի դարի սկզբի հնագետները: Բերդն այսօր անհասանելի է, քանի որ գտնվում է սահմանային զինվորական գոտում:

2005 թ.², առաջին անգամ այցելելով բերդ, մենք կարողացանք եզակի տեղեկություններ հավաքել պաշտպանական այս ամրության գործառնության և զարգացման մասին: Հատկապես կարևոր է այն, որ ձեռք բերած տեղեկությունները մեզ հնարավորություն տվեցին վերլուծելու մուտքի տեղադրությունը: Սրանով ավելի կարևորվեց բերդի դերը. վերջինս փաստորեն վերահսկում է այն արահետը, որը թույլ է տալիս գետն անցնել ծանծաղուտով, ուր գերիշխում են բազալտե ուղղաբերձ ժայռաբեկորները:

Այս փոքր բերդը վեր է խոյանում գետի երկու ոլորանների միջև ընկած հատվածում, որտեղ ջրի հոսքը դանդաղ է, ինչի շնորհիվ էլ ստեղծվել են

1 Հոլվաժի անգլերեն հրատարակությունը (**Dangles Ph.**, Mahasberd regained, «Բանբեր հայագիտության», 2015, № 1, էջ 118-140) մեզ է փոխանցել ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող Համազասպ Խաչատրյանը՝ մեր հանդեսում հայերեն տարբերակով լույս ընծայելու համար: Թարգմանությունը՝ ՀՃՈՒ Իմմանուրամի աշխատակից Գայանե Մովսիսյանի:

2 Բերդ են այցելել Ն. Պրուտոն և Ֆ. Սաբլերոլն Անիի հնագիտական արշավախմբի գործունեության շրջանակներում: Հմմտ. **Ph. Dangles and N. Prouteau**, Observations sur quelques forteresses de la région d'Ani (12th -17th century), pp. 273-299.



Դեպի Մաղաբերդ-Շառքար տանող դարպասի հատակագիծը (զծ.՝ Ֆ. Դանգլըի, չափ.՝ Ֆ. Սաբլերոլի և Ն. Պրուտոյի, 2013 թ.), բերդի մուտքը (լուս.՝ Ն. Պրուտոյի, 2013 թ.), դարպասի կտրվածքը դեպի արևելք (զծ.՝ Ֆ. Դանգլըի, չափ.՝ Ֆ. Սաբլերոլի և Ն. Պրուտոյի, 2013 թ.)

նպաստավոր պայմաններ նստվածքների կուտակման, հետևաբար մաս գետն անցնելու համար:

Մուտքը բացված է բերդի ամրացված ճակատամասի հյուսիսարևելյան ծայրին: Քառանկյուն շրջապարսպից բացվող դուռը նախկինում պսակված է եղել բարավորով: Շրջապարսպի մի կողմում դեպի բերդ տանող տարբեր ճանապարհներն են, իսկ մյուս կողմում դեպի ծանծաղուտը երկարող ժայռային բնական ելուստն է:

Դռան և նրա հարակից տարածքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն ունի իրարահաջորդ մշակութային 3 շերտ: Առաջին երկուսն առնչվում են բուն դռանը և շրջապատող որմին, իսկ երրորդը՝ ուշ շրջանի աշխատանքներին, երբ վերանորոգվել են պատերի և աշտարակների վերին հատվածները, ներառյալ մաս ատամնավոր մասերը, որոնք դեռևս լավ վիճակում էին Ի դարասկզբի լուսանկարներում: Խճաքարե կոպիտ շարվածքով այս հատվածում՝ դռան վերևում, երկու քար է տեղադրված, որոնց վրա կան արաբատառ արձանագրություններ: Դրանցից ամենակարևորը³ և միակը, որ հնարավոր էր ուսումնասիրել, վերականգնման նշված աշխատանքները թվագրում է ԺԸ դարով: Այդ ժամանակ այս փոքր բերդը դեռ չէր կորցրել ռազմավարական նշանակությունը. ԺԶ-ԺԹ դդ. տարածաշրջանում մոլեգնում էին պարսկա-օսմանյան պատերազմները,

որոնք, այնուամենայնիվ, Անի չհասան (մայրաքաղաքը լքված էր)⁴:

Մաղաբերդի դռան առաջին երկու ժամանակագրական շերտերը որևէ հուշում չեն տալիս ճշգրիտ թվագրման համար: Առաջին շերտի հիմնական տեսքը հաշվի առնելով (մոնոլիտային բարավորով ավարտվող նեղ անցուղի է) կարելի է ենթադրել, որ այն հին է, բայց միաժամանակ կարելի է համարել արխայիզմի նշան կամ էլ բացատրել բերդի համեստ չափերով: Դռան՝ պայմանական երկրորդ ժամանակահատվածով թվագրվող շրջանակի եզրերը հատված են. նմանատիպ շրջանակ կարելի է տեսնել մաս Անիի մեծ դարպասին (ԺԳ դար), բայց այս տարածքում ավելի ամբողջական պահպանված Ժ-ԺԲ դդ. դարպասներ չկան, որ մենք կարողանանք ճշգրիտ թվագրել: Երկրորդ անցուղու կամարը պահող սյուների խոյակների զարդանախշերը կարելի է համեմատել Անիի Իգաձորի դարպասի նախշերի հետ: Վերջինս, որը մեզ հայտնի չորս դարպասներից ամենափոքրն է և ամենալավ պահպանվածը, կառուցված է քաղաքի արտաքին հյուսիսային պարսպի մեջ, վերագրվում է Սմբատ արքային և թվագրվում Ժ դարի վերջերով կամ ԺԱ դարի սկզբով: Մակայն չենք կարող ասել, թե ինչպիսին է եղել այս դռան արտաքին հարդարանքը, քանի որ այն դեռ ծածկված է ԺԳ դարի շարվածքով:

Այս նախնական նկատառումները հնարավորություն են տալիս Մաղաբերդի պատմությունն ու ճարտարապետական ձևերը կապելու տվյալ երկրամասի՝ Ժ-ԺԳ դարերի պատմության և տեղում

3 Այս արձանագրություններն ընդգրկված չեն ոչ Ն. Խանիկովի ոչ էլ Ա. Խաչատրյանի աշխատություններում: Մենք շնորհակալ ենք պրոֆեսորներ Ջ.-Մ. Մուտոնին (J.-M. Mouton, EPHE, Paris) և Ֆ. Իմբերտին (F. Imbert, Aix Marseille University), ովքեր համաձայնեցին ուսումնասիրել բերդի գլխավոր՝ մինչ օրս չուսումնասիրված արձանագրությունը: Երկուսն էլ եկել են այն եզրակացության, որ արձանագրությունը կարելի է թվագրել հիջրայի 1160-ական թթ.-ով: Դեռևս ուսումնասիրման և վերլուծության փուլում են արձանագրության լեզուն և այն անձի ինքնությունը, որին էլ այս հիշատակագրությունը վերագրում է վերականգնման աշխատանքները:

4 Մաղաբերդը 1639 թ. պայմանագրով հանձնվել է Կարսի օսմանյան փառային, որն էլ հավանաբար քանդել է այն (Kavani A., "The Treaty of 1639 and Its Consequences for Armenia and Armenians", Armenia and Armenians in International Treaties, Armenian Review, vol. 52, 2010):



Մաղասբերդի՝ ժՆ դարի կեսերին պատկանող արձանագրությունը (լուս.՝ Ն. Պրուտոյի, 2013 թ.)



Մաղասբերդը և քաղաքատեղին (լուս.՝ Google Earth-ի, 2013 թ.)

տեխնիկական ու ոճական առանձնահատկությունների զարգացման հետ: Այնուամենայնիվ, այս հուշարձանը հնարավոր եղավ նորովի բացահայտել միայն 2004-2005 թթ.⁵, երբ Google Earth-ի արբանյակային լուսանկարների դիտարկումը բերդից վեր՝ սարավանդի եզրին, գետի մակարդակից ավելի քան 100 մ բարձրության վրա, ցույց տվեց շատ ավելի կարևոր և ամրացված մի քաղաքատեղի: Վերջինս, որը մինչ օրս էլ թուրքերեն կոչվում է Էսկի (Հին) Մաղասբերդ, ունի բացառիկ բարենպաստ դիրք: Տարածվում է հյուսիս-արևմուտք–հարավ-արևելք առանցքով ձվաձև ձգված և շրջակայքից երկու փոքր հովիտներով առանձնացող սարավանդի վրա, որի մի վիթխարի հատված հեռվից նմանվում է հովտի խորը գոգավորության մեջ կախված կղզու: Քաղաքատեղին, որը մեղմ թեքությամբ տարածվում է դեպի հարավ-արևելք, բոլոր կողմերից պաշտպանված է թեք, գառիվայր լանջերով, իսկ սարավանդին միացած է միայն արևմտյան կողմի նեղ ճանապարհով:

Հենց այս դիրքն է նկարագրված բնակավայրի հիմնական սկզբնաղբյուրի՝ պատմիչ Ջաքարիա Սարկավազ Քանաքեռցու (1627-1699) աշխատության մեջ: Նա նշում է՝ Մորիկ կայսրը (582-602), որ հայկական ծագում ուներ, «...առաքեաց ՚ի հայրենի երկիրն իւր ՚ի Հայս՝ այր ոմն հայ ազգաւ՝ Մաղասանուն՝ շինել քաղաք մի յաշխարհին հայոց յանուն իւր: Եւ նա երթեալ գտանէ տեղի մի ՚ի Շիրակ գաւառի՝ մերձ ՚ի յԱնի հարաւակողմն՝ ՚ի վերայ Ախուրեան գետոյ՝ ՚ի մէջ երկուց լեռանցըն ի տափարակ տեղի, որ կողմն բարձր քարափք էին. և յարևմտեան կողմն փոքր-ինչ դիւր և սակաւ ինչ գառ ի վայր. և

հաւանեալ տեղոյն՝ պարսպեալ զայն, և կախեալ դուռն՝ անուանեաց Մաղասաբերդ»⁶:

2013 թ. աշնանը մենք կարողացանք այցելել Վերին Մաղասբերդ բնակատեղի, որը մինչ այդ երբևէ չէր ուսումնասիրվել⁷: Պաշտպանական ամրությունների պահպանված մնացորդները հիմնականում բնակատեղիի արևմտյան ճակատամասում են, որտեղով այն սարավանդին է միանում թեթևակի գառիվայր ճանապարհով: Այս ամրացված ճակատամասը, որը համեմատաբար կարճ է (մոտ 250 մ արևմուտքից արևելք), իր մեջ ներառում է քաղաքի դարպասը և անհավասարաչափ տեղադրված յոթ աշտարակներ: Կառուցման տեխնիկայի առումով այս հատվածը շատ միատարր է. ոչ մի հստակ հետք չի պահպանվել ո՛չ նախկինում կատարված աշխատանքներից, ո՛չ էլ հետագա հավելումներից: Պետք է նշել, սակայն, որ առկա կառույցները շատ բազմազան են. կան կլոր և քառանկյուն երկուսական, ինչպես նաև Ս-աձև երեք աշտարակներ: Կասկած չկա, որ այս գլխավոր ամրացված ճակատամասից պարսպապատը շարունակվել է դեպի արևելք և արևմուտք՝ հասնելով մինչև սարավանդը


5 Շնորհակալություն ենք հայտնում Ֆիլիպ Սարգերովին՝ Անիի ֆրանսիական արշավախմբի տեղագրին՝ այս բնակատեղին բացահայտելու և մեզ տեղեկացնելու համար:

6 Zakaria the Deacon, Mémoire historique sur les Sofis et Cartulaire de Iohannou-vank, in Collection d'historiens arméniens, 2, translated by M.-F. Brosset, S-Pb, 1876, p. 68.

7 Շնորհակալություն ենք հայտնում Նորվեգիայի մշակութային ժառանգության ուսումնասիրությունների ինստիտուտին՝ ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Փալուդան-Մյուլլերի, որի օգնությամբ հնարավոր եղավ կատարել այս ճամփորդությունը: Թ. Թորամանյանն ընդամենը հպանցիկ է խոսում այս բնակատեղիի մասին՝ հիշատակելով շատ լայնարձակ մի սարավանդի վրա (Մաղասբերդ հասնելուց առաջ) գտնվող ինչ-որ քաղաքի ավերակներ, որոնք շրջապատված էին պարիսպներով և բազմաթիվ կառույցներով (Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1948, էջ 312): Կարեն Մաթևոսյանը բնակավայրը նույնացնում է Հռոմոսի վիմագրերից մեկում հիշվող Ծառավանի հետ (Մաթևոսյան Կ., Անին և անեցիները, Երևան, 2021, էջ 184-185):



Մաղաքերի քաղաքատեղին հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)



Քաղաքատեղիի ամրությունների ուղվագծային հատակագիծը (չափ.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)

շրջապատող բնական լանջերի գագաթները: Պահպանվել են մի քանի հատվածներ, որոնք, բացառությամբ մեկի (ստորև կանդրադառնանք), բոլորն էլ ուղիղ, աշտարակներ չունեցող արտաքին պարիսպների հետքեր են:

Քաղաքի դարպասը պարզ և 3,50 մ լայնությամբ մի անցուղի է՝ բացված այս ճակատամասի հարավային եզրին կից բավական լայն պարսպից: Անցուղու յուրաքանչյուր կողմում կան խորշեր: Փայտե դռնից կամ նրա գերաններից ոչ մի տեսանելի հետք չի պահպանվել, ինչպես նաև՝ անցուղու ծածկը, եթե այն երբևէ եղել է: Այս դարպասի ամենամեծ յուրահատկությունն այն է, որ, ինչպես երևում է, նրա երկու կողմերում եղել է ակնհայտորեն ասիմետրիկ (անհամաչափ) երկու կառույց: Հյուսիսարևելյան կողմում պահպանվել է պարսպից զգալիորեն (մոտ 9 մ) դուրս եկած Ս-աձև աշտարակ: Նրա զլխավոր առանցքն ուղղահայաց չէ արտաքին պարսպին, այլ թեքվում է դեպի արևմուտք, որ զուգահեռ լինի դեպի դարպասը տանող արահետին: Աշտարակի պատն ունի ավելի քան 2,50 մ լայնություն, իսկ ներսում կասենյակ, որտեղ կարելի է մուտք գործել հետևի նեղ՝ 0,90 մ լայնությամբ դռնով (պսակված է կիսաշրջանաձև կամարով): Ստորև նկարագրվող բոլոր աշտարակներն ունեն նմանատիպ դռներ (թեթևակի տարբեր լայնություններով), որոնք բացվում են դեպի ներսի սենյակներ: Վերոհիշյալ աշտարակի սենյակը հետևի նեղ հատվածում ունի 4,50 մ լայնություն, բայց նրա չափերը զգալիորեն փոքրանում են աշտարակի այն մասում, որը պատից դուրս է եկած, և աշտարակի երկու կողմերը զուգահեռ չեն իրար:

Հավանաբար մեկ այլ շինություն էլ գոյություն է ունեցել մուտքից հարավ-արևելք, բայց ներկայումս պահպանված աննշան մնացորդները թույլ չեն տալիս անգամ ուղվագծել այն: Դատելով պահպանված որմերի հաստությունից՝ միգուցե այստեղ եղել է մեծ որմնահեծ կամ աշտարակ, որը, ամենայն հավանականությամբ, ավելի փոքր է եղել, քան արևմտյան աշտարակը:

Այս կառույցին կից կա մոտ 3,50 մ լայնությամբ և հավանաբար նույնքան խորությամբ թաղակապ

որմնախորշ, որը կառուցվել է արտաքին պարսպի և նրա առջև գտնվող շինության մեջ: Այն հավանաբար բացվել է դեպի քաղաքամեջ (ճակատը չի պահպանվել), ոչ մի հետք չկա ենթադրելու, որ ունեցել է որևէ աշտարակի մեջ բացվող դուռ:

Որմնախորշից արևելք քաղաքի պարիսպը դարձյալ հասնում է իր միջին լայնությանը (մոտ 2 մ): Այս հատվածում նրան անմիջապես կից են որոշ տպավորիչ շինություններ: Դրանք հենվում են այն անկյան վրա, որը մուտքի ճակատամասի արևմտյան սահմանագիծն է: Արտաքուստ այս անկյան վրա կա աշտարակ (ներքուստ կատարելապես շրջանաձև է և ունի 5,50 մ տրամագիծ, իսկ պատերի հաստությունը մոտ 2 մ է): Մուտքի դռան հետնամասը տեղադրված է պատի մի կարճ հատվածում՝ անկյուն կազմելով հարևան պատերի միջև: Քանի որ կառույցի այս հատվածը բավական բարձր է, մենք չենք կարող նկատել մուտքի դռան վերևում առկա պատուհանի հենարանները, իսկ պատուհանը, ամենայն հավանականությամբ, դռան չափ լայն է եղել՝ լուսավորություն ապահովելով աշտարակի ներքին սենյակին:

Դռնից և այն պաշտպանող Ս-աձև աշտարակից արևմուտք պահպանվել է միմյանցից հավասար (20 մետրից քիչ) հեռավորության վրա գտնվող միատեսակ և միաչափ երկու աշտարակ: Երկրորդն արտաքին պարսպի ներքին անկյան մոտ է:

Ամենահետաքրքիր կառույցն այս անկյունից մոտ 40 մ հեռու գտնվող երկրորդ կլոր աշտարակն է, որն ավելի մեծ է նախորդից (ստորին հատվածում ունի 7 մ տրամագիծ, իսկ պատերի լայնությունը 1,80 մ է): Յուրահատուկ է նրանով, որ կառուցված է արտաքին ուղիղ պարսպի երկու կողմերում, և նրա շրջանագծի մեկ քառորդ մասն արտահայտված է պարսպի ներսի կողմից:

Բերդի դուռն ունի ճիշտ այն նույն առանձնահատկությունները, ինչ մնացած աշտարակների դռները: Նրա ուղղահայաց շրջանակներն ունեն մի քանի անցքեր, որոնցով հավանաբար տեղադրել են գերաններ կամ ճաղավանդակներ. սրանք, ամենայն հավանականությամբ, հետագայում են ավել-



Մաղասբերդի մուտքի ճակատը և դարպասն արտաքուստ (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)



Մաղասբերդի մուտքի ճակատը և դարպասի արևմտյան աշտարակը (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)

լացվել: Աշտարակի քարե շարվածքն իր բարձրությամբ (մոտ 0,70 մ) գերազանցում է արտաքին պարսպին, թեև երկուսի կրաշաղախի ուսումնասիրությունն էլ ցույց է տալիս, որ դրանք, ըստ երևույթին, կառուցվել են միաժամանակ: Ավելի հավանական է, որ այս տարբերությունը պայմանավորված է ավելի շատ տեղանքով, քան թե ժամանակային տարբերությամբ: Այս մեծ, կլոր աշտարակի մոտով է անցնում քաղաքային տարածքը սարավանդին կապող ճանապարհի սահմանագիծը: Դեպի արևմուտք թեք տեղանքն ավելի զառիթափ է դառնում՝ այդ ձևով ապահովելով ավելի մեծ բնական պաշտպանություն:

Կլոր աշտարակից հյուսիս-արևմուտք կա ևս երկու աշտարակ, որոնք ավելի փոքր են, փոփոխ և ունեն կանոնավոր քառանկյանը մոտ հատակագիծ: Հստակ կարելի է ասել, որ առաջինը սեղանաձև է, նրա ճակատն ու հյուսիսային կողմերը թեքված են դեպի հյուսիս և միանում են պարսպապատին: Երկրորդի հատակագիծն ավելի կանոնավոր է: Արտաքին պարիսպը, ամենայն հավանականությամբ, շարունակվում է երկրորդ աշտարակից այն կողմ, բայց նրա հետքերը մեզ թույլ չեն տալիս մանրամասներ պարզել այդ հատվածի մասին:

Այս կառույցներում կիրառված շինանյութն ու տեխնիկան շատ միատարր են, վերականգնման հետագա հավելումների կամ փոփոխությունների որևէ տեսանելի նշաններ չկան, ինչպես հովտում գտնվող փոքր բերդի վերին հատվածներում: Օգտագործված քարերը հավանաբար բերվել են այն հանքից, որը հատում է սարավանդը քաղաքի մուտքի դարպասի ճիշտ հանդիպակաց կողմում: Մեր կարճատև այցի ընթացքում մենք որևէ արձանագրություն չտեսանք:

Շարվածքը տարբեր հատվածներում ունի տարբեր բարձրություն: Քարերը բավական երկար են, իսկ նրանց լայնությունը հաճախ կրկնակի մեծ է բարձրությունից: Դակատային, ինչպես նաև վերին և ստորին մասերում սրբատաշ են, իսկ կողային և հետևի որոշ հատվածներում քարի՝ ավելի անկանոն ձևը հեշտացնում է նրա միախառնումը

կրաշաղախի հետ: Քարերն օգտագործվել են թե՛ երեսապատման և թե՛ կաղապարամածի համար և բուն պատի մեջ շատ խորը տեղադրված չեն եղել: Քաղաքի արտաքին հատվածին նայող կառույցների երեսապատման ավելի խնամքով է արված, քան նրանց ներքին հատվածներում՝ աշտարակների ներսում և արտաքին պարսպի այն կողմում, որը նայում է դեպի քաղաքամեջ: Այստեղ քարերն ավելի փոքր են և ունեն անկանոն շարվածք:

Պարսպի որոշ հատվածներ դեռ կարելի է տեսնել քաղաքի արտաքին սահմանագծի այլ մասերում՝ դեպի հովիտն իջնող բնական թեքությունների մոտ: Հատկապես պետք է նշել հարավարևմտյան ճակատամասի պահպանված հատվածը, որը սկիզբ է առնում արտաքին պարսպի հարավային անկյան աշտարակից: Մյուսներն ավելի վատ վիճակում են: Պատերն ավելի բարակ են, ինչը կարելի է բացատրել նրանով, որ այս ճակատամասերն ավելի քիչ են վտանգված եղել, քանի որ զառիկող լանջերն ապահովել են նրանց բնական պաշտպանվածությունը: Կարելի է նաև ենթադրել, որ դրանք կան ինչ-որ քաղաքացիական կառույցի, կան էլ ավելի ուշ կառուցված արտաքին պարսպի մաս են կազմել:

Մարավանդի հյուսիսարևելյան հատվածում առկա են փլված պատեր, որոնց երեսապատման քարերը գրեթե չեն պահպանվել: Դրանք գտնվում են լանջի՝ ոչ այնքան զառիկող հատվածներից մեկի մոտ: Հավանաբար այստեղ եղել է երկրորդական դուռ, որը բացվել է դեպի լանջի ստորոտում տարածվող հարթակները, իսկ այնտեղից էլ՝ դեպի ավելի ներքևում գտնվող միջնաբերդն ու գետափը:

Մարավանդը բավական երկար, ձվաձև տարածք է (ունի մոտ 150-180 մ լայնություն և ավելի քան 800 մ երկարություն): Այստեղ կան մեկը մյուսի վրա կառուցված բազմաթիվ շինություններ, որոնցից ոչ մեկը, սակայն, նշանակալի բարձրությամբ չի պահպանվել: Դրանք հիմնականում կառուցված են կոպտատաշ բազալտով, իսկ կրաշաղախից (եթե այն իսկապես օգտագործվել է) որևէ հետք չի մնացել: Այստեղ հավանաբար գյուղ է եղել, որի



Մաղասբերդի մուտքի ճակատը, դարպասը և որմախորշերը ներսից (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)



Մաղասբերդի մուտքի ճակատը և արևելյան կլոր աշտարակը (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)

տները հետագայում վերածվել են գոմերի: Այնուհանդերձ, պետք է նշել, որ Անիում սովորական տների և անգամ միջնաբերդի պալատի որոշ շինությունների համար կրային շաղախ չի օգտագործվել: Այն կիրառվել է միայն եկեղեցիներում և պաշտպանական ամրություններում:

Այս առաջին շերտի տակ երբեմն հանդիպում են տուֆով երեսապատված պատերի շարքեր, որտեղ շարվածքի միջուկում գործածվել են գետաքարեր: Հատկապես աչքի է ընկնում երկու շինություն: Սարավանդի հարավարևելյան մասում պահպանված եկեղեցու մնացորդներն ուրվագծում են վերջինիս հատակագիծը: Հավանաբար եղել է կենտրոնական նավով, խաչաձև, մոտ 14 մ երկարությամբ և 6 մ լայնությամբ փոքրածավալ կառույց: Անշուշտ, եթե ամբողջովին մաքրվի, միայն այդ ժամանակ հնարավոր կլինի հաստատել այս հատակագիծը՝ հասնելով եկեղեցու սալահատակին:

Պահպանված ամենակարևոր շինությունը գտնվում է եկեղեցուց հյուսիս՝ բնակավայրի դարպասի գրեթե ճիշտ առանցքում: Կառուցված է դեղնավուն տուֆի կտորներով, որոնք փոքր-ինչ մման են շինությունը շրջապատող պարսպի մեջ գործածված քարերին, թեև նրանց (գոնե այն սակավաթիվների, որ կարելի է տեսնել) բարձրությունը գերազանցում է լայնությանը, և այս պատճառով էլ ավելի շատ մնացվում են կանգնած քարերի: Վերջիններս իրար միացած են կրաշաղախով: Դատելով շարվածքից՝ այստեղ հավանաբար կառուցված է եղել երկար, կենտրոնական սրահ, որի երկու կողմերում գտնվող դռները բացվել են դեպի բավական ընդարձակ սենյակներ: Արբանյակային լուսանկարները մեզ թույլ են տվել ենթադրել, որ եղել է քարավանատուն, բայց սա այնքան էլ հավանական չէ, քանի որ սրահը չափազանց նեղ է, իսկ պատերն էլ՝ բավական հաստ: Հնարավոր է, որ այս կառույցը նախատեսված է եղել բնակության համար: Այս շինությունից հյուսիս ժայռը հասնում է համեմատաբար բաց և ընդարձակ մի տարածք, որը հավանաբար հանրային վայր է եղել:

Մենք չկարողացանք լիարժեք ուսումնասիրել սարավանդի այն հատվածը, որը գտնվում է քաղաքատեղիի մուտքի մոտ, բայց ենթադրաբար այնտեղ որևէ արվարձանային տարածքի հետքեր չկան: Եթե եղել են արվարձանային շինություններ, ապա դրանք ավելի շուտ կառուցված կլինեին քաղաքի հարավարևելյան, հյուսիսարևելյան լանջերին և ավելի ներքևում՝ միջնաբերդի ամրացված ճակատամասի առջև, որտեղ հավանաբար գտնվում է նաև գերեզմանոցը:

Մաղասբերդը և Ախուրյանի հովիտը միջնադարում. հպանցիկ ուսումնասիրելով այն վայրը, որտեղ գտնվում է Մաղասբերդը, մենք կարողացանք հաստատել միայն արբանյակային լուսանկարի հիման վրա արված մեր նախնական ենթադրությունը՝ վերջնականապես արձանագրելով, որ այս բերդն այլևս չի կարող դիտվել որպես ընդամենը մոտակայքում գտնվող Բագրատունյաց մայրաքաղաքի առաջապահ փոքր պահակակետ (ինչպես կարծում են բազմաթիվ հեղինակներ՝ առանց որևէ լուրջ հիմնավորման): Այստեղ մենք գործ ունենք ավելի մեծ համալիրի հետ, որը ներառում է Մաղասբերդ քաղաքն իր արվարձանային հատվածով (հավանաբար գտնվում է հյուսիսային և հարավարևելյան լանջերին) և ծանծաղուտի մոտ առկա փոքր բերդով, որը նայում է դեպի հովիտ տանող ճանապարհին:

Փոքր բերդը պետք է կոչել իր հնագույն՝ Ծառքար (Cark'ar) անվամբ, որը հայտնի է 1222 թ.⁸: Մոտ 16 հա (40 ակր) տարածք զբաղեցնող հիմնական քաղաքատեղիի բացահայտմամբ ավելի արժանահավատ է դառնում Ջաքարիա Քանաքեռցու հարդրած տեղագրական նկարագրությունը: Վերոհիշյալ եկեղեցու՝ է դարին բնորոշ խաչաձև հատակագիծը տիպաբանորեն համապատասխանում է այն ժամանակահատվածին, որը հիշատակում է պատմագիրը: Հետևաբար կարելի է ասել, որ Մաղասբերդը հավանաբար կառուցվել է այն ժամանակ, երբ Բյուզանդիան ամրապնդում էր իր ներկա-

8 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմ.՝ Մաքևոսյան Ա., Երևան, 1984, էջ 131:



Մաղասբերդի մուտքի ճակատը և արևմտյան մեծ, կլոր աշտարակը (լուս.՝ Ֆ. Դանգլի, 2013 թ.)



Մաղասբերդի մուտքի ճակատը և արևմտյան ուղղանկյուն աշտարակը (լուս.՝ Ֆ. Դանգլի, 2013 թ.)

յությունը տարածաշրջանում է դարի սկզբին, ճիշտ այնպես, ինչպես ընդամենը 30 կմ հարավ գտնվող Սյրենում: Նշյալ ժամանակահատվածում Բագրատունիների ապագա մայրաքաղաքն ընդամենը փոքր քաղաք էր և տարածվում էր Աղջկաբերդի, միգուցե նաև միջնաբերդի բլուրների վրա: Անին Մաղասբերդ քաղաքային բնակավայրի հետ չափերով սկսեց մրցել միայն այն ժամանակ, երբ Աշոտ Գ Ռդորմած արքան նոր պարիսպ կառուցեց և 961 թ. մայրաքաղաք հռչակեց, իսկ արդեն իսկայես աչքի ընկնել՝ Ժ դարի վերջերին, երբ Սմբատ Բ Տիեզերակալ արքան զգալիորեն ավելացրեց պարիսպները:

Ինչ վերաբերում է երկու քաղաքների առնչություններին, ապա իսկայես հարց է առաջանում, թե ինչո՞ւ Մաղասբերդ բնակավայրի ամրացված, պարսպապատ հատվածում մեծածավալ հուշարձաններ չկան, կամ ինչպե՞ս ստացվեց, որ այս տեղանունն ի վերջո սկսեց կիրառվել միայն միջնաբերդի համար: Մա կարելի է թերևս բացատրել նրանով, որ քաղաքն արդեն վաղուց լքված էր: Այս ամենից դատելով՝ կարող ենք ասել՝ Չաքարիա Բանաքեցու հաղորդած տեղեկությունն այն մասին, թե 1635 թ. Կարսի փաշան դավադրաբար գրավեց քաղաքը, իրականում կարող է վերաբերել միայն միջնաբերդին, որը, անշուշտ, որպես պաշտպանական ամրություն, ԺԸ դարի կեսերին դեռևս կատարում էր իր դերը, իսկ բուն քաղաքն արդեն լքված էր:

Մաղասբերդը և տեղի միջնադարյան պաշտպանական ամրությունները. վերոնշյալ կառույցների վերաբացահայտմամբ ավելի է ընդարձակվում այս երկրամասի ամրությունների ընդհանուր ծավալը, և նոր հեռանկարներ են բացվում ավելի լավ հասկանալու, թե մեթոդներն ու տեխնիկան ինչպե՞ս են կիրառվել մի միջավայրում, որն ազդեցության կարևոր ոլորտներ է ունեցել, ինչի հետևանքները մինչ օրս էլ դժվար է հասկանալ:

Մաղասբերդ-Ճառքարի կառույցներում օգտագործվել են տեղական միջավայրում լայնորեն կիրառվող տեխնիկա և մեթոդներ: Մակայն մենք դեռ պետք է հաստատենք այս տեսակետը, քանի որ այն էապես հիմնված է միջնադարյան երկրորդ ժա-

մանակաշրջանի ուսումնասիրության վրա, իսկ առաջինն այսօր տեսանելի է դարպասի՝ մասնակի պահպանված ավերակներում:

Մաղասբերդ քաղաքի պաշտպանական կառույցներում առկա են (անկախ վերլուծության մեթոդներից չափանիշներից) յուրահատուկ լուծումներ, որոնք անհայտ կամ հավանաբար էին Անիում և նրա շրջակայքում: Այս լուծումներում կարող ենք տեսնել Ժ դարի վերջից մինչև ԺԵ դարի սկիզբը քաղաքի պատմության մեջ կարևոր դեր խաղացած անձանց առաջնորդությամբ կատարված կարևոր աշխատանքների ազդեցությունը:

Թե՛ Մաղասբերդում և թե՛ Անիում տեսնում ենք գետաքարով լիցքի հետևողական կիրառումը, բայց Անիում օգտագործված քարերը միայն ճակատից են քառակուսի մշակում ստացել՝ ժամանակաշրջանից կախված ճշգրտության տարբեր աստիճաններով: Քարերի մյուս կողմերն ընդամենը շատ կոպիտ տաշվածք ունեն, և այնպիսի տպավորություն է, ասես յուրաքանչյուր քար սեպի նման խրված է կրաշաղախի մեջ, և նրանք մեկը մյուսի վրա են նստում ընդամենը ծայրով, որը երբեմն մի քանի միլիմետր լայնություն ունի: Ճակատային պատերը կազմում են ինքնին ոչ մի կայունություն չունեցող կաղապարամածը: Տեխնիկական այս լուծումը համատարած օգտագործված չէ Մաղասբերդում: Գործածված քարերը հաճախ քառակուսի տաշված են երկու կողմում և պատի նման կանգնեցվել են լիցքից առաջ: Դրանք ավելի երկար են և շարված են փոխհատվող հանգույցներով:

Անիի՝ Բագրատունի արքաներին վերագրվող արտաքին պարիսպների աշտարակներից ոչ մեկը ներսում սենյակ չունի: Դրանք կառուցված են պատի մեջ, երբեմն պատ ունեն իրենց հետևի նեղ մուտքերի մոտ և լցված են հողով՝ քայլելու համար հարթակ ստեղծելու նպատակով (երբեմն նրանք կարող են նաև դատարկ լինել): Ի հակադրություն սրա՝ Մաղասբերդի բոլոր աշտարակներն ունեն սենյակներ, որտեղ կարելի է մուտք գործել հետևի նեղ դռնով: Դրանցից յուրաքանչյուրը հավանաբար լուսավորվել է մուտքի վերևում տեղադրված և արտաքուստ



Մաղասբերդի տաճարի խորանը (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)



Ընդհանուր տեսարան քաղաքից դեպի հյուսիս. ձախ կողմում՝ բերդը, աջ կողմում՝ հեռվում, Անիի միջնաբերդը (լուս.՝ Ֆ. Դանգլըի, 2013 թ.)

շեշտված պատուհանով: Ամբողջ կառույցի մեջ պատերը (կողային, հետևի և արտաքին), որպես կանոն, ունեն նույն հաստությունը, չափերը և տեխնիկական առանձնահատկությունները, թեև պետք է նշել, որ ամենավտանգավոր հատվածներին ավելի մեծ լրջությամբ են մոտեցել: Անհայտ է, թե ի՞նչ ծածկ են ունեցել այս աշտարակների սենյակները (թաղակա՞պ, թե՞ փայտե), քանի որ նրանց վերին հատվածներից ոչինչ չի պահպանվել: Պատերի վրա չկան ևս հրակնատների ոչ մի հետք. ըստ երևույթին, սենյակները չեն գործածվել որպես պաշտպանական հենակետեր:

Անիում շինությունների մեծ մասը կառուցված է ըստ Ս-աձև հատակագծի, որը հաճախ անկանոն է (արտաքին պարսպի և կողային հատվածների միջև եղած անկյուններում և կողային հատվածների երկարությամբ): Քառանկյուն հատակագծով կառույցներ հազվադեպ են հանդիպում. հյուսիսային պարսպի վրա առկա 30 աշտարակից միայն երկուսն ունեն: Կլոր հատակագիծ հանդիպում է ընդամենը 2 կառույցում, որոնք չեն պատկանում Բագրատունիների ժամանակաշրջանին: Դրանցից մեկը հովտի արևելյան հատվածում գտնվող և ԺԳ դարի սկզբով թվագրվող փոքր աշտարակն է, իսկ մյուսն ավելի հին է, որի աննշան մնացորդները միջնաբերդի պարսպի արևելյան եզրին են:

Ի տարբերություն Անիի՝ Մաղասբերդի կարճ ճակատամասն աչքի է ընկնում կառուցվածքային ձևերի բազմազանությամբ, ինչը շատ հետաքրքիր է, քանի որ այս բազմազանությունն ուղեկցվում է տեխնիկայի և մանրամասների ակնհայտ միօրինակությամբ: Մա թերևս կարելի է բացատրել աշխարհագրական գործոնով. երկու կլոր աշտարակները գտնվում են ճակատամասի ամենամալապաշտպան հատվածում, իսկ նրա կենտրոնական մասի պաշտպանությունն ապահովում են միմյանցից հավասար հեռավորության վրա կառուցված Ս-աձև երեք աշտարակներ, որոնք առավելագույն արդյունավետության համար ուղղված են դեպի արևելյան աշտա-

րակի կողմում գտնվող մուտքը: Քառանկյուն աշտարակներն ավելի անհավասարաչափ են բաշխված պարսպի այն հատվածներում, որոնք այնքան էլ անպաշտպան չեն. ուղղակի դրանք հավանաբար կառուցվել են այնտեղ, որտեղ տեղագրորեն դա հնարավոր էր:

Այն, որ բյուզանդական պաշտպանական ամրություններին բնորոշ ձևերի այս բազմազանությունը հազվադեպ է հանդիպում տեղական մշակույթում, կարելի է բացատրել նրանով, որ այդ մասին գրեթե ոչինչ հայտնի չէ: Մենք ոչինչ չգիտենք Սրենի հավանական ամրությունների մասին, իսկ Կարսի ամենակարևոր հուշարձաններից մի քանիսը պարզապես չեն պահպանվել: Դրանց թվում են, օրինակ, բերդի արտաքին երկար, ուղիղ պարիսպները, որոնք ունեցել են իրար մեկընդմեջ հաջորդող կլոր կամ քառակուսի աշտարակներ: Վերջիններս հետևողականորեն ոչնչացվել են ԺԹ դարի վերջին:

Մաղասբերդում արտաքին պարսպի երկու կողմերի մեծ, կլոր աշտարակներն ամբողջ կառույցի ամենայուրահատուկ շինություններն են և հավասարը չունեն Անիում: Համապատասխան զուգահեռ կարելի է գտնել միայն տեղական ժառանգության ոչ այնքան հայտնի հուշարձաններից մեկում. դա Մաղասբերդից մոտ 40 կմ հարավ-արևելք գտնվող Արուճի իշխանական ապարանքի արտաքին պարիսպն է, որտեղ առկա քառանկյուն աշտարակները շատ կանոնավոր են տեղադրված, բոլորն ունեն նույնատիպ ներքին սենյակներ, որոնցից յուրաքանչյուրի մուտքը պարսպի և աշտարակի միջև ընկած ներքին անկյունում տեղադրված փոքր դռան միջով է: Կառուցվել է 660-670 թթ. կից եկեղեցու հետ միաժամանակ, բայց այս վայրը՝ որպես ամրացված հենակետ, հիշատակվում է դեռևս Ե դարից:

Արուճի իշխանական ապարանքի արտաքին պարիսպը պեղվել է Ի դարի վերջին, և հայտնաբեր-

9 Yovhannes Draxanakertc'i, Histoire d'Arménie, introd., trad. et notes par P. Boisson-Chenorhokian, Leuven, 2004, p. 151.


ված նյութերի վերաբերյալ տեղեկությունները միայն մասամբ են հրատարակվել¹⁰: Չի նշվում պարսպի հյուսիսային ճակատամասի վերանորոգման մասին, որի ընթացքում այստեղ Ս-աձև աշտարակներ են ավելացվել: Մենք կարողացանք տեղում նոր ուսումնասիրություն կատարել 2012 թ. ամռանը¹¹:

Ամփոփելով նշենք, որ Մաղասբերդում նույնպես գործ ունենք ամրացված դարպասի մի եզակի օրինակի հետ: Այն այսօր ամբողջովին չի կարող ուսումնասիրվել, քանի որ մասամբ մնում է հողի տակ: Ըստ երևույթին, ամրացված է եղել կա՛ն մեկ աշտարակով, որը դեռ պահպանվում է անցուղուց արևմուտք, կա՛ն պաշտպանական երկու կառույցներով, որոնք հատակագծով շատ անհամաչափ են: Նման դասավորությունը հազվագյուտ երևույթ չէր միջնադարյան Հայաստանում. Անիի հյուսիսային պարսպի 3 գլխավոր դարպասները տեղադրված են չափերով բոլորովին չհամընկնող 2 աշտարակների միջև, քանի որ մուտքը միշտ տեղադրված է լինում ամենաամուր կառույցի մոտ:

Այս անհամաչափությունը շատ ավելի տեսանելի է Անիի Աշտուաշեն պարսպի, ինչպես նաև միջնաբերդի դարպասում, որը պաշտպանված է եղել վիթխարի քառակուսի աշտարակով:

Մաղասբերդից մոտ 40 կմ հարավ գտնվող Գեչիվան (ներկայումս՝ Թունջկայա) գյուղի բերդի ամրացված ճակատամասում նույնպես ունենք դուռ, որը կառուցվել է բավական անհամաչափ 2 աշտարակների միջև: Կարող ենք նաև հիշատակել Ախթալայի վանքի պարիսպը կամ Լոռեբերդի դարպասը: Պետք է նշել, սակայն, որ մեծ մասամբ այս օրինակներում համաչափությունը կարելի է բացատրել դրան տեղադրությամբ. այն կա՛ն ամրացված ճակատամասի ծայրին է՝ ձորին շատ մոտ, կա՛ն շրջապատված է կրկնակի պարիսպներով: Մա չի կարելի ասել Մաղասբերդի մասին, որտեղ մնան կրկնակի պարսպի գոյության հետքն անգամ չկա:

Դժբախտաբար, շատ անհավանական է, որ ներկայիս ռազմական դրությունը, որը սահմանափակում է Մաղասբերդի հասանելիությունը, մոտ ապագայում կփոխվի, և մենք կկարողանանք նոր ուսումնասիրություններ կատարել: Ստիպված ենք



ԱՐՈՒՃ. պաշտպանական ամրությունների հատակագիծը. նախնական պարսպապատը տրված է մոխրագույնով (չափ.՝ Ֆ. Դանգլբի և Ֆ. Սաբլերովի)

բավարարվել մեր և նույն պայմաններում այլոց կատարած դիտարկումներով, բայց, այնուամենայնիվ, դրանք էլ կարող են հետաքրքիր լինել, քանի որ կիիշեցնեն ուսումնասիրողներին այս հուշարձանի կարևորության և նրա հետ կապված հարցերի մասին: Այս ամենը, անշուշտ, նաև օգտակար է որոշակի պատկերացում կազմելու համար, թե ինչպիսին են եղել ամրացված բնակավայրերը նախքան արաբական նվաճումները: Միաժամանակ սա ոչ միայն կբացահայտի, թե հարևան կայսրությունները որքանով են ազդել հայկական պաշտպանական կառույցների վրա, այլ նաև՝ Անիի գերիշխող դերակատարությունը տեղական միջավայրում:

10 Մաքևայան Կ., Արուճ, Երևան, 1987: Պեղումները դեկավարել է հնագետ Բ. Սադոյանը 1980-1981 թթ.:

11 Ուսումնասիրությունը կատարել է Ֆ. Սաբլերովն Անի-Պենգայի ֆրանսիական արշավախմբի աշխատանքների շրջանակներում (այժմ դեկավարում է պրոֆեսոր Իգաբել Օժեն Մոնպելիեի համալսարանից):

ՏՈՒՄԻ ԳՅՈՒՂԻ ՎՏԱՆԳՎԱԾ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Էմմա Արրահամյան

Սույն հոդվածով տարաբնույթ սկզբնաղբյուրների (դիվանական վավերագրեր, վիճակագրական նյութեր, պարբերական մամուլ, քեմային առնչվող գրականություն) և դաշտային ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնում ենք 2020 թ. Ադրբեջանի սանձագերծած 44-օրյա պատերազմից հետո նրա զինված ուժերի վերահսկողության ներքո անցած ԱՀ Հաղրուքի շրջանի հրաշք գյուղերից մեկի՝ Տումիի վտանգված պատմաճարտարապետական հուշարձանները¹:

Տեղադրություն. գտնվում է Արցախի Հանրապետության Հաղրուք քաղաքից 11 կմ հյուսիս-արևմուտք (N 39°35'09.66"; E 46°53'57.55", ծ. մ.՝ 1090 մ)՝ Դիզափայտ լեռան ստորոտում:

Անվանում. ըստ գյուղանվանն առնչվող ավանդություններից մեկի՝ Տումին իր անունը ստացել է Գորգուի (Դիզակի կամ Հարավային Արցախի) թագավորության տիրակալ Գագիկի տնային կենդանիներին Իրանից ներս թափանցող անասնազոդերից պաշտպանելու համար գյուղացիների՝ նախ գոմերում բնակվելու, ապա դրանք բնակարաններ դարձնելու հետևանքով. «...կյումէլը քյօհնա վախտէքը տըլյալ ա ույանց հետէ տօն: Յրէտնան էլ ասալ ըն՝ Տօնէ/Տօմէ, ահատ էլ՝ Տումէ: Ըտըղատ էլ բըհամ ա յըկալ շէնին անըմը»²:

Պատմություն. հակառակ գրավոր աղբյուրներից մեզ հասած աղբատիկ տեղեկությունների՝ գյուղում և մերձակա հնավայրերում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ բնակավայրը գոյություն է ունեցել ոչ թե դարեր, այլ հազարամյակներ³ շարունակ. այդ է հաստատում Տումիի դպրոցի պատմության ուսուցիչ Սերգեյ Ամիրջանյանը՝ վկայակոչելով գյուղից 3 կմ հյուսիս-արևելք գտնվող *Տեփեն արտ* տեղամասից



Տեսարան գյուղից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

իր հայտնաբերած քարեդարյան բրիչը, ինչպես նաև բրոնզեդարյան զարդարանքները *Քուլտիանեն խոթ* վայրից⁴: Պետք է նշել նաև, որ մինչև մեր օրերը հասած հուշարձանները հուշում են, որ բնակավայրն առավել ծաղկուն և բարգավաճ շրջան է ապրել միջնադարում:

Տումին Ժ-ԺԱ դդ. սահմանագծին Հարավային Արցախում կազմավորված Գորգուի թագավորության մասավայրն էր: Առավել հռչակված էին Եսայի Աբու Մուսեն և Գագիկ թագավորը⁵:

Գրավոր աղբյուրներում գյուղին առնչվող տեղեկությունները հիմնականում սկսվում են ուշ միջնադարից: Այսպես, հայտնի է, որ ծնունդով Տումիից էր Աղվանից կաթողիկոս Փիլիպպոս Տումեցին, որը գահակալել է ընդամենը մեկ տարի՝ 1563 թ.⁶:

Հաջորդը վերաբերում է 1604 թ., երբ Հաղրուքի շրջանի Խանձաձոր գյուղում գրված Ավետարանի պատվիրատու է հիշվում Տումիի Մերդան իշխանի որդին՝ մելիք Սուջումը⁷:

1 Դաշտային աշխատանքներն իրականացրել ենք հիմնականում 2002 թ. Սամվել Կարապետյանի հետ համատեղ: Մեծագույն շնորհակալությունն ասումեցի Արթուր Բաղդասարյանին, որն իր տեղեկություններով ոչ միայն մեծապես օգնել է, այլև ուղեկցել մեզ՝ շրջելով գյուղի հնավայրերում:

2 **Մարգարյան Ա.**, Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 185 (պատմել է տումեցի 82-ամյա Արտաշ Ավետիսյանը 1994 թ., գրի է առել լեզվաբան Արմեն Մարգարյանը): Գյուղանվան ծագման և բնակավայրի հիմնադրման վերաբերյալ այլ վարկածներ տես **Գազարյան Խ.**, Տումի, Երևան, 2003, էջ 25-27, 32-33:

3 Հարկ է նշել, որ Ս. Ամիրջանյանը, Ատրեստանի թագավոր Սինախերիբի՝ Սենեբերիմի (մ.թ.ա. 705-681 թթ.) սեպագիր արձանագրության մեջ նշված Տումուրուն վերագրելով Տումիին (**Ամիրջանյան Ս.**, Դիզակ, Երևան, 2006, էջ 177), սխալվում է: Ըստ Հ. Կարազոյանի՝ երկու տեղանունների ընդամենը Տում բառարմատն է մուլը (**Կարազոյան Յ.**, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 124-125):

4 Նույն տեղում: Նաև **նույնի** Տումի գյուղի պատմական հուշարձանները, «Գիտություն և տեխնիկա», 1991, № 2, էջ 29:

5 Մանրամասն տես **Յակոբեան Ա.**, Պատմա-աշխարհագրական եւ վիճակագրական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երևան, 2009, էջ 243-248: Տես նաև **Բարխուդարյան Ս.**, Արցախի, Շաքիի և Փառխոսի իշխանությունները IX-X դարերում, «Պատմաբանասիրական հանդես», 1971, № 1, էջ 57: **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 62-63:

6 **Մանուչարյան Ա.**, Աղվանից կաթողիկոսների գավազանագրքի վիճակագրական լրացումներն ու ճշգրտումներ, Երևան, 2003, էջ 89: Տես նաև **Հարությունյան Ա.**, Եսայի Հասան-Ջալալյանի վիճակագրական վաստակը (ըստ ՍՄ հմր. 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, Ժ, էջ 158: **Մաղալյան Ա.**, Աղվանից կաթողիկոսների գավազանագրքը, «Պատմաբանասիրական հանդես», 2008, № 3, էջ 269:

7 **Ամիրջանյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 30:



Գյուղը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)

Բնակչություն. տումեցիների նախնիների թվում, բնիկներից գատ⁸, կան նաև ժամանակի ընթացքում ինչպես Արցախի տարբեր գյուղերից (օրինակ՝ Ագոխ, Ճարտար, Մեծ Թաղար, Ննզի, Քերթ), այնպես էլ Սյունիքից և Բիթլիսի նահանգի Մուշ քաղաքից փոխադրվածներ⁹:

Ինչ վերաբերում է բնակչության թվաքանակին, ապա դրանք մեզ հայտնի են՝ սկսած 1841 թ.-ից: Ստորև ներկայացվող վիճակագրական տվյալներից երևում է, որ Տումին իր մարդաշատությամբ գավառի մեծ բնակավայրերից էր, և եթե հաշվի չառնենք առանձին դրվագները, ապա մինչև 1980-ականները գյուղն ընդհանուր առմամբ արձանագրել է բնակչության աճ, ընդ որում, առավելագույն ցուցանիշին հասնելով 1925 թ. (1810 շունչ):

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841 ¹⁰	33	79	61	140
1876 ¹¹				660
1884 ¹²	104			
1886 ¹³	108	550	450	1000
1889 ¹⁴	120	563	470	1033

8 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 78:

9 **Ղազարյան Խ.**, նշվ. աշխ., էջ 29-30:

10 Հայաստանի ազգային դիվան (այսուհետ՝ ՀԱԳ), ֆ. 56, ց. 1, գ. 305, ք. 46:

11 Նշվ. ֆոնդ և ցուցակ, գ. 6775, ք. 112-113:

12 **Հայկունի**, Ողեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1884, № 89, էջ 2: Նաև **Ույնի** համանուն աշխ., Երևան, 2010, էջ 89:

13 “Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа”, Тифлис, 1888, с. 184-185: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1894 г.”, Тифлис, 1893, с. 158.

14 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 79: Ի դեպ, արխիվային մի վավերագրում (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, ք. 42-43) նույն թվականին գյուղի բնակիչների թիվը նշված է 917 շունչ (ար.՝ 523, իգ.՝ 394):

1893 ¹⁵	105	432	333	765
1897 ¹⁶	107			
1901 ¹⁷		569	418	987
1907 ¹⁸				1450
1909 ¹⁹		727	471	1198
1910 ²⁰	200			
1912 ²¹		766	481	1247
1914 ²²				930
1922 ²³	338	919	880	1799
1925 ²⁴	350			1810
1974 ²⁵				1004
1987 ²⁶	286			877
2018 ²⁷	184			708

15 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649-1917 թթ.), հ. Բ, Երևան, 2017, էջ 330: Ըստ մեկ այլ վավերագրի՝ ուներ 108 տուն բնակիչ (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 147 շրջ.):

16 **Ա.Պ.**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), Երևան, 1907, էջ 172:

17 ՀԱԳ, ֆ. 56, ց. 14, գ. 205, ք. 238-239:

18 “Кавказский календарь на 1910 г.”, Тифлис, 1909, с. 248.

19 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 764, ք. 239-240:

20 **Բորենի**, Տումի գիւղ, «Մշակ», 1910, № 245, 4 նոյեմբերի, էջ 3:

21 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, ք. 326 շրջ.-327:

22 “Кавказский календарь на 1915 г.”, Тифлис, 1914, с. 122.


23 ՀԱԳ, ֆ. 57, ց. 3, գ. 492, ք. 1-2: Տե՛ս նաև Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2001, էջ 759:

24 **Պողպատ**, Տումի գյուղի կյանքից, «Խորհրդային Ղարաբաղ», 1925, № 45, 15 դեկտեմբերի, էջ 3:

25 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Երևան, 2001, էջ 138:

26 Նույն տեղում:

27 **Բալայան Վ.**, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, 2020, էջ 252:



Սք. Հովհաննես եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.) և հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

Պատմական հուշարձաններ. Տումին հարուստ է դարերից ավանդված նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձաններով: Դրանց քննությունը սկսում ենք գյուղամիջից:

ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Սք. Հովհաննես եկեղեցի. գտնվում է գյուղի կենտրոնական հատվածում (N 39°35'08.41"; E 46°53'59.38", ծ. մ.՝ 1082 մ): Եկեղեցու կառուցման ստույգ ժամանակաշրջանին վերաբերող մասնավոր վկայություն հայտնի չէ, սակայն հորինվածքային և ճարտարապետական առանձնահատկությունները հուշում են, որ այն ԺԸ դարի կառույց է:

Սկսած 1841 թ.-ից՝ տարբեր ուսումնասիրություններում և վավերագրերում եկեղեցին հիշվում է Սք. Հովհաննես անվամբ: 1889 թ. բնորոշվում է որպես «քարուկիր, կամարակապ, առանց սիւնի» կառույց²⁸:

Հայտնի է, որ 1929 թ. մարտի 2-ի գյուղական ժողովում որոշում է ընդունվում եկեղեցին քանդել և տեղում կառուցել գյուղխորհրդի շենք²⁹: Բարեբախտաբար, այն կյանքի չի կոչվում, և եկեղեցին նույն թվականին վերածվում է ակումբի³⁰, հետագայում՝ պահեստի: Ի դեպ, հարավային փակված մուտքի խաչազարդ բարավորին պահպանվում է «Տումի. քանվորագյուղացիական ակումբ» ներկագիր գրությունը:

2019 թ.-ից սկսված վերանորոգման աշխատանքների շնորհիվ հավելվում է սրածայր վեղարով ավարտվող վեցսյունանի ռոտոնդա-զանգա-



Սք. Հովհաննես եկեղեցու հարավային փակված մուտքը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)

կատունը³¹, փակվում է արևելքից բացված մուտքը, և դրա փոխարեն բացվում հարավային շքամուտքը: Կատարվում են նաև վերականգնման այլ աշխատանքներ³²:

Միակ վիճագիրը փորագրված է հարավային ճակատին՝ ուղղանկյունաձև առանձին քարին:

28 **Քարխատարանց Մ.**, նշվ. աշխ., էջ 78-79:
 29 **Պետրոսյան Ա.**, Յեկեղեցին քանդում ենք, «Խորհրդային Ղարաբաղ», 1929, № 12, 23 մարտի, էջ 2:
 30 «Խորհրդային Ղարաբաղ», 1929, № 35, 31 օգոստոսի, էջ 4: Ակումբի վարիչն էր Նիկոլայ Օհանջանյանը (№ 36, 8 սեպտեմբերի, էջ 3): Պետք է նշել, որ տումեցի Խորեն Ղազարյանը սխալվում է՝ գրելով, որ գյուղի համանուն առաջին եկեղեցին քանդել են և տեղում կառուցել գյուղխորհրդի շենք (**Ղազարյան Խ.**, նշվ. աշխ., էջ 35-36):

31 Ըստ Խորեն Ղազարյանի հաղորդման՝ զանգակատունը քանդել են խորհրդային տարիներին, իսկ զանգն էլ տրվել է դպրոցին (նշվ. աշխ., էջ 36):
 32 Ճարտարապետն է Մանուշակ Տիտանյանը:



Սբ. Հովհաննես եկեղեցին հարավ-արևելքից և միակ վիճագիրը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)

Վերջինս հարդարված է եղել հորիզոնական դիրքով միմյանց կից զույգ կամարներով ներփակված մեկական խաչաքանդակով (ըստ ամենայնի, խորհրդային տարիներին միառումնավոր քերվել են), որոնց ստորին թևերի մոտ պահպանվել է հետևյալ հիշատակագրությունը.

1868, Ստ(եփանոս):

Ճարտարապետություն. Սբ. Հովհաննես եկեղեցին միանավ բազիլիկ, թաղածածկ, երկյանջ տանիքով կառույց է (արտաքին չափերն են՝ 16,31 x 8,51 մ): Հյուսիսային և հարավային որմերին ներքուստ կից են երկու զույգ որմնասյուները, որոնց վրա հենվում են թաղակիր կամարները: Արևելյան կողմում կիսաշրջան եզրագծով խորանն է, որին երկու կողմերից կից է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Սկրտության խորշը՝ ավագանով հանդերձ, ավանդական տեղում է: Մուտքը, որը բացված է եղել հարավից, խորհրդային տարիներին փակվել է (վերաբացվել է 2020 թ.), քանի որ շինությունը հացահատիկի պահեստ օգտագործելու համար, տեղանքից ելնելով, նպատակահարմար են գտել այն բացել արևելքից՝ օգտագործելով խորանի կենտրոնական հատվածը: Ի դեպ, նույն նպատակով կատարված որոշ ձևափոխությունների արդյունք են նաև հյուսիսային պատից բացված անցքը (հացահատիկը դատարկելու համար) և հարավային ճակատի արևելյան կողմում բացված լայն լուսամուտը: Լուսավորությունն ապահովում են վեց լուսամուտները, որոնցից 3-ը բացված են արևելյան, 2-ը՝ հարավային և 1-ը՝ արևմտյան ճակատներից: Շինանյութն անմշակ, կիսամշակ և սրբատաշ քարն է՝ կրաշաղախի համակցությամբ: Սրբատաշ են միայն կառույցի առավել կարևոր հատվածները (մուտքի և լուսամուտների եզրաքարեր, անկյունաքարեր, որմնասյուներ և կամարներ): Հարդարանքի տարրերում գեղարվեստական նշանակություն ունի միայն հարավային շքամուտքը՝ քանդակագարդ որմնախոյակներով:

Քահանա. եկեղեցում պաշտոնավարած ծխատեր քահանաներից հայտնի են Գրիգոր Տեր-Բաղ-

դասարյան Տեր-Սիմոնյանը (ծնվ. 1808 թ., քահանա է ձեռնադրվել Գանձասարի վանքում 1827 թ. փետրվարի 10-ին: Վախճանվել է 1860-ին)³³, Ալեքսանդր Տեր-Հակոբյանը (ծնվ. 1822, քին. ձեռն. 1864 թ. օգոստոսի 6-ին: Վախճ. 1920 թ.³⁴, Գրիգոր Տեր-Դավթյանը (ծնվ. 1845, ձեռն. 1890 թ. նոյեմբերի 25-ին)³⁵:

Կարմիր վանք. Տումիի միջնադարյան փառահեղ հուշարձաններից է (N 39°34'56.73"; E 46°54'02.62", ծ. մ.՝ 1086 մ): Գտնվում է գյուղի հարավային կողմում՝ Եղցու խութ անվամբ հայտնի հնավայրում: Ցավոք, եկեղեցու ստույգ անվանումը մոռացության է մատնված, իսկ նրա վերաբերյալ մատենագրական վկայությունները սուղ են: Մակար եպիսկոպոսի հաղորդմամբ «Գիւղիս հարաւային կողմում» ձորակի աջ սեռի վերայ, շինուած է հասարակ քարով: Ամբողջապէս փլած է եկեղեցուս հարաւային պատն և թաղն կամարներով միասին: Ունեցած է երկու դուռն հարավային և արևմտեան կողմերից: Երկարութիւնն 11 մետր, լայնութիւնն 6 մետր 45 սանթիմ»³⁶: Մեզ հայտնի հաջորդ հիշատակությունը վերաբերում է 1911-1912 թ. սկզբին³⁷: Եկեղեցու կառուցման մասին տեղեկությունները քաղում ենք շինարարական արձանագրությունից, ըստ որի՝ այն շուրջ տասնմեկդարյա կառույց է:

Արձանագրություն. եղել է եկեղեցու արևմտյան լուսամուտի պսակին.

Ի ՆԽԹ (1000) թվ(ին) Հ(այոց) եւ ի | թագաւորութեանս տ(եան)ն Գագիկայ(յ) որդ(ւո)ն(յ) | Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի, շինեցի | տուն ա(ստուծո)յ ի փրկութիւն հոգւո(յ) իմն(յ) եւ | ծնողաց իմոց:

Հրատ. Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 79: Տե՛ս նաև Բարխուտարյան Մ., նշվ. հոդվ., էջ 57: Դիվան հայ վիճագրության, պր. V, (այսուհետև՝ ԳՀՎ V, համապատասխան էջերով),

33 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 531, 532, 533, 538, ց. 18, գ. 542: Տե՛ս նաև Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 207:

34 Տապանագիրը տես էջ 62:

35 ՀԱԳ, ֆ. 57, ց. 3, գ. 44, ք. 67-70: Նաև՝ ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 147 շրջ.-148; գ. 11608, ք. 360 շրջ.:

36 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 79:

37 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 548:



Կարմիր վանքի տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.) և շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2015 և 2021 թթ.)

Երևան, 1982, էջ 173: **Սյրուչյան Շ.**, Լեռնային Գարաբաղի պատմամարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 100: **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 62: **Բալայան Վ.**, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ 86:

Ծանոթ. առաջինն ընթերցել է Խաչիկ վրդ. Դաղյանը 1885 թ. (ՀԱԳ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 1):

Վիճագրում հիշատակված Գագիկ թագավորը Գորոզուի թագավորական տիտղոս կրող տիրակալն էր՝ Մուսեի (Մովսես) որդին: Ի դեպ, նրա անվան հիշատակությամբ իշխանաց իշխան տիտղոսով մեկ այլ արձանագրություն էլ (997 թ.) փորագրված էր ԱՀ Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի Ջոխտ Պովածառ վանքի խաչքարերից մեկի վրա (**Լեռ**, Ուխտավորի հիշատակարանը, ԵԺ, հ. 8, Երևան, 1985, էջ 29: **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 91: ԴՀՎ V, էջ 173: **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 242-244):

Շինարարական արձանագրությունը կրող երկատված այս քարը Մերգեյ Ամիրջանյանի շնորհիվ 1965 թ. փոխադրվել է նախ Տումիի դպրոցի բանգարան (**Ամիրջանյան Մ.**, Դիզակ, էջ 44, ծմբ. 1), ապա հանգրվան գտել Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում (ԴՀՎ V, էջ 173):

Տարրերեցում. Բարխուտարյանցի մոտ *Սոփի*-ի փոխարեն՝ *Ոսկի*:

Եկեղեցին ունի միանավ բազիլիկ հորինվածք, արևելյան կողմում կիսաշրջան խորանն է, որի անկյունային հատվածները չեն պահպանվել, իսկ ավելի ուշ շրջանում կատարված նորոգության հետևանքով թեքադիր շարված պատերը սրահի և խորանի կոր պատի անմիջական շարունակությունն են դարձել: Կառուցված է հիմնականում համակ կոպտատաշ շարվածքով, կրաշաղախի համակցությամբ: Խորանի գմբեթադրը և կենտրոնում բացված լուսամուտի կամարն աղյուսաշար են:

1960-ական թթ. եկեղեցու ծածկը և հարավային պատը պահպանված չէին, իսկ 2001 թ. մնացել էին միայն խորանը և հյուսիսային պատի արևելյան կեսը, որտեղ բացված է ուղղանկյուն փոքր երկու խորշ: Խորանի մեջ գտնվում է տեղահանված գեղազարդ մի խաչքար:

Վերեզմանոց. տարածվում է Տումիի հարավային կողմում՝ *Եղու խութ* տեղամասում՝ Կարմիր վանքի



Եկեղեցին հյուսիս-արևելքից, արևելքից և խորանի խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.), գերեզմանոցը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Դամիելյանի, 2020 թ.)

մոտ և զբաղեցնում բավական ընդարձակ տարածք: Պարունակում է միջնադարից ավանդված և արևմտյան ուղղությամբ մինչև գյուղի հայաբափումը կատարված հարյուրավոր թաղումներ: Հնավայրում առկա են սակավաթիվ խաչքարեր և բազմաքանակ տապանաքարեր (սալատապաններ, ուղղանկյունաձև բարձր և նոր շրջանի բազմաձև):

Գերեզմանական հուշարձանների մեջ ճնշող մեծամասնություն են կազմում անարձանագիրները («...վաղեմի հանգստարանիս մէջ կան խիստ հին անփոփեալներ, որոց տապանաքարերն անարձանագիր են ամենամեծ մասամբ»)³⁸, սակայն հիմնականում ԺԷ-ԺԹ դարերին վերաբերող արձանագրվածները լույս են սփռում գյուղի պատմության մութ էջերի վրա:

Հարկ է նշել, որ 1960-ական թթ. տեղում եղել է նաև ԺԷ դարի արձանագիր խաչքար, որը, ցավոք, մեզ չհաջողվեց գտնել 2002 թ.:

Խաչքար. դրված է եղել նոր շրջանի գերեզմանաքարի վրա.
ԹՎ(ին) Ռ-Կ (1611), | տ(է)ր Ոհանէս, | տ(է)ր Մարգ[ար]:
Հրատ. ԴՆՎ V, էջ 173:

Գերեզմանոցում առկա մնացյալ տապանագրերը վերաբերում են ԺԸ-Ի դարերին: Ահա դրանցից մի քանիսը ժամանակագրական կարգով (հրատարակվում են առաջին անգամ).

Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 4 տող.
Այս է տապան Խումարանց տ(է)ր Գրիգորի | ք(ո)ն Պաղրին, որ է որդի Մարդան քովխին, | քվին ՌՄԺԹ (1770) եւ էր ԺԶ (16) տարոյ, որ փոխեցաւ առ ա(ստուա)ծ:

38 **Քարխտաարեանց Մ.**, նույն տեղում:



Տապանաքար, 1770 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2021 թ.)

Տապանաքար. ուղղանկյունաձև (92 x 39 x 16 սմ), հարավային երեսին՝ 4 տող.

Այս է տապան տ(է)ր Սարքիսի, որ է որդի Սելքուն(ի)ն, | որի կողակիցն Բ(է)մին³⁹ էր, քվինն ՌՄԿԷ (1818) էր:

Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային երեսին՝ 4 տող.

Այս է տապան լուսահոգի Օհանէին, | որ է որդի Սարգսին եւ մայր նորա | Քաթանին⁴⁰: ԹՎ(ին) 1846, օվ որ կարթա, | ա(ստուա)ծ ողորմի ասէ, ամէն:

Տապանաքար. ուղղանկյունաձև, մի կողմով խրված հողի մեջ, արձանագրությունը՝ 5 տող.

Գերեզմանատունս ննջում են յայրը | և որդի(ն). յայր՝ տէր Գրիգորը՝ 65 ամաց, | վախճանուած է 1860 թ., | որդին՝ տէր Գրիգորի {ս}սը՝ 35 ամաց, | վախճանուած է 1874 թ.:

Տապանաքար. հարավային և արևելյան միստերին՝ 13 տող.

Տապան | Աղէքսանդր | ավագ քահա/նա Տեր-Հա/կորյանցի, | 56 տարի պաշտոնավարեց, | ...



Տապանաքար, 1874 թ. (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)



Եղցու խութ տեղամասի մատուռի ավերակները (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

վ(ա)խճ(անվեց) 1920, | 92 ամաց: | Հիշատակ իր | փորդի Սե/լիքսեդեկից, | 1924 թ.:

Եղցու խութ վայրում պահպանվել են մաս միջնադարյան մատուռի ավերակներ, որոնց մեջ ընկած է լուսամուտի քանդակագարդ պսակ:

Գերեզմանոցի արևելյան եզրին՝ փոքրիկ պանթեոնում են ամփոփված մաս Արցախյան առաջին գոյամարտում՝ նույն օրը զոհված տումեցի հերոսները (ընդհանուր 26 զոհ):

Հարկ է նշել, որ Կարմիր վանքի մոտ պահպանված չորացած, սակայն կանգուն ծառերը խոտում են Արցախում տարածված ծառերի պաշտամունքի մասին (մեծ մեղք էր համարվում թեկուզ չորացած վիճակում անգամ մեկ ճյուղ կտրելը):

Ի դեպ, սրբացված էին մաս Տումիի արևելյան եզրին գտնվող ծառերի պուրակները, որոնք հայտնի էին Վերին և Ներքին Խաչին արտ անվանումներով: Տարածքում պահպանվում էին պարզ խաչա-



Գերեզմանոցի պանթեոնը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

39 Իգական այս անձնանվան գործածման միակ հիշատակությունը հանդիպում է Վասպուրական աշխարհի Մոկս գավառի Բոլենց գյուղում 1582 թ. ստեղծված Ավետարանի հիշատակարանում (Աճառյան Հր., Անձնանունների բառարան, Խ. Ե, Երևան, 1962, էջ 220):

40 Արցախում տարածված իգական այս անձնանվան վաղագույն գործածումը 1503 թ.-ից է (Աճառյան Հր., նշվ. հատորը, էջ 213):

քանդակներով խաչքարեր և սալատապաններ: Այդտեղ մատաղներ են արվել:

Գյուղամիջյան այլ հուշարձաններ. դրանցից կարելի է առանձնացնել Երկրորդ աշխարհամարտի, Արցախյան առաջին ազատամարտի, 2016 թ.



Ավերակ մատուռի լուսամուտի պսակը և Վերին և Ներքին խաչին արտերի ծառերի պուրակը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)



Չայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը և անվանացանկերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

Աարիլյան քառօրյա պատերազմի ընթացքում զոհված տումեցի քաջորդիների հուշահամալիրը (N 39°35'11.83"; E 46°54'04.38", ծ. մ.՝ 1068 մ), ինչպես նաև Թևան Ստեփանյանի և մայրը Սուրեն Սելբումյանի հիշատակին կանգնեցվածները⁴¹:

Մեծ հայրենականում զոհված տումեցիների հիշատակը հավերժացնող հուշարձան. Երկրորդ աշխարհամարտին Տումիից մասնակցել է 400 հոգի, որոնցից 190-ը զոհվել են: 1967 թ., ի հավերժացումն վերջիններիս, երևանաբնակ տումեցի ճարտարապետ Արմենակ Հակոբյանի հեղինակությամբ կառուցվում է հուշարձան:

1941-1945 || Հայրենական պատերազմում / զոհված տումեցի մարտիկներին / երախտասպարտ համազոտղացիներից:

Հուշարձանի տարածքում՝ զոհված համազոտղացիների անվանացանկ-ցուցանակի մոտ, տեղադրված է նաև Սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարում զոհված տումեցիներ Առաքել Ավետիսյանի, Վահան Եղյանի, Բախչի Ներսիսյանի, Թևան Ղազարյանի հիշատակին կերտված քարե տախտակը:

Արցախյան առաջին ազատամարտում իրենց կյանքը հայրենիքին նվիրաբերած տումեցի ազատամարտիկների հիշատակին կերտված հուշարձան և ցայտաղբյուր. գտնվում են ՀՄՊԶ հուշարձանի մոտ: Բացումը տեղի է ունեցել 2010 թ. հոկ-

41 Նկատի ունենալով, որ աղբյուրների վերահսկողության ներքո անցած բնակավայրերում առաջին հերթին վանդալիզմի զոհ են դառնում արցախցի քաջորդիների հիշատակին կերտված հուշարձանները, վստահ ենք, որ Տումիում դրանք ևս արժանացել են նույն ճակատագրին:



Արցախյան առաջին ազատամարտի և Քառօրյա պատերազմի հերոսներին հավերժացնող հուշարձանները (լուս.՝ Ս. Դանիելյանի և Լ. Գրիգորյանի, 2020 թ.)

տեմբերի 2-ին: Կերտվել է՝ շնորհիվ երախտապարտ տումեցիների, համայնքի ղեկավար Էդիկ Մոսյանի և «Դիզակ» հայրենակցական բարեգործական միության:

Խաչքարի ստորին մասում գետեղված էր հետևյալ հիշատակագրությունը.

Սուրբ խաչս / հավերժ պահապան / տումեցիներին:

Ավագ լեյտենանտ Մաքսիմ Վազիֆի Գրիգորյանի և Քառօրյա պատերազմում հավերժացածների հիշատակին կերտված խաչքար-հուշարձան և ցայտաղբյուր. կանգնեցվել են 2020 թ. գյուղապետարանի մոտ՝ հուշահամալիրի տարածքում:

Խաչքար-հուշարձան. պատվանդանին՝ 3 տող.

Որդու՝ Մաքսիմի եվ / Քառօրյայում անմահացած / հերոսների հիշատակին:

Ցայտաղբյուր. արձանագրությունը՝ 5 կարճ տող.

29, / Մյաթխ:

Մայրը Սուրեն Մելքումյանի (10.10.1979-02.04.2016) հիշատակին կերտված խաչքար-հուշարձան և ցայտաղբյուր (N 39°35'14.21"; E 46°55'20.69", ծ. մ.՝ 900 մ). կանգնեցվել են Սիսեռ աղբյուրի մոտ՝ դեպի Տող տանող ճանապարհին՝ պլաստիգորսկարնակ տումեցի Դավիթ Մարտիրոսյանի և նրա ընկերների աջակցությամբ: Բացումը տեղի է ունեցել 2018 թ. ապրիլի 2-ին:

Գեղազարդ խաչքարի ստորին մասում 4 տողով արձանագրված է.

Մելքումյան / Սուրեն Գրիշայի / 10.X.1979-2016.01.IV: / Պլաստիգորսկի ընկերության կողմից:

Ցայտաղբյուր. արձանագրությունը՝ 1 տող.

Սուրեն:

Թևան Ստեփանյանի կիսանդրի. կանգնեցվել է 2011 թ. գյուղից 1,8 կմ արևելք՝ Սիսեռ աղբյուրի մոտ (N 39°35'07.87"; E 46°55'12.68", ծ. մ.՝ 899 մ)՝ ի հիշատակ 1918-1920 թթ. Հաղթոթի շրջանում հակաթուրքական պայքարի կազմակերպիչներից մեկի՝ ռազմական գործիչ Թևան Աղաջանի Ստեփանյանի (ծն. 1892 – մահվան թվականը՝ անհայտ: Հավանաբար գնդակահարվել է ըստ 1942 թ. սեպտեմբերի 16-ին կայացած դատավճռի)⁴²: Հուշարձանը վանդալիզմի զոհ է դարձել 2021 թ. գարնանը⁴³:

Ի դեպ, 2014 թ. գյուղում բացվել է նաև Թևան Ստեփանյանի տուն-թանգարանը:

Գյուղամերձ հնավայրեր

Գամբարաններ. հայտնաբերվել են գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք տարածվող Հանդեր կոչվող տեղամասում (N 39°35'30.40"; E 46°55'39.42", ծ. մ.՝ 927 մ) 1964 թ.՝ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ: Գ-տաձոներն են՝ կավե փոքրիկ սափորներ, 40 սմ երկարությամբ մետաղե 2 սուր, արծաթե դրամ (դրահմա), մետաղե ապարանջաններ, մատանիներ, կոճակներ, ուլունքներ և այլն: Ի դեպ, դրամը հատվել է Մասանյան Հազկերտ Ա արքայի որդու՝ Վռան Ե-ի (Վահրան Ե, Վարահրան Ե) գահակալության տարիներին (420/421 թթ.-ից առ 439 թ.):

42 Մանրամասն տեսն **Աբրահամյան Հր.**, Թևան, Երևան, 1998: Ի դեպ, նրա մասին պահպանվել են նաև ավանդազրույցներ (**Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 242-243): Նաև՝ <https://www.art-sakhtert.com/arm/index.php/carriage/item/20963-legendy>

43 <https://monumentwatch.org/hy/alerts/>



Թևան Ստեփանյանի հուշարձանը և տուն-բանգարանը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2016 թ.)

Դիմերեսին արքայի պատկերն է, իսկ դարձերեսին՝ կրակի ատրուշանը⁴⁴:


Թագավորի հանգստարան. տեղամասը գտնվում է Տումիից 0,5 կմ հարավ: Պահպանված շինությունների ավերակները, ըստ ամենայնի, պատկանում են ավանդաբար հիշվող Թագավորի պալատին⁴⁵: Տեղում առկա են նաև զարգացած միջնադարին բնորոշ քիվի բեկոր, անարձանագիր խաչագարդ տապանաքարեր և տեղահանված երկու խաչքար: Վերջիններիցս մեկը (56 x 46 x 9 սմ) արձանագիր է և վերաբերում է Ժ-ԺԱ դարերին:



Խաչքար. խաչաքեների միջակայքում՝ 2 տող.

Ա(ստուա)ծածիին:

Հրատ. առաջին անգամ:



Աստվածածնա խաչքարը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2017, 2021 թթ.)

Թագավորի հանգստարան տեղամասը, քիվի բեկորը, անարձանագիր խաչագարդ տապանաքարը և երկու խաչքարերը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2017 թ.)

44 Մանրամասն տե՛ս **Ամիրջանյան Ս.**, Անհայտ դամբարանների գաղտնիքը, «Ավանգարդ» 1964, № 107, 9 սեպտ., էջ 3: Նաև **ճուլյնի՝** Գտիչի վանքը, «Գիտություն և տեխնիկա», 1985, № 2, էջ 41: Գիգակ, Երևան, 2006, էջ 17-20: **Մկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 99: Դրամի ժամանակաշրջանը՝ ըստ դրամագետ Խաչիկ Մուշեղյանի:

45 ԴՀՎ V, էջ 169:

Հնավայրում է գտնվում Թագավորի գերեզման անվամբ հայտնի տապանաքարը, որն ունի «2 մետր 3 սանթիմ երկարություն և 73 սանթիմ լայնություն և 5 գծով նախշեր, սակայն չունի արձանա-



Թագավորի հանգստարան տեղամասից հայտնաբերված քառակող կոթողի բեկորը և տաղավարիկի մանրակերտը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)



Թագավորի հանգստարան տեղամասից հայտնաբերված կոթողանման գտածոները և մոմակալը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)

գրութիւն: Ահա այս է որդոց որդի ասանդաբար մատնանիշ արած թագաւորի գերեզմանն»⁴⁶:

1980-ական թթ. վերջերին գերեզմանոցի տարածքում հայտնաբերվել են մատուռի ավերակներ, խաչքարեր, տաղավարիկի մանրակերտ, ինչպես նաև միակտոր քարից կերտված վաղմիջնադարյան քառակող կոթողի բեկոր⁴⁷, որը հարում է Շիրակի խմբի կոթողներին: Պատկերաշարը բավական հարուստ է և բացառիկ. երեք նիստերը հարդարված են լուսապսակներ ունեցող ուղղահայաց կանգնած մարդկանց պատկերներով: Լուսապսակների առկայությունը, անկասկած, հուշում է, որ սրբեր են քանդակված: Պատկերագրության տեսանկյունից հետաքրքիր է հատկապես հոգևորականը, որը ձախ ձեռքին ունի խաչգավազան և կարծես պարուրված է օձի պատկերով⁴⁸: Ըստ այդմ, ենթադրաբար կարող ենք ասել, որ ներկայացված է Գրիգոր Լուսավորիչը: Հաջորդ նիստի պատկերը փոքր-ինչ թեքված է դեպի ձախ, չնայած որ դեմքը խիստ ուղղահայաց է (դեպի հատվածը մի փոքր վնասված է): Չախ ձեռքին ինչ-որ իր է: Ենթադրաբար կին է: Կոթողի երրորդ նիստի պատկերի աջ ձեռքին հավա-

նաբար գիրք է, թերևս՝ Ավետարան (երևում է ուղղանկյուն ծավալուն հատվածը), իսկ մյուս ձեռքն ուղղված է դեպի ուսի հակառակ կողմը (չի բացատրվում, որ դրված է կրծքավանդակին՝ սրտի հատվածում): Ըստ Չ. Հակոբյանի՝ անճշտությունները պայմանավորված են քանդակների պարզունակ մշակմամբ և համաչափությունների ոչ ճշգրիտ կիրառմամբ:

Ի դեպ, նույն հնավայրից հայտնաբերված փոքրածավալ կոթողանման գտածոները և մոմակալը ևս պահվում էին դպրոցում՝ պատմության կաբինետում:

Բյազին խոթ. Տումիի հյուսիսային եզրի բարձրադիր հատվածում պահպանվում էր գյուղի կալվածատիրոջ՝ արմատներով կուսապատցի, բժիշկ, գյուղատնտես, շուշիաբնակ Աբրահամ բեկ Աթաբեկյանցի⁴⁹ երկհարկ առանձնատունը (N 39°35'32.07"; E 46°54'01.90", ծ. մ.՝ 1172 մ): Բարձրադիր տեղանքն իր անունը ստացել է բեկին պատկանելու հետևանքով:

46 **Բարխատարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 79-80: Ի դեպ, Մակար եպիսկոպոսն այն ենթադրաբար համարում է Գորգուի Գագիկ թագավորի (իշխանի) գերեզմանը:

47 **Ամիրջանյան Ս.**, նշվ. հոդվ., «Գիտություն և տեխնիկա», 1991, № 2, էջ 29: Մինչև 2020 թ. նոյեմբերը գտածոն պահվում էր դպրոցի աշխատանքի ուսուցման կաբինետում:

48 Խորհրդատվության համար խորին երախտագիտություն են հայտնում արվեստագիտության թեկնածու, դոցենտ Զարուհի Հակոբյանին:

49 Աբրահամ բեկը Կուսապատի Հակոբ հարյուրապետի (յուզբաշի) ծոռն էր, հայրը՝ բժիշկ Մովսես բեկը, Շուշիում պետական խորհրդական էր: Եղբայրներն էին Ասլանը, Ալեքսանդրը, Նիկոլայը, քույրը՝ Աննան (Աթաբեկյան տոհմի մասին մանրամասն տես **Մաղաչյան Ա.**, Արցախի մեխիքությունները և մեխիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 112-125): Հայտնի է նաև, որ Մովսես բեկը ԺԹ դարավերջին գյուղը գնել էր Սերգեյ Մելիք-Շահնազարյանից և բնակավայրի կառավարումը հանձնել իր որդիներից նախ Ասլանին, ապա՝ Աբրահամին: Աբրահամ բեկը խորհրդային իշխանություններին կանոնի է հանձնել իր առանձնատունն ու կից այգին, իսկ ինքը փոխադրվել Ստեփանակերտ և աշխատել որպես գյուղատնտես (**Ղազարյան Խ.**, նշվ. աշխ., էջ 33-34, 85):



Աբրահամ բեկ Աբաբեկյանցի տունը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2017 և 2020 թթ.)

Հայտնի է, որ շինարարությունը սկսվել է 1888 թ. և ավարտվել 1905-ին: Կառուցման աշխատանքներին մեծապես աջակցել է տումեցի Աղաջան Գալստյանը մանկահասակ որդու՝ Մարտիրոսի հետ. ավանակով կաղնու գերաններ է բերել, որով ծածկել են երկրորդ հարկի առաստաղը և աստիճանները: Սի քանի օր տևած բացման հանդեսին, բացի գյուղացիներից, մասնակցել են նաև բարձրաստիճան անձինք⁵⁰: Հատկանշական է, որ շուրջ 53 տարի՝ սկսած խորհրդային առաջին տարիներից մինչև 1977 թ., այն ծառայել է որպես դպրոցի շենք:




Գոռոզ բերդ⁵¹. գտնվում է գյուղից 3,6 կմ, իսկ Քթիշ բերդից՝ 7,6 կմ հարավ-արևմուտք՝ համանուն կամ Դլեն քար կոչված սեղանաձև վիմահերձ լեռան՝ արհեստականորեն հարթեցված թեք գառնիվայրի հարավահայաց լանջին. «Բերդասարս իբրև լեռնաբազուկ Դիզափայտի արևմտեան կողմից կախուած է Տումի գիւղի վերայ և առանձնացած ամեն կողմերից»⁵² (N 39°33'58.42"; E 46°51'45.18", ծ. մ.՝ 1990-2000 մ):



Հայտնի է նաև Գոռոզ, Դլեն քար⁵³, Բերդաքար, Դիզափայտ⁵⁴ անվանումներով:

Գոռոզ բերդի տեղորոշման վերաբերյալ առկա են հակասական տեղեկություններ: Ըստ Ս. Երեմյանի՝ գտնվում էր «Քթիշ ամրոցից դեպի արև-



Գոռոզ բերդը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2014, 2016, չափ.՝ Ա. Գալոբյանի 2020 թթ.)

50 Տեղեկությունները փոխանցել է Մարտիրոս Գալստյանի ծուղը՝ Արայիկ Գալստյանը: Ի դեպ, Աբրահամ բեկի օրոք գյուղն ունեցել է բարգավաճ շրջան. գործել են փուռը, հասարակական բաղնիքը, քարամշակման արտադրամասը, իսկ *Կարմիր քար* տեղամասում՝ սեփական փայտամշակման արտադրամասը:

51 Բերդի մասին տե՛ս **Ամիրջանյան Ս.**, Որտեղ է գտնվել Գոռոզ բերդը, «Գիտություն և տեխնիկա», 1986, № 6, էջ 56-58: Նաև **Ույնի՝** Դիզակ, էջ 63-66:

52 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 85:

53 Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 15, կազմ.՝ **Ս. Դազդիյան**, Երևան, 1983, էջ 152 («Բերդ ա, լի Դլեն Քար ընք ասում: Թշնամին ամեն տեղ հաղթել ա, ըտեղ կրեցալ չէ հաղթե») բանասացներ՝ մեծթաղարցի Մեսրոպ Դալլաքյան և Շահեն Խաչատրյան, բանահավաքներ՝ Բարխուտար և Ալվարդ Դազիյաններ):

54 **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:

մուտք»⁵⁵ (Բթիչ բերդից 7,6 կմ հարավ-արևմուտք է), իսկ ըստ Ս. Բարխուդարյանի՝ Հաղրուֆի Մեծ Թաղեր գյուղից 8 կմ հյուսիս-արևմուտք՝ *Շոխտ Պովս-ժառ* հնավայրի տարածքում⁵⁶: Մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, ովքեր բերդը տեղադրում են Տումիի մոտ:

Սատենագիտության մեջ վաղագույն տեղեկությունները վերաբերում են Թ դարին: Առաջինը 830-ական թթ.-ից է, երբ Արաբական խալիֆայության դեմ ապստամբած Բաբելի (մոտ 798/800-837) զորաբանակին դիմագրավում են Գռռոզ բերդում ամրացած հայերը Եսայի Աբու Մուսեի գլխավորությամբ⁵⁷, իսկ մյուսը՝ 853 թ.-ից, երբ Արաբական խալիֆայության թուրք զորավար Բուղայի հրամանով բերդում նահատակվում է Մուկաթլ անվամբ վանանդեցի ազատներից մեկը⁵⁸:

Մակար եպիսկոպոսը բերդն անվանում է Դիզափայտ և հաղորդում հետևյալը. «Պարսպուած է սարիս հարաւային և արևելեան կողմերն և կասկածատուր նեղուղներն ու կիրճերն, ուր եղած են: Մուտքն արևմտեան կողմիցն է և պարիսպն չունի բուրգեր: Պարսպիս ներսում կան բնակութեանց բակեր, թէև հարթ չէ բերդիս անտառապատ մակերևոյթն»⁵⁹:

Տեղանքի՝ բնությունից ընձեռված անմատչելիությունը (բոլոր կողմերից պաշտպանված է բնական ուղղաձիգ ժայռերով) թույլ է տվել բերդաշինարարներին էլ ավելի անառիկ դարձնել այն: Հետևաբար բերդի՝ ընդամենը համեմատաբար մատչելի հատվածները՝ միջնաբերդի հարավային լանջը և հյուսիսարևմտյան կողմը, ամրացվել են կոպտատաշ և անմշակ քարերի, կրաշաղախի համակցությամբ աշտարակավոր պարսպապատերով: Դեպի բերդ միակ մոտեցումը, որտեղից էլ թերևս բացված է եղել դարպասը, հյուսիսարևմտյան անկյունում է՝ լեռնաճյուղի թամբի վրա: Նշյալ հատվածում՝ ավելի վեր բարձրացող նեղ ձգված ժայռի վրա, միջնաբերդն է, որի հարավահայաց թեք լանջերը հարթեցվել են և ամրացվել 2-3 շարք հենապատ-պարիսպներով: Վերոնշյալով ստեղծվել են եռաստիճան սանդղաձև հարթակներ: Միջնաբերդը եզրագծող ժայռերը տեղանքի թեքության պատճառով արևմտյան անկյունում արևելյանից ավելի ցածր են: Բերդի ընդհանուր երկարությունը 260 մ է, լայնությունը՝ 140 մ, իսկ միջնաբերդինը՝ 75 x 35 մ:

Շուրջ 1,1 հա զբաղեցնող տարածքում պահպանվել են ավերակ միջնաբերդը, երկու մեծ և մի քանի փոքր սենյակների մնացորդները, ջրամբարը: Երկարությունը 45 մ է, լայնությունը՝ 10 մ: Խեցեղենի սակավաթիվ բեկորները վերաբերում են զարգա-

ցած միջնադարին: Կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ, սակայն ըստ որմերի շարվածքային և կառուցողական առանձնահատկությունների՝ այն վերաբերում է Է-ԺԳ դարերին:

Ավանդաբար փոխանցվել է, որ ջրի հարցը լուծվել է Գռռոզ բերդից 1 կմ հյուսիս-արևմուտք՝ «...Շոթայալը չըհրսած՝ Դըլեն քարեն պերթան քաշ»⁶⁰ գտնվող Թաղալ աղբյուրի միջոցով (N 39°34'18.14"; E 46°51'05.81"; ծ. մ.՝ 1688 մ). «Մեր պապերը պատմալ ըն, վեր էտ ճուրը վըղէ թունգերաւ դիքյ կըլխըլըր վըղէն տակալը քյիս ա լալ, հըսնէս Դըլեն քարեն պերթը»⁶¹: Մակար եպիսկոպոսն էլ հավելել է. «Ջուր չկայ և այս ամրոցում, վասն որոյ շինուած են յատկապէս հարաւային կողմում հորեր և ամաններով ջուր բերած բերդիս արևմտեան ստորոտում եղած Թաղալ անուն պատուական աղբիւրիցն»⁶²:

Աղբյուրի անվան ծագման վերաբերյալ պահպանվել է նաև ավանդություն⁶³:

Բերդից 500 մ հյուսիս նշմարվում են միջնադարյան *Դլեն քարի տակը* գյուղատեղիի մնացորդները (ընդգրկում է մոտ 1,6 հա տարածք): Հնավայր տանող հիմնական հյուսիսային ճանապարհը ձգվում է մինչև 4 մ խորությամբ և 2 մ լայնությամբ ժայռածերպերի միջև:

Լելեն խութ. Գռռոզ բերդից արևելք՝ Տումիից 2,5 կմ հարավ-արևմուտք՝ բլրի վրա է գտնվում տեղացիների Լելեն խութ անվամբ հայտնի հնավայրը (N 39°34'44.02"; E 46°52'18.20"; ծ. մ.՝ 1722 մ), որի վերաբերյալ որևէ տեղեկություն հայտնի չէ: Պահպանվել են միայն ավերակ մի շինություն, գերեզմանաքարեր և երկանք⁶⁴:

Տումիի տարածքում գոյություն են ունեցել հայաբնակ մի քանի գյուղեր, որոնք ժամանակի ընթացքում ավերվել են և ամայացել, իսկ անուններն էլ մոռացության են մատնվել (օրինակ՝ տեղացիների շրջանում հայտնի են *Արխուն գոմեր*, *Դերուց կյում*, *Կարսիք քար*, *Կուրտուհատ*, *Հարոս*, *Շենաքար*, *Սկրտչին տեփեր* և այլ գյուղատեղիներ): Դրանցից ներկայացնում ենք միայն մեկը:

Վերին Իգյակ (Հայկազն) գյուղատեղի. ավերակները գտնվում են Տումիից 2,5 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղանվան միակ հիշատակությանը հանդիպում ենք Գտիչ վանքի գմբեթավոր եկեղեցու հյուսիսային պատին փորագրված 1246 թ. շինարարական արձանագրության մեջ «Ի Գաքս» ձևով⁶⁵:

Հարկ է նշել, որ 1998 թ. հնավայրում երկրագործական աշխատանքներ կատարելիս տումեցի Միշա Նարինյանը պատահական հայտնաբերել է

55 **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 70:

56 **Բարխուդարյան Ս.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1971, № 1, էջ 57:

57 **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 256:

58 **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 199:

59 **Բարխուդարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 85:

60 **Սարգսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 223 (պատմել է ծակուռեցի մի ծերունի բանասաց 2001 թ.):


61 Նույն տեղում:

62 **Բարխուդարյան Ս.**, նույն տեղում:

63 **Սարգսյան Ա.**, նույն տեղում: Տե՛ս նաև ՀԱԲ 15, էջ 152:

64 **Ամիրջանյան Ս.**, Դիզակ, էջ 66:

65 ԴՀՎ, V, էջ 183: **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 117, ծնթ. 70: **Ամիրջանյան Ս.**, Տումի գյուղի պատմական հուշարձանները, «Գիտություն և տեխնիկա», 1991, № 2, էջ 29:



Խուտըռոռնե վանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002, չափ.՝ Մ. Սարգսյանի, 1980-ական թթ.)

դրամներ, որոնք մեծ արժեք ունեն դրամագիտության և Արցախի պատմության ուսումնասիրության առումով. «Առաջին դրամը Մուզափար աղ-Դին Ուզբեկ իբն Մուսամեդ (1210-1221 թթ.) աթաբեկի դրամն է, որի մի երեսը մաշված է, չի կարդացվում: Երկրորդ երեսին կարդացվում է «Ան Նասը, աթաբեկ...»: Երկրորդ դրամը Իլդիգիզյան Աբու-Բեքրին (1191-1211 թթ.) է: Առաջին երեսին Ջահան Փեհլեվան բարձրագույն աթաբեկ բարձրագույն Աբու-Բեքրն է, երկրորդ երեսին՝ Ան-Նասը աղ-Դին ալլահ ուղղահավատների տիրակալը: Գտնվել է նաև բյուզանդական Ռոմանոս IV (1068-1071 թթ.) կայսեր դրամը, որի առաջին երեսին փորագրված է երեք նկար. կենտրոնում՝ Միքայել VII-ը, ձախից՝ Կոնստանդինը, աջից՝ Անդրոնիկոսը: Երկրորդ երեսին լատինական տառերով փորագրված է կայսեր կնոջ՝ Ռոմանոս Եվդուկիա անունը, եւ երեք նկարներ՝ կենտրոնում՝ Քրիստոսը, ձախից՝ Ռոմանոսը, աջից՝ Եվդուկիոսը: Երրորդ դրամը Իրանի XVII-XVIII դդ. քաղաքային պղնձյա դրամ է, որի երկրորդ երեսին պարզ երևում է եղնիկի նկար: Այս դրամը իր տեսակի մեջ եզակի է և հազվագյուտ Արցախի, Դիզակի տարածքում»⁶⁶:



Խուտըռոռնե վանքի դռները (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2009 թ.)

Ըստ Շահեն Սկրտչյանի՝ Իգյակ գյուղն ավերվել է ԺԵ դարի վերջերին⁶⁷: Ի դեպ, 2005 թ. տողեցի բանասաց Գրետա Ավետիսյանն Իգյակուց կամրջի մասին հյուսված ավանդազրույցում հաղորդում է նաև հետևյալը. «Առաջ Տումա մօտե Իքյակ ընըմավ մին շէն ա լալ: Դուշմըննէն էտ շէնը փուշըցըրաւ ըն, շինացուց քըցաւ ծըըըկէն»⁶⁸:


Խուտըռոռնե վանք. Տումից ուղիղ գծով 1,3 կմ դեպի արևմուտք ավեր վիճակում պահպանվում է բուն անունը մոռացված մի վանք, որը տեղացիները կոչում են Խուտըռոռնե. «...քերծի գլխին՝ ծառերի տակ կայ մի աւերակ մատուռ Օխտը-դընե-խութ ա-

նուն...»⁶⁹ (N 39°35'01.36"; E 46°53'03.86", ծ. մ.՝ 1459 մ): Հայտնի է նաև Յոթորմանի, Ուխտուղընե, Խտուտրուն խութ, Օխտը դընի անվանումներով:

Երբեմնի համալիր հուշարձանախումբը (արտաքին չափերն են՝ 16 x 15 մ) բաղկացած է եղել արևմուտք-արևելք ուղղվածությամբ միջանցքի (6,0 x 3,7 մ) երկարությամբ՝ հյուսիսային և հարավային կողմերում կառուցված միանավ բազիլիկ, առանց լուսամուտների, պայտաձև խորաններով երկու եկեղեցիներից, որոնց առջև՝ արևմուտքում, զույգ գլանաձև սյուների վրա հենված պայտաձև երեք կամարներով բաց նախասրահն է (արտաքին չափերն են՝ 14,7 x 4 մ): Պայմանականորեն հարա-

66 **Ամիրջանյան Ս.**, Սելջուկյան դրամները Դիզակում, «Հայաստանի Հանրապետություն», 1998, № 146, 28 հուլիսի, էջ 5: **Նույնի՝** Դիզակ, էջ 56:
 67 **Սկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 100:
 68 **Սարգսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 204:

69 **Քարխտատրեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 85:



Խուռըռոռնե վանքի մոտ տեղադրված խաչքարը (լուս.՝ Բ. Քորթոշյանի, 2009 թ.), Ստեփանոսեն խութ հնավայրը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.) և Գերգեչի սորբ տեղամասի կաղնին (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)

վային կոչված եկեղեցու (արտաքին չափերն են՝ 10,6 x 5,7 մ) մուտքը հյուսիսից է, իսկ հյուսիսայինը (արտաքին չափերն են՝ 10,5 x 5,3 մ) հարավից: Օգտագործված շինանյութն անմշակ և կոպտատաշ տեղական քարն է կրաշաղախի համակցությամբ: Ըստ կառուցողական առանձնահատկությունների՝ թվագրվում է Ե-Չ դդ.⁷⁰:

Վանքից ոչ հեռու նշմարելի են մատուռի, գերեզմանոցի և այլ շինությունների հետքեր: Առկա է նաև նորագույն շրջանին վերաբերող տուֆակերտ 1 խաչքար, որի ստորին մասում արձանագրված է վանքի անունը.

Ո. Խ. /1999, / Խուռըռոռնե:

Ստեփանոսեն (Ստեփանոցեն) խութ⁷¹. տեղամասը գտնվում է Տումիից 2,5 կմ հյուսիս-արևմուտք, որտեղ տարածվում է միջնադարյան գերեզմանոցը (N 39°36'22.16"; E 46°53'08.91"; ծ. մ.՝ 1117 մ): Պահպանվել են ԺԲ-ԺԳ դդ. բնորոշ զարդաձևերով մշակված գեղաքանդակ խաչքարեր, բեկորներ և անմշակ ու կիսամշակ, խիստ մամուռապատ տապանաքարեր, ինչպես նաև մատուռի հատվածական մնացորդներ:

Գերգեչի սորբ. գյուղից 3,8 կմ արևմուտք՝ Վերին Գերգեչ գյուղատեղիում է գտնվում սրբացված մի կաղնի, որը ևս Արցախում տարածված ծառի պաշտամունքի օրինակներից է (N 39°34'58.92"; E 46°51'25.87", ծ. մ.՝ 1553 մ): Այն տեղի բնակիչների շրջանում հայտնի է Գերգեչի սորբ անվամբ: Տարածքում պահպանվել է խաչագարդ մի քար, իսկ բուն ծառի տակ նշմարվում են ուղղանկյուն հիմքով կառույցի (թերևս մատուռի) հետքեր:

Գյոջին (Գյուրջին) և Նահատակին խաչեր. խաչքարեր են Տումիի տարածքում: Ըստ ավանդության՝ դրանք կանգնեցվել են՝ կապված Վրաստանի



Գյոջին (Գյուրջին) խաչ

թագավորի դուստրերի նահատակության վայրերի հետ⁷²: Նահատակին խաչը գտնվում է գյուղի հյուսիսային եզրին (N 39°35'19.40"; E 46°53'51.89"; ծ. մ.՝ 1158 մ), իսկ Գյոջին խաչը՝ 900 մ հյուսիս-արևմուտք (N 39°35'22.57"; E 46°53'26.15"; ծ. մ.՝ 1330 մ). կանգնեցրել է Շուրա Ավագյանը 2000 թ.:

Ջարվանեսի կամուրջ. միաթռիչք է՝ կառուցված գյուղից 2,8 կմ հյուսիս-արևելք՝ Տումի գետի վրա (N 39°35'14.35"; E 46°55'24.92"; ծ. մ.՝ 783 մ): Խելերը խարսխված են առափնյա զանգվածեղ ժայռաբեկորներից: Կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են ԺԳ դարին: Թռիչքի երկարությունը 5,30 մ է, անցողու լայնությունը՝ 3,01 մ, իսկ բարձրությունը ջրի մակարդակից՝ 6 մ⁷³:


Հայկազն (Երի Իգյակուց) կամուրջ. գտնվում է գյուղից 2,2 կմ հյուսիս-արևմուտք՝ Իգյակ գետի

70 Մանրամասն տե՛ս **Мкртчян III.**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1988, с. 86-87:

71 Հնավայրի մասին տե՛ս նաև **Սկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 101:

72 **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 215 (պատմել է տողեցի Գրետա Ավետիսյանը): Ի դեպ, ավանդաբար փոխանցվել է, որ դուստրերից մեկն էլ նահատակվել է Յոր գյուղի մոտ:

73 **Կարապետյան Ս.**, Արցախի կամուրջները, Երևան, 2009, էջ 52-53:




Ջարվանեսի կամուրջը (լուս. և չափ.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

վրա (N 39°36'04.25"; E 46°53'38.08"; ծ. մ.՝ 899 մ): Միաթիչք է՝ կառուցված անմշակ քարով և կրաշաղախով: Թռիչքի երկարությունը 4,43 մ է, անցուղու լայնությունը՝ 2,56 մ, իսկ բարձրությունը ջրի մակարդակից՝ 4,55 մ: Կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն բնորոշ է ԺԵ-ԺԶ դդ. համանման կառույցներին⁷⁴: Ի դեպ, կամրջի վերաբերյալ պահպանվել է մի ավանդություն, ըստ որի՝ այն կառուցել են իգյակցի քույր և եղբայր⁷⁵:

Ներքի Իգյակուց կամուրջ. գտնվում է գյուղից 1,5 կմ հյուսիս՝ Հայկազն գետի վրա (N 39°36'01.95"; E 46°54'28.16"; ծ. մ.՝ 849 մ): 2002 թ. պահպանվում էին միայն գույգ խելերը: Կամուրջն օգտագործելու նպատակով տունեցիները քանդված թաղը փոխարինել էին գերանակապով: Թռիչքի երկարությունը կազմել է 4,50 մ, անցուղու լայնությունը 2,20 մ է, իսկ բարձրությունը ջրի մակարդակից՝ 3 մ: Կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են ԺԵ-ԺԸ դդ.⁷⁶:

Գյուղամիջում պահպանվում է նաև 1952 թ. կառուցված կամուրջը (N 39°35'12.29"; E 46°54'12.44"; ծ. մ.՝ 1037 մ):

Թագավորի աղբյուր. գտնվում է գյուղի հարավային կողմում՝ Թագավորի պալատի և համանուն հանգստարանի միջակայքում (N 39°34'59.66"; E 46°53'59.39"; ծ. մ.՝ 1066 մ): Աղբյուրաշատ Տունիի



Հայկազն կամուրջը (լուս. և չափ.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)



Ներքի Իգյակուց կամուրջը (լուս. և չափ.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)



Գյուղամիջի՝ 1952 թ. կառուցված կամուրջը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2020 թ.)

74 Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 58-59:
 75 Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 204 (պատմել է բանասաց Գրետա Ավետիսյանը):
 76 Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 83:



Թագավորի և Նաղար աղբյուրները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

սուրբ աղբյուրներից է: 1960-ական թթ. ուներ սրբատաշ ծածկ⁷⁷: Աղբյուրի մոտ առանձին կառուցված է մոմավառության անկյուն:


Նաղար աղբյուր. սուրբ համարվող այս աղբյուրը գյուղի մեջ է (N 39°35'10.17"; E 46°54'12.64"; ծ. մ.՝ 1031 մ): Ժայռից հոսող ջրի ակի վրա տեղադրվել է

մետաղական խողովակ, իսկ առջևում՝ կառուցվել կիսավիմափոր գուռ:

Մխեռ աղբյուր. գտնվում է գյուղից 1,8 կմ արևելք՝ Տոդ տանող ճանապարհի աջ կողմում (N 39°35'07.58"; E 46°55'12.54"; ծ. մ.՝ 900 մ): Այն երկար նով ունեցող սրբացված աղբյուրներից է՝ նորոգված 1967 թ.:

⁷⁷ ԳԷՎ V, էջ 173: Աղբյուրի մասին տե՛ս **Քարխոտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 80: **Սկրաչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 100:

ՀՃՈՒ հիմնադրամիև աարիևեր շարուևակ օժանդակելու համար 2021 թ. շնորհակալագրեր եև հանձնվել



Շերի Ավետյանիև, Լիլի և Արթուր Սերեդյաներիև, Ռոմիկ Մարկեգյանիև, Ցովան Սիմոնեանիև, Դանիել Սահակյանիև, Գևորգ Աղջայանիև

Շնորհակալություն

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը՝ ՀՃՈՒ գրադարանիև արժեքավոր գրքեր նվիրելու համար «Գալուստ Կիլիկիև հիմնարկությունը»՝ 2021-22 թթ. օժանդակության համար

ՀՃՈՒ Հ ՆՈՐ ՀՐԼՏԱՐԼԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը նվիրվում է ՀՃՈՒ կազմակերպության հիմնադիր-նախագահ, հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրության և պահպանության գործի առաջալ. չարտարապետության դոկտոր երջանկահիշատակ Արմեն Հախնազարյանի ծննդյան 80-ամյակիև:
1941 Թհերև - 2009 Ասիևն





ՔԱՂՈՍՏԵ ԳՐԵՆԿՅԱՆ
FOUNDAION

ՏՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ՅՈՒՄԱԿՈՐ
ԳԱՆՈՒՄ
ԿՈՒՆԻՆԿԱՆ
ՅՈՒՄՆԻՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳՐԱՏԱՐԱԿՆԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՐԻ
ԳՈՎԱՆԱԿՈՒՆԵՐ

ՀՀ ԱԳՄ
ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆ,
RAA-USA ՄԱՆԱԹՅՈՐ



ԴԱՅՎԱԿԱՆ
ՏՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՎԱՆԱԿՈՒՆԵՐ
RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2021

ISSN 1829-2003

21002 >



9 771829 200001

